Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10849

[illegible]

[illegible]

491.99-8
4-97

1903թ

29.05.2013

491.99-8
Կ-97

18 NOV 2011

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ ԵՐՐՈՐԴ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ

ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԳՐՔՈՎ

Կազմեցին
ՈՒՍՈՒՑԻՉ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆՑ ԵՒ Լ. ՍԱՐԳՍԵԱՆՑ

2-րդ տպագրութիւն

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ տպարան Ա. Քութաթելաձէի, Նիկ. № 21.
1903

Дозволено цензурою, Тифлисъ, 18 го Апрѣля 1903 г.

35735+

ԿԱԶՄՈՂՆԵՐԻՑ

Մայրենի լեզուի դասագիրքը կարող է ծառայել իր նպատակին այն ժամանակ, երբ նրա մէջ զետեղուած յօդուածները հետաքրքրական են իրանց բովանդակութեամբ և գրուած են կանոնաւոր, սահուն լեզուով, երբ ընթերցանութեան նիւթը մատչելի է մանկական հասակի ըմբռնողութեան համար։ Կազմելով մեր ձեռնարկը այս ուղղութեամբ՝ մենք խոյս ենք տուել ձգձգուած, տաղտկալի հատուածներից և ընտրել ենք մեր ինքնուրոյն ու թարգմանական գրականութիւնից միայն այնպիսի արձակ և ոտանաւոր կտորներ, որոնք, ինչպէս փորձը ցոյց տուեց՝ ուսանելի լինելով հանդերձ՝ դիւրամարս են աշակերտների համար։

Այս դասագիրքը բաժանուած է երկու մասի։ Առաջին մասը պարունակում է իր մէջ դիւրըմբռնելի ոտանաւորներ, առակներ և փոքրիկ պատմուածքներ, մեկնողական ընթերցանութեան և բանաւոր վարժութիւնների համար։ Երկրորդ մասը բաղկացած է աւելի բարդ բանաստեղծութիւններից և պատմական-նկարագրական հատուածներից, որոնք ծանօթացնում են մեր երկրի ու ժողովրդի ներկայի և մասամբ անցեալի հետ։

Ի նկատի ունենալով հայ աշակերտների ուրոյն պայմանները՝ աւելորդ չհամարեցինք կցել ձեռնարկիս և համառօտ բառգիրք. կարծում ենք, որ այդ ևս կը թեթևացնէ այնքան ծանրաբեռնուած մեր օտարախօս աշակերտների աշխատանքը։

Լոյս ընծայելով «Մայրենի խօսքը»՝ մենք կը ցանկայինք, որ նա լինէր ոչ միայն դպրոցական ձեռնարկ, այլ և ընթերցանութեան սիրելի գիրք հայ մանուկների համար։ Գուցէ այս մեր հրատարակութիւնը օգտակար լինի և այն չափահասներին, որոնք նոր սկսում են ծանօթանալ հայոց լեզուին։

Երկրորդ հրատարակութեան մէջ բաւական շատ փոփոխութիւններ են մտցրուած, լրացրուած է և համառօտ բառգիրքը։

1903 Թ., Ապրիլ 2-ին։

Ա. ՄԱՍՆ

(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

Ա. ՄԱՍՆ

(3-րդ տարի)

1.

ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԷՃԸ

Մի օր մարդու անդամներն, իրար ծառայելուց ձանձրանալով՝ չուզեցին այլ ևս կատարել իրանց պաշտօնը:

Ոտներն ասացին.—«Ինչու միայն մենք պիտի կրենք ուրիշների բեռը. գտէք ձեզ համար ոտներ, եթէ քայլել կամենում էք»:

Ձեռներն ասացին.—«Ինչու ուրիշների համար միայն մենք աշխատենք. եթէ ձեզ ձեռք է հարկաւոր, շինեցէք ձեզ համար ուրիշ ձեռներ»:

Բերանը մրմռաց.—«Իրաւ, ես շատ խենթ եմ եղել, որ ստամոքսի համար սնունդ եմ ծամում, ինչ է՝ որ նա մարսէ նրան՝ պարոնի նման ձգուած. Թող ինքն իրան բերան գտնէ»:

Աչքերն էլ չուզեցին ամբողջ մարմնի վրայ հսկել: Միւս անդամներն էլ այսպէս խօսեցին և այլ ևս իրանց պաշտօնը չկատարեցին:

Ի՞նչ եղաւ հետևանքը:

Ամբողջ մարմինը հետզհետէ սկսեց տկարանալ, մաշուել: Անդամները, տեսնելով որ իրանց կորուստը մօտ է՝ ճանաչեցին յանցանքը և սկսեցին առաջուայ պէս իրար ծառայել:

Եզոպոս

2.

ՊԱՊԸ ԵՒ ԹՈՌՆԻԿԸ

Պապը սաստիկ ծերացել էր։ Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին. նրա ձեռներն ու ոտները ծերութիւնից դողդողում էին, այնպէս որ գդալը բերան տանելիս՝ կերակուրը կաթկըթեցնում էր։

Դուր չէր գալիս այս բանը նրա որդուն և հարսին։ Նրանք ծերին իրանց հետ միևնոյն սեղանը չէին նստեցնում, այլ վառարանի յետևը, մի անկիւնում կաւէ ամանով էին հաց տալիս ուտելու. խեղճ ծերուկի աչքերը լցւում էին արտասուքով. նա տխուր ու տրտում նայում էր այն կողմը, ուր փռած էր լինում հացի սեղանը։

Մի անգամ, հաց ուտելիս՝ ծերի ձեռները դողդողացին, ամանը վայր ընկաւ, կոտրուեց։ Աւելի ևս բարկացան հարսն ու որդին. նրանք գնեցին մի փայտէ պնակ և այնուհետև դրանով էին կերակուր տալիս իրանց հօրը։

Ծերուկը մի չորս տարեկան թոռնիկ ունէր։ Մի անգամ մանկիկը, յատակի վրայ նստած՝ տաշեղներից մի ինչ-որ բան էր շինում։

—Ի՞նչ ես անում, որդի,—հարցրեց նրան մայրը։

—Փոքրիկ աման եմ շինում,—պատասխանեց երեխան,—որ երբ հայրիկս ու մայրիկս ծերանան՝ նրանով կերակուր տամ նրանց։

Հայրն ու մայրը իրար նայեցին և ամօթից կարմրեցին։ Այնուհետև նրանք սկսեցին ծերին իրանց հետ նստեցնել. երբէք նրա հետ կոպիտ չէին վարւում, միշտ պատւով էին պահում նրան։

Գրիմ

3.

ԷՇԸ ԱՌԻՒԾԻ ՄՈՐԹՈՎ

Էշը ձանձրացել էր աշխատելուց։ Նա փախաւ իր տիրոջից և ճանապարհին գտաւ առիւծի մորթի։ «Օ՛, սա ինձ պէտք կը գայ», ասաց էշը։ Փաթաթուեց առիւծի մորթու մէջ և սկսեց ման գալ անտառում, հէնց իմանաս՝ առիւծ լինէր։ Իրաւ, բոլոր գազանները ընդունում էին նրան առիւծի տեղ և ահ ու դողով փախչում էին նրանից։ Գոռոզացաւ էշը. «Արի առիւծի նման մռնչամ».—ասում է նա.—«ամա՛ բոլորը կը փախչեն հա՛, այն ժամանակ ես անտառի միակ տէրը կը լինեմ, ազատ ինձ համար կ'ապրեմ».—և սկսեց էշի պէս զռալ։ Հէնց որ գազանները լսեցին այդ զռոցը՝ իսկոյն հասկացան բանի զօրութիւնը և սկսեցին իրանց ոխը հանել էշից։ Տէրն էլ լսել էր էշի զռոցը. նա գնում է անտառ, մի մեծ մահակ ձեռին, և ծեծ ու դմբոցով տուն է բերում ականջեղ անասունին։

Եզոպոս

4.

ԱՌԻՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Առիւծն իր փառաւոր ճաշը վերջացնելուց յետոյ պառկել էր անտառում խիտ թփերի մէջ։ Այդ միջոցին մի մուկ ծակից դուրս գալով մօտենում է նրան ու կամաց-կամաց սիրտ անելով բարձրանում մէջքին և սկսում ամեն տեղ պըտըտել. մինչև անգամ մտնում է ականջի մէջը։ Առիւծը մի թեթև անհանգստութիւն զգալով, թաթը տանում է դէպի գլուխն ու շօշափելով բռնում այդ չնչին արարածին։

Տեսնելով որ իր վեհանձնութեանը չի սազի, եթէ ամեն ձեռքն ընկած տկար արարածին պատժէ, ազատ արձակում է։

Մի քանի օրից յետոյ առիւծն ընկնում է թակարդի մէջ ու ոտքերի սաստիկ սեղմուելուց այնպէս է գոռում ու մռնչում, որ լողները երկիւղից սարսափում են և ոչ ոք սիրտ չի անում մօտ գնալու։

Առիւծի սոսկալի ձայնը երբ ընկնում է թշուառական մկան ականջը՝ նա մօտ է վազում ու ինչ տեսնի. իր վեհանձն բարերարն արդէն թակարդումն է։ Մտածում է երախտապարտ չմնալ ու մի կերպ օգնել նրան այդ նեղ դրութեան մէջ. ուստի, աննկատելի կերպով սողալով, մտնում է թակարդը սարքած փոսի մէջ և սկսում թակարդի կապկապած բոլոր կաշէ փոկերը կրծելով կտրտել, որով ազատում է կապանքից կենդանիների հպարտ թագաւորին։

Առիւծը տեսնելով մկան արած բարիքն՝ ասում է.— «Ճշմարիտ որ, ամենափոքրիկ արարածներն անգամ իրանց տեղին մեծ են ու անգնահատելի»։

5.

ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Երեք մարդ միասին ճանապարհորդելիս գանձ գտան ու բաժանեցին իրանց մէջ։ Բայց որովհետև նրանց ճանապարհի պաշարը պակասել էր, ուստի իրանցից փոքրիկին ուղարկեցին քաղաք՝ կերակուր բերելու։ Նա գնաց և ճանապարհին այսպէս էր մտածում ինքն իրան. «Ես այժմ հարուստ եմ. բայց աւելի հարուստ կը լինեմ, եթէ ընկերներիս մասն էլ ես վեռ առնեմ։ Եւ այս մի դժուար բան չէ։ Կը թունաւորեմ այն կերակուրը, որ պէտք է գնեմ. իսկ իմ մասին կ'ասեմ որ արդէն ճաշել եմ»։

Իսկ միւս ընկերները այսպէս էին խօսում. «Ինչո՞ւ մենք բաժին տանք այն պատանուն. եթէ նրա բաժինն էլ մենք վեր առնենք՝ աւելի կը հարստանանք։ Ուրեմն, հէնց որ նա գայ՝ իսկոյն սպանենք»։

Պատանին բերեց թունաւորուած կերակուրը։ Ընկերները իսկոյն հանեցին սրերը և սպանեցին նրան։ Իսկ յետոյ կերակուրն ուտելով՝ իրանք էլ մեռան։ Գանձը մնաց անտէր։

Ս. Նազարեանց

6.

ԹՈՒԹԱԿՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Մի թութակ տան մէջ այնքան ճղղաց, շըւշըւաց, որ տանուտէրը տանից դուրս անել տուեց նրան։

Թութակի ինքնասիրութեանը դիպաւ այս բանը, և նա սկսեց գանգատուել սոխակին, որ եկել էր նրան տեսնելու։

—Աչքի լոյս,—ասաց թութակը սոխակին.—ես լսել եմ, որ դու լաւ վարպետ ես երաժշտութեան մէջ. խնդրեմ լսես իմ երգերը և ասես ինձ, թէ ինչ պակասութիւն կայ նրանց մէջ, որ իմ տիրոջը չեն դուր գալիս։ Նա շատ սիրով լսում է արտուտին ու ծիծեռնակին, որոնց երգը մկան ծըւծըւոցի է նման. բայց հէնց որ ես իմ երգում և իմ բոլոր ճարտարութիւնը ցոյց տալիս՝ իսկոյն հրամայում է, որ ինձ հեռացնեն։

—Շատ լաւ,—ասաց սոխակը.—երգիր, տեսնեմ ինչպէս ես երգում։ Ես ուրախութեամբ կը լսեմ քեզ պէս սիրուն թռչունի երգը։

Թութակն սկսեց իր բոլոր ճարտարութիւնը թափել. հաւի պէս կրկըչաց, շան պէս հաչեց, կատուի պէս մլաւեց, մի խօսքով՝ կրկնեց իր բերան արած բոլոր բառերն ու երգերը։

—Այժմ, սիրելիս,—ասաց նա սոխակին,—խնդրեմ ասես, դու լսած կա՞ս մի այսպիսի բան երբևիցէ։

—Սիրուն թութակ,—պատասխանեց սոխակը.—դու ինձ կը ներես, եթէ ես քեզ մի համեստ նկատողութիւն անեմ։ Դու երգում ես ուրիշների նման, ուրիշների ձայնով. ուրիշների երգեր ես երգում։ Եթէ ունենաս քո սեփական երգը՝ էլ քեզ տանից դուրս չեն անի։

Ղ. Աղայեանց

7.

ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՔ

Հայրը պատուիրեց, որ իր որդիքը միմեանց հետ ապրեն համաձայն։ Նրանք չէին կատարում հօր պատուէրը։ Այն ժամանակ հայրը հրամայեց բերել մի ցախաւել և ասաց որդոց.

—Կոտրեցէք այս ցախաւելը։

Նրանք շատ չարչարուեցին, բայց չկարողացան։

Հայրը յետ արաւ ցախաւելը և հրամայեց, որ աւելի ամեն մի ճիպոտը առանձին կոտրեն. Նրանք հեշտութեամբ կոտրտեցին ճիպոտները։

Հայրն ասաց.

—Այդպէս և դուք, եթէ ապրէք համաձայնութեան մէջ՝ ոչ ոք ձեզ չի յաղթի. իսկ եթէ իրար հետ կռուէք և միմեանց հակառակ լինէք՝ ձեզ ամեն մարդ հեշտութեամբ ջոկ-ջոկ կ՚ոչնչացնէ։

Լ. Տօլստոյ

8.

ՀԻՆ ԶՐՈՅՑ

Շատ հին ժամանակ մի թագաւոր կար՝
Զօրեղ, իմաստուն և շատ էլ արդար.
Դա որ ծերացաւ, մօտեցաւ մահուան,
Չը գիտէր թէ ո՛վ կ՚յաջորդէ իրան։
Թէպէտ նա ունէր տասներկու որդի,
Բայց չէր իմանում, թէ ո՛րին ընտրի.—
Մեծը ուժով էր, բայց անգութ ու չար,
Նորանից փոքրը թոյլ ու ցաւագար։
Երրորդը անհոգ ու խելքից պակաս,
Չորրորդը անմիտ, թէև անվնաս։
Այսպէս ոչ մէկը իր սրտովը չէր,
Ո՛չ մէկն իր հոգին, իր խելքը չունէր։
Միայն մի քիչ յոյս փոքրիկն էր տալիս,
Նա էլ հօրը մօտ շատ չէր գնում գալիս.
Այդ պատճառով էլ հայրը չը գիտէր,
Թէ արդեօք նա ինչ շնորհքի տէր էր։

Վերջապէս մի օր՝ տես ինչ հնարեց…
Իր հաւատարիմ ծառային կանչեց,
Թէ՝ «Գնա մի լաւ ցախաւել քաղիր,
Երեք չորս տեղից պինդ ուռով կապիր»։
Երբ որ ասածը ծառան կատարեց,
Բերեց ցախաւելն առջևն դրեց.
Նա կանչեց իր մօտ բոլոր որդոցը
Եւ առաջարկեց հնարած գործը։
«Սիրելիք, ասեց, ես ձեզ կանչել եմ,
Որ վերջին կամքը, ամենքիդ յայտնեմ.—

Ի՛նչպէս տեսնում էք, ես ծերացել եմ,
Եւ բաւական է, որքան ապրել եմ։
Շուտով իմ նախնեաց ճամբովը կ'երթամ
Նրանց պէս ես էլ սև հող կը դառնամ.
Բայց քանի ողջ եմ, շունչս բերանումըս,
Կ'ուզեմ ձեզ յայտնել՝ ինչ կայ մտքումըս։
Ահա ձեր առջև մի նոր ցախաւել,
Որ ես հէնց այսօր կապել եմ տըւել.
Ո՛վ որ ձեզանից կը կոտրէ սըրան,
Իմ թագն ու գահը ես նըրան կը տամ»,

«Հա՛յր, ես կը կոտրեմ», ասեց մեծ որդին,
Եւ վստահութեամբ մօտեցաւ աւլին.
Վերցրեց աւելը և ծունկը կալաւ.
Քաշեց, քաշքըշեց, ոչինչ չը եղաւ։
Ձա՛ռ քըրտինք թափեց, շատ չարչարուեցաւ,
Դեղնեց, սըփըրթնեց և յետ քաշուեցաւ։
Յետոյ երկրորդը եկաւ վեր առաւ,
Նա էլ իր եղբօր դառն օրին հասաւ։
Երրորդն էլ եկաւ իր ուժը փորձեց,
Բաւական տանջանք չորրորդն էլ կըրեց.
Միւսներն էլ իրանց բաղդը փորձեցին,
Բայց ցախաւելը չի էլ ծըռեցին,

Ամենից վերջը փոքրը մօտեցաւ,
Եւ իր հօր առջև տես ինչ խօսեցաւ.
«Հա՛յր, ես չեմ ուզում իմ ուժը փորձել,
Իմ եղբարց նըման իզուր չարչարուել»...
Եւ այս ասելով՝ նա վեր է առնում
Աւելի կապերը քանդում, արձակում.
Ձըկուն ճըղները մէկ մէկ վերցընում,
Ամենի առջև կոտրատում ջարդում։

«Ապրես, իմ որդի, ասում է հայրը,
Քեզ արժանի է իմ թագն ու գահը»։
Գըրկում է որդուն, ճակատն պաչում
Եւ թագն իր ձեռքով գըլխին է դընում։
«Տեսէ՛ք, ասում է միւս եղբայրներին,
Դուք չը նախանձէք ձեր եղբօր փառքին.
Եթէ սըրա հետ սերտ սիրով մընաք,
Աւելի մեծ ուժ և փառք կը ստանաք.
Իսկ եթէ զատուիք և ջոկ ջոկ լինէք
Քանդուած աւլի պէս շուտ կը կոտրատուէք»։

Ղ. Աղայեանց

9.

ԵՐԿՈՒ ԽՈՓ

Երկաթավաճառը երկու հատ խոփ ունէր, երկուսն էլ մի մեծութեան և մի վարպետի ձեռքով շինուած։

Մի երկրագործ դրանցից մինը գնեց և գործ ածեց, իսկ միւսը երկար ժամանակ մնաց խանութում ընկած։

Պատահեց որ մի քանի ժամանակից յետոյ այդ երկու ընկեր խոփերը հանդիպեցին իրար։

Գործածուած խոփը արծաթի պէս պսպղում էր, և աւելի էր գեղեցկացել, քան թէ նոր շինած ժամանակն էր, իսկ խանութում անգործ մնացածը ժանգոտուել ու սևացել էր։

—Այդ ինչի՞ցն է, որ դու այդքան գեղեցկացել ես,— հարցրեց սևացած խոփը իր ընկերին։

Աշխատելուցն է, բարեկամ, աշխատութիւնն է ինձ գեղեցկացրել, պատասխանեց ընկերը։

—Ա՜խ, ինչքա՜ն բախտաւոր ես դու, որ ընկար երկրագործի ձեռքը։ Ես այստեղ մնացել եմ բանտարկուած, և ինչպէս տեսնում ես, անգործութիւնից ժանգոտել ու սևացել եմ։

10.

ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Երկու ճանապարհորդ միասին գնալիս իջևանեցին մէկ հիւրանոցում։ Գիշերը նրանց զարթեցրեց մի աղմուկ. տեղեկացան որ գիւղումը հրդեհ է պատահել։ Ճանապարհորդներից մինը սկսեց շտապով հագնուել, որ գնայ օգնելու, միւսը յետ էր պահում նրան ասելով. «Գնանք մեր ճանապարհը, այստեղ առանց մեզ էլ մարդ շատ կայ»։ Իսկ ընկերը չլսեց նրան և վազեց դէպի այրուող տունը։ Տան առաջ, որ չորս կողմից արդէն կպած էր բոցերով, կանգնած էր մէկ կին և աղաղակում էր. «Ո՜հ, երեխայքս, երեխայքս»։ Այս սրտակտուր ձայնը լսելով՝ օտարականը ներս վազեց կրակի մէջ, չնայելով բորբոքուած բոցերին ու փլուող գերաններին։ «Նա կորաւ, այո, նա կորաւ», գոչում էին շատերը. բայց մի րոպէից յետոյ օտարականը դուրս երևաց կրակի միջից խանձած մազերով ու շորերով, նա ձեռքումն ունէր երկու փոքրիկ երեխաներ, որոնց նա տուեց հեկեկող մօրը. Թշուառ կինը առաջ գրկեց իւր զաւակներին, կարծես չհաւատալով, թէ նրանք կենդանի չ՚են, իսկ յետոյ ընկաւ օտարականի ոտներն։ Այդ իսկ րոպէին փուլ եկաւ այրուող տունը։

11.

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ԱՐՋԸ

Երկու բարեկամ գնացին անտառ, որ իրանց համար որս անեն այնտեղ։ Յանկարծ անտառից մի արջ դուրս պրծաւ և կատաղութեամբ նրանց վրայ վազեց։ Նրանցից մէկը, տեսնելով արջին՝ շտապով ծառը բարձրացաւ, իսկ միւսը, յիշելով, որ արջը մեռելներին չի դիպչում, գետնի վրայ ընկաւ, շունչն իրան քաշեց և անշարժ մնաց, որ արջը կարծէ, թէ նա մեռած է։

Արջը մրթմրթալով մօտեցաւ նրան, ականջը կամացուկ դէմ արեց բերնին, դէս-դէն հոտոտեց և, մեռած կարծելով նրան՝ հեռացաւ։

35735

Անցաւ վտանգը։ Ծառի վրայ նստած ընկերը վայր իջաւ և հարցրեց. «Բարեկամ, արջը ինչ ասաց ականջիդ»։

Ընկերը պատասխանեց. «Արջը խրատեց ինձ, որ ես քեզ պէս մարդու հետ էլ տեղ դուրս չգամ, որ մի փորձանք պատահելիս չթողնես ինձ մենակ և ինքդ փախչես»։

Ճշմարիտ բարեկամը նեղութեան ժամանակն է իմացւում։

Խ. Աբովեանց

12.

ՍՈՂՈՄՈՆԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Հրէաների Սողոմոն թագաւորը շատ հանճարեղ մարդ էր։ Նրա իմաստութիւնը աշխարհքին յայտնի եղաւ հէնց նրա թագաւորութեան առաջին օրերում։

Մէկ օր թագաւորի մօտ եկան գանգատելու երկու կին։ Նրանցից մէկն ասում է.

Գրադարան

—Ո՜հ, տէր իմ, ես ու այս կինը բնակւում ենք մի տան մէջ։ Աստուած ինձ մի որդի տուեց. երեք օրից յետոյ սա էլ ունեցաւ մի որդի։ Մեր տանը մեզնից աւել ոչ ոք չէ բնակւում. մենք մենակ ենք։ Պատահմամբ այս կինը գիշերով ընկնում է իր երեխայի վրայ և ինքը չիմանալով այդ՝ երեխան խեղդւում մեռնում է։ Կէս գիշերին սա վեր է կենում, իմ երեխաս գրկիցս առնում է և իր խեղդուած որդին իմ ծոցն է դնում։ Առաւօտը զարթնում եմ երեխայիս ծիծ տալու, տեսնում եմ որ մեռած է երեխաս։ Իսկ ցերեկը ուշադրութեամբ քննելով տեսնում եմ, որ իմ որդին չէ։

—Այդպէս չէ՛, ասում է միւս կինը. կենդանին իմ տղան է, մեռածն է քոնը։

—Ո՛չ, մեռածը քո՛ տղան է, իսկ կենդանին իմը, պատասխանում է գանգատող կինը։

Թագաւորը տեսնելով որ չկայ մի վկայ, որից կարողանար ճշմարիտն իմանալ, առանց երկար մտածելու հրամայում է սպասաւորներին. «Մի սուր բերէք այստեղ»։ Երբ սուրը բերում են, Սողոմոնը հրամայում է. «Կէս արէք այս կենդանի երեխային. մի կէսը տուէք մէկին, միւս կէսը՝ միւսին»։

Կանանցից մէկն ասում է թագաւորին. «Մի՛ սպանէք»։ Իսկ միւսն ասում է. «Ո՛չ. ո՛չ ինձ լինի, ոչ քեզ, թող կտրեն»։

Թագաւորն ասում է. «Առաջին կնո՛ջը տուէք երեխան, էլ մի կտրէք, որովհետև նա՛ է հարազատ մայրը»։

Աստուածաշունչ

13.

ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՑ Է ՊԷՏՔ

Ֆրանսիայի մի թագաւոր իմացաւ, որ իր իշխաններից մէկը յանդգնել էր ծեծել մի երկրագործի։ Յանցաւոր իշխանին պալատ է հրաւիրում և առանց մի բան ասելու՝ ճաշի է նստեցնում։ Թագաւորը մասնաւոր հրաման է տալիս իր ծառաներին՝ բազմախորտիկ սեղան պատրաստել. ամենապատուական կերակուրներ դրուած էին առատ-առատ, բայց հաց բնաւ չկար։

Իշխանը այս բանի վրայ զարմանում է, չէ կարողանում մեկնել գաղտնիքը։ Նոյն միջոցին թագաւորը ներս մտնելով հարցնում է. «Ի՞նչպէս է, իշխան, կերակուրները լա՞ւ են, հաւանո՞ւմ ես»։

—Սքանչելի՜ է, վեհափառ տէր, շատ պատուական է, շատ համեղ կերակուրներ են. բայց ներեցէք համարձակութեանս, բնաւ չկարողացայ ուտել. ապրելու համար հաց է պէտք, տէր իմ։

—Լաւ,—պատասխանում է թագաւորը՝ դէմքը խոժոռելով.—հասկացի՛ր հիմա քեզ տուած դասս։ Քանի որ ապրելու համար հաց է պէտք՝ ուրեմն իմացի՛ր լաւ վարուել մեզ համար հաց պատրաստող գիւղացիների հետ։

14.

ԵՐԿՈՒ ԳԻՒՂԱՑԻ ԸՆԿԵՐՆԵՐ

Երկու գիւղացի ընկերներ—Թադէոսը և Մարկոսը—միասին ճանապարհ ելան մի օտար քաղաք՝ փող վաստակելու։ Քաղաքը իրանց գիւղից շատ էր հեռու, բայց ճա-

նապարհը կարճ էր երևում, որովհետև նրանք շարունակ քայլում էին և, կարծես, չէին յոգնել։

—Ի՜նչ լաւ բան է մի սիրտ-մի հոգի լինել,—ասաց մէկը միւսին,—առաւօտից մինչև այժմ քայլում ենք և կարծես թէ տանից նոր ենք դուրս եկել։

Կարճ ժամանակից յետոյ նրանք հասնում են մի անծանօթ գիւղ և իջևանում են գիւղապետի տանը։ Գիւղապետը սիրով է ընդունում նրանց և ուզում է իմանալ, թէ իր հիւրերն ինչ տեսակ մարդիկ են։ Նա գաղտնի հարցնում է Թադէոսին. «Ընկերդ ո՞վ է, լա՞ւ մարդ է»։

—Մի հարցնիլ, ասաց Թադէոսը,—էշի մէկն է։

Գիւղապետը, զարմանալով Թադէոսի պատասխանի վրայ՝ հարցնում է և Մարկոսին. «Ո՞վ է բարեկամդ»։

—Մի հարցնիլ, շան մէկն է։

Գիւղապետը պատրաստել տուեց հացի սեղանը, հրաւիրեց հիւրերին և բերեց երկու լիքը պնակ, մինը ոսկորներով դրեց Թադէոսի առաջ, միւսը խոտով՝ Մարկոսի առաջ։

Հիւրերը իրար նայեցին և դարձան գիւղապետին ասացին. «Վայե՞լ է քեզ այսպէս վարուել մեզ հետ»։

—Ես վարուեցի, պատասխանեց գիւղապետը,—համաձայն այն վկայութեան, որ դուք տուիք միմեանց մասին, և ըստ այնմ պատրաստեցի ձեր կերակուրները։

Ինչ կը ցանես, այն կը հնձես։

15.

ՃԱՐՊԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՎԱԽՈՒԹԻՒՆ

Մակեդոնիայի Փիլիպպոս թագաւորին ընծայ էին բերել մի փառաւոր ձի։ Այդ ձին կոչւում էր Ցլագլուխ,

որովհետև գլուխը նման էր ցուլի գլխին։ Շատ վարպետ ձիավարժներ չկարողացան այդ ամեհի, խստերախ ձին սանձել. ուստի Փիլիպպոսը կամենում էր նրան հեռացնել իբրև մնասակար կենդանու։ «Ափսո՜ս,—ասաց նրա գեղահասակ որդին՝ Աղեքսանդրը.—ափսոս, որ իրանց անկարողութեամբ և վախկոտութեամբ այս սքանչելի ձին ձեռքից պիտի հանեն»։ Փիլիպպոսը, որդու անձնապաստանութիւնը ուղղելու համար՝ հրամայեց, որ ինքը հեծնի վրան։ Աղեքսանդրը ուրախութեամբ վազեց գնաց կատաղի ձիու մօտ, շոյեց, փայփայեց նրան, հանգստացրեց, ճարտարութեամբ վրան ցատկեց, մի փոքր ժամանակ քայլեցրեց, յետոյ մտրակեց, սանձարձակ վազեցրեց, յոգնեցրեց։ Յետոյ սանձը դարձրեց, բերաւ հօր առջև հանդարտ-հանդարտ ձիավարեց ու վայր իջաւ։ Փիլիպպոսը զարմացաւ։ «Որդեակ,—ասաց,—քեզ արժանի թագաւորութիւն որոնիր. Մակեդոնիան բաւական չէ», և գրկեց, համբուրեց նրան։ Յետոյ այս ամեհի ձին այնքան ընտելացաւ Աղեքսանդրին, որ նա խոնարհւում էր, մէջքը դէմ էր անում՝ երբ Աղեքսանդրը կամենում էր հեծնել։

Պլուտարքոս

16.

ԳՈՂԱՑՈՒԱԾ ՁԻՆ

Մի գիւղացու ախոռից գողացան նրա ձիերից ամենալաւը։ Մի քանի օրից յետոյ՝ նա գնաց շուկայ մի ուրիշ ձի գնելու դիտաւորութեամբ, բայց մեծ եղաւ զարմանքը՝ երբ նա ճանաչեց ծախու հանուած ձիերի մէջ իր սեփական ձին։

Իսկոյն բռնեց նրա սանձից և պոռաց. «այս ձին իմն է, երեք օր է, որ ինձանից գողացել են»։

«Սխալւում էք, պարոն,—ասաց քաղաքավարի ձեւով այն մարդը, որ ուզում էր ձին ծախել.—մի տարի կայ, որ այս ձին իմն է, ուրեմն ձերը չէ անշուշտ։ Գուցէ նա նմանութիւն ունի ձերինի հետ, բայց այդ նմանութիւնը ոչինչ չէ ապացուցանում»։

Գիւղացին շուտով երկու ձեռքը ձիու աչքերի վրայ դրեց և ասաց. «Ի՞հ, եթէ այսչափ երկար ժամանակից է վեր ձին քոնն է, ասա տեսնեմ, ո՛ր աչքն է կոյր»։

Միւսը, որ ձին գողացել էր և ուշադրութեամբ չէր զննել նրան՝ շուարած մնաց. բայց քանի որ մի բան պէտք էր ասել՝ պատասխանեց. «Ձախ աչքը»։

—Սխա՛լ է,—ասաց գիւղացին։

—Չէ, չէ, ընդմիջեց գողը, սխալուեցի. ուզում էի ասել, թէ աջ աչքն է, որ չէ տեսնում։

Այս միջոցին գիւղացին բացեց ձիու աչքերը և ասաց. «Հիմա հաստատուեց, որ դու ստախօս ես և գող. ձին ո՛չ կոյր է, ոչ էլ մի աչքանի։ Հարցումիս նպատակն էր նենգութեանդ քօղը բանալ և երեան հանել գողութիւնդ»։

Բոլոր ներկայ եղողները սկսեցին ծիծաղել և աղաղակել. «գողը բռնուեց, բռնուեց»։

Գողը ստիպուեց նախ ձին յանձնել իր օրինաւոր տիրոջը, ապա բանտարկուեց և կրեց արժանի պատիժը։

Ս. Նազարեանց

17.

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՕՐԻՆԱԿ

1585 թուականին, Հնդկաստան մեկնող մի նաւ, ալէկոծութեան հանդիպելով՝ խրուեց ցամաքի մէջ։ Նաւագնացները խորտակուած նաւի բեկորներից մի նաւակ

շինեցին և նրանով շարունակեցին իրանց ուղևորութիւնը։ Նաւապետը տեսնելով որ նաւակը շատ է բեռնած՝ յայտնում է, որ եթէ տասներկու հոգի ծովը չձգուեն՝ նաւը բոլոր մարդկանցով ջրի տակը պիտի գնայ։ Վիճակ գցեցին և որոշեցին տասներկու մարդը։ Սրանց մէջ կար մի երիտասարդ, որ նաւակի մէջ ունէր մի կրտսեր եղբայր։ Վերջինս նաւապետի ոտքն է ընկնում և աղաչում, որ եղբօր տեղը իրան նետեն ծովը։ «Եղբայրս ինձանից աւելի քաջ է. նա է պահում հօրս ու մօրս. եթէ նա կորսուի՝ ծնողներս էլ թշուառութեան մէջ պիտի մեռնեն. աղաչում եմ, փրկեցէք եղբօրս կեանքը, որով փրկած կը լինէք և ծնողներիս. ինձ նետեցէք ծովը, ինձ, որ չեմ կարող նրանց օգնել»։

Նաւապետը համաձայնեց և կրտսեր եղբօրը ծովը նետել տուեց։ Երիտասարդը, մօտ վեց ժամ լողալով՝ հետեւեց նաւակին և վերջապէս հասաւ նրան։ Երբ նա փորձում էր նաւակը մտնել՝ նրան սպառնում էին սպանել, բայց նա չէր վհատում, աշխատում էր մօտենալ. Նրան ուզում են թրով խփել, իսկ նա թրի ծայրիցն է բռնում և թոյլ չէ տալիս իրան խփեն, մինչև որ աջողւում է նաւը մտնել։ Նրա դիմացկունութիւնը շարժում է բոլորի սիրտը, և թոյլ են տալիս, որ նա մնայ նաւի մէջ։ Այսպիսով եղբայրասէր տղայն աջողւում է փրկել թէ իր կեանքը և թէ եղբօրը։

18.

ՎԵՀԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Մի շատ հարուստ մարդ, ծերութեան օրերում, ցանկացաւ իր ունեցած կայքը բաժանել իր երեք որդոց մէջ։

Իւրաքանչիւրին իր մասը տալուց յետոյ՝ նա ասաց. «Մնում է էլի մի շատ թանկագին գոհար. ես այն կը տամ ձեզանից նրան, ով մի վեհանձնութիւն կ՛անէ։ Իսկ դրա համար ես ձեզ երեք ամիս ժամանակ եմ տալիս։

Ձուտով որդիքը ցրուեցին. նրանք ման եկան զանազան քաղաքներ և երբ հօր ուզածը կատարեցին՝ կըրկին վերադարձան, տուն եկան։ Նրանք սկսեցին պատմել հօրը իրանց արած վեհանձնութիւնները։

Անդրանիկ որդին ասաց.

—Իմ ճանապարհորդութեան ժամանակ մի օտարական յանձնեց ինձ իր բոլոր հարստութիւնը, և թէպէտ նա ինձանից ոչինչ ստացական չառաւ՝ բայց ես կրկին հաւատարմութեամբ վերադարձրի նրան իր գոյքը։

—Որդեակ, պատասխանեց հայրը, դու արել ես այն՝ ինչ որ պէտք է անէիր, և այն մարդը, որ ուրիշ տեսակ կը վարուէր՝ խաբեբայ կը լինէր, որովհետև ազնիւ լինելը մարդուս համար մի պարտականութիւն է։ Դու արել ես այն, ինչ որ մեզանից ամեն մէկը պէտք է անէ ուրիշներին։ Քո արածի մէջը վեհանձնութիւն չկայ։

Յետոյ խօսեց միջնակ որդին.

—Իմ ճանապարհորդութեան միջոցին մէկ օր ես անց էի կենում մի լճի եզերքով. մի փոքրիկ երեխայ՝ քիչ էր մնացել, ջուրն էր ընկնում։ Ես իսկոյն օգնութեան հասայ նրան և, չխնայելով իմ կեանքը՝ ազատեցի նրան։

—Շնորհաւորում եմ,—ասաց հայրը.—բայց դարձեալ այդ գործի մէջ վեհանձնութիւն չկայ։ Քո արածը կարեկցութիւն է, բարեգործութիւն է, բայց ո՛չ վեհանձնութիւն։

Վերջապէս խօսեց կրտսեր որդին.

—Մէկ օր ես իմ թշնամուն տեսայ խորը քնած մի անդունդի ծայրին։ Ամենաթեթև քամին անգամ կարող էր նրան անդունդը գլորել. բայց ես նրան զարթեցրի մեղմաբար և ազատեցի վտանգից։

—Ո՛հ, որդեակս,—աղաղակեց բարի ծերունին,—գոհարը քո՛նն է։ Ի՛նչ վեհանձնութիւն է՝—լաւութիւն անել թշնամուն, մահից ազատել թշնամուն։

19.

ՄԻ ՀՈԳԻ ԵՐԿՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ

Երուսաղէմ քաղաքի տեղը երբեմն մի մշակուած դաշտ էր, և տաճարի տեղը պատկանում էր երկու եղբօր, որոնցից մէկը ամուսնացած էր, միւսը՝ ամուրի։ Հնձի ժամանակ նրանք իրանց խուրձերը կապեցին և երկու հաւասար դէզ բարձրացնելով՝ թողին դաշտումը։

Գիշերը ամուրի եղբայրը մտածում էր.

—Եղբայրս կնոջ և որդոց տէր է և նրանց պէտք է կերակրէ. ուստի իրաւացի չի լինի, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինին. գնամ իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնի և չի ընդդիմանայ ինձ։—Այս ասելով նա գնաց, իր մտածածը կատարեց։

Նոյն գիշերը միւս եղբայրը արթնանալով՝ իւր կնոջն ասաց.

—Եղբայրս ինձնից փոքր է և, ամուսնացած չլինելով, ոչ ոք չունի, որ իրան օգնէ ու մխիթարէ. ուստի իրաւացի չի լինի, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինին։ Գնամ իմ բաժնից մի քանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնի և չի ընդդիմանայ ինձ։ Այս ասելով՝ նա էլ գնաց իր մտածածը կատարեց։

Հետևեալ առաւօտը եղբայրները դաշտը գնացին և շատ զարմացան. երկու դէզերն էլ հաւասար էին և ան-

փոփոխ։ Նրանցից ոչ մէկը չը կարողացաւ իմանալ այս հրաշքի պատճառը։

Հետևեալ գիշերը դարձեալ նոյնպէս արին... Եւ այսպիսով նրանց դէզերը ոչ պակասում էին, ոչ աւելանում։ Վերջապէս մի գիշեր, այս գաղտնիքն իմանալու համար՝ երկուսն էլ արթուն մնացին և, երբ խուրձերը շալակած տանում էին միմեանց դէզի վրայ դնելու, յանկարծ իրար տեսան։

Այս պատճառով մարդիկ օրհնեցին այս երկու եղբայրների արտը և Աստուծոյ տաճարը շինեցին այնտեղ։

Ս. Նազարեանց

20.

Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ

(ՏՈՒՐԳԵՆԵՎԻՑ)

Որսորդութիւնից վերադառնալիս՝ ես անցնում էի պարտէզների միջով։ Շունս վազում էր իմ առաջից։ Յանկարծ նա իւր քայլերը փոքրացրեց և կամաց ու զգուշութեամբ սկսեց առաջ գնալ, կարծես թէ որսի հոտ էր առել։

Ես նայեցի փոքր ինչ հեռուն, ճանապարհի վրայ, և տեսայ մի փոքրիկ ճնճղուկ, որի կտուցի շուրջը դեռ դեղին էր, իսկ գլուխը աղուամազով ծածկուած։ Նա ցած էր ընկել բնից (քամին սաստիկ շարժում էր ճանապարհի երկու կողմի ծառերը) և անշարժ ընկած էր միայնակ և անօգնական, փռած ունենալով դեռ հազիւ դուրս եկած փոքրիկ թևերը։

Երբ իմ շունը ծանրաքայլ մօտենում էր նրան՝ յանկարծ մօտակայ ծառի վրայից մի պառաւ, սև կուրծքով

ճնճղուկ, քարի պէս նետուելով, "ընկաւ ուղղակի նրա առաջը և յուսահատ ու սաստիկ ճվճվոցով մի-երկու անգամ թռաւ ուղղակի դէպի շան դունչը։ Նա յարձակուեց, որ փրկէ, պահպանէ իւր ձագը։ Բայց նրա փոքրիկ մարմինը դողում էր երկիւղից։ Նրա ձայնը կատաղի էր. նա ուժից ընկնում էր, նա զոհւում էր։ Ի՜նչպիսի ահագին հրէշ պիտի երևար նրան շունը. բայց այնու ամենայնիւ նա չկարողացաւ հանգիստ նստել բարձր ու անվտանգ ճիւղի վրայ. նրա ոյժն աւելի թոյլ լինելով քան կամքը՝ վայր ձգեց իրան այնտեղից։

Շունը կանգ առաւ, յետ քաշուեց... Երևի, նա էլ ճանաչեց այդ ոյժը։

Ես շտապեցի շփոթուած շանս յետ կանչել և հեռացայ՝ զգալով իմ մէջ յարգանք դէպի այդ փոքրիկ թռչունը։

Այո՛, մի՛ ծիծաղէք, ես յարգում էի այն փոքրիկ հերոս թռչունը, նրա սիրոյ ուժգնութիւնը։—Սէրը, մտածում էի ես, մահից ու մահուան երկիւղից աւելի զօրեղ է. միայն սիրով է պահպանւում ու շարժւում կեանքը։

Ա. Ծատուրեանց

21.

ԿԱՏՈՒՆ ՈՒ ԱՌԻՒԾԸ

Առիւծը կատուասեռ կենդանիների դասակարգին պատկանելով՝ մի օր կատուին հանդիպելիս հարցնում է.—«Սիրելի ազգակից, արդեօք ինչն է պատճառը, որ դուք այդքան փոքր էք մնացել»։

Կատուն պատասխանում է.—«Որովհետև մարդի ձեռի տակն ենք ապրում, միակ պատճառն այդ է»։

Առիւծը խնդրում է կատուից, որ մարդ կոչուած արարածին իրան ցոյց տայ։ Երբ միասին մտնում են անտառը, կատուն տեսնում է, որ մի փայտահատ փայտ է կտրում։—«Տէ՛ր իմ, ասում է կատուն, մարդ որ ասում են, ահա այդ փայտ կտրողն է, գնա մօտն ու տես»։

Առիւծը մօտենալով մարդուն՝ բարև է տալիս ու առաջարկում է, որ միմեանց հետ մենամարտեն.—«որովհետև լսել եմ, ասում է, որ դուք մարդիկդ շատ ուժեղ էք. ուրեմն եկէք միմեանց հետ մի փորձ անենք»։

—«Շատ բարի, թագաւոր առիւծ, պատասխանում է մարդը, շատ լաւ էք հրամայում. բայց մի բան կայ, որ մենամարտելու զգեստներս հագիս չեն. եթէ կը հաճէք մի փոքր համբերել, որ գնամ բերեմ, այն ժամանակ ինչու չէ, ուրախութեամբ կը կատարեմ ձեր առաջարկութիւնը...։ Բայց գիտէք ինչ կայ, աւելացնում է, այժմ երդում պիտի տաք, որ այստեղ սպասէք մինչև իմ գալը»։

Այս ասելուց յետոյ, ահագին գերանի հաստ ծայրից չիվի տալով—երկու կանգուն երկարութեամբ ճեղքում է ու առիւծին ասում.—«դէ՛ արի երկու թաթդ այս ճեղքուածի մէջը դիր, որ չգնալուդ համար երդում արած լինիս»։

Առիւծը հաւատալով նրա ասածին, այնպէս էլ անում է։ Մարդն անմիջապէս չիվին դուրս զարկելուն պէս, բացուածքը վրայ գալով այնպէս է սեղմում թաթը, որ այլ ևս առիւծին այդ թակարդից ազատուելու ոչ մի հնար չի մնում։ Յետոյ վեր առնելով մի հաստ փայտ, ընկնում է առիւծի վրայ ու սկսում լաւ ծեծել։

Այդ միջոցին առիւծը տեսնելով, որ կատուն հեռուն կանգնած հանդիսատես է պատահած անցքին՝ ասում է. «Կատու եղբայր, արդեօք ծեծ ուտելով որ քեզ չափ փոքրանամ, մարդը ինձ թող կը տայ»։

«Ո՛չ, պատասխանում է կատուն. քու մորթդ աւելի թանկագին է, երբոր մաշկեց՝ ապա թէ թող կը տայ»։

Այս խօսքն իմանալով՝ առիւծն ասում է.—Իրաւ, մարդի ձեռի տակին ոչ թէ միայն առիւծներն ու միւս կենդանիները, այլ և սարերն էլ կը փոքրանան»։

22.

ԳԱՌՆ ՈՒ ԳԱՅԼԸ

(ԿՌԻԼՈՎԻՑ)

Հընուց մընացած մի լաւ առակ կայ, և շատ ուղիղ է, Աստուած է վըկայ, թէ հըզօրի դէմ, թէև մեղաւոր՝ անզօր արդարն է լինում յանցաւոր։

Այսպէս՝ մէկ անգամ շոգից նեղացած, հօտից մոլորած՝ մի ծարաւ գառնուկ խայտալով վազեց դէպի առուակը, որ քիչ ջուր խըմէ, ծարաւը կոտրէ, փոքր ինչ զովանայ, վազէ տուն գընայ։

Այդ իսկ րոպէին, որտեղից որտեղ, մի գայլ դուրս պըծաւ և կամաց-կամաց, սուս փուս, գողի պէս, շան կերպարանքով, գառին մօտեցաւ։ Ի՞նչ ասել կ'ուզէ, թէ ինչու համար.—քաղցած գազան, փափլիկ գառնուկ.—կ'առնէր կը տանէր և անուշ կանէր։

Բայց մէկէն իմէկ նա այդպէս չարաւ, իսկոյն չըտարաւ։ Չըգիտեմ ո՛րտեղ՝ մեր ծաղկաթաւալն ուսում էր առել, օրէնք սովորել. ուզեց իր գործը խեղճ գառնուկի հետ օրէնքով տեսնել. որպէսզի չասեն, թէ գառն արդար էր, գայլը՝ մեղաւոր։ Բայց ինչ էլ լինէր՝ դարձեալ գազան էր, կոպիտ բաւական. հետք չըկար վըրան ուսման, կըրթութեան, ինչպէս կը տեսնէք նըրա խօսելու վարուելու ձևից։

—Ա՛յ դու անպիտան, կենդանի անբան,—ասում է գառին գայլն ուսումնական.—ինչ իրաւունքով և ո՛ր օրէն-

քով համարձակւում ես իմ մաքուր ջուրըս, պարզ խըմելիքըս քո պիղծ բերանով այսպէս պըղտորել՝ աւազով, ցեխով և հազար տեսակ աղբ ու գիբիլով։ Քո այդ յանդուգըն չարութեան համար գիտե՞ս ինչպիսի պատիժ կայ գըրուած։

—Վըսեմափա՛յլ տէր,—ասում է գառը.—ես գիր չըգիտեմ. բայց թէ թոյլ կը տաս՝ այսքանը կ'ասեմ, որ ջուրը ցածից վերև չի գընայ. դու էլ կ'իմանաս։

—Ի՞նչ ես դուրս տալիս, ես չեմ հասկանում. ջուրը ներքևից վերև չի գընայ. ո՞վ այդ չըգիտէ, էլ ասելդ ի՛նչ է։

—Իմ ասելն այն է, վըսեմափայլ տէր, որ դու վերևից եկար դէպի ինձ։ Այդ էլ որ չասենք՝ հէնց ջըրին նայենք, շատ լաւ կը տեսնենք, թէ ինչքան պարզ է, ինչքան մաքուր է։ Ջուր է, ճշմարիտ, քու բարկութիւնը։

—Տեսէ՛ք, մէկ տեսէ՛ք այս ըստահակին, սըրա աստծին։ Համարձակւո՞ւմ ես, կենդանի անբան, տալ ինձ պատասխան։ Քո խելքով՝ ուրեմն ես սո՞ւտ եմ խօսում, շինո՞ւ եմ հնարում։ Ես լաւ եմ յիշում և չեմ մոռացել, որ մէկել տարին էլի դու էիր, որ յանդըգնեցիր, ինձ ընդդիմացար և հայհոյելով այստեղից փախար, ձեռքիցըս պըրծար։

Ա՜խ, ինչ ես ասում, տէր իմ պատուական, դեռ ես չըկամ ես մէկ տարեկան։

—Ուրեմն եղբայրդ էր. էլ ո՞վ կը լինէր այնքան քեզ նըման, քեզ պէս անպիտան։

—Ողորմած տէր իմ, ես եղբայր չունիմ։

—Ինձ համար մէկ է, ով կ'ուզէ լինի. միթէ դու չունի՞ս քաւոր խընամի։ Մէկ խօսքով՝ նա ձեր յիմար ցեղիցն էր։ Դուք, ձեր շըները, ձեր հովիւները, ինձ չըսիրելով, իմ չարն ուզելով՝ երբոր կարենաք՝ միշտ վընաս կը տաք։ Այդ մեղքի համար ես հիմա գիտեմ, թէ քեզ ինչ կ'անեմ։

—Ա՜խ, Տէր իմ Աստուած,—գառն աղաղակեց.—ինչ

է իմ մեղքըս, սա չըհաստատեց...։ Վըսեմափայլ տէր, ողորմած եղիր. ես ինքս անմեղ եմ...։

—Լըռի՛ր, անպիտա՛ն ոչխարի լակոտ. իմ բան ու գործս խօմ չէ կըտըրուել, որ քո մեղքերըդ ըսկըսեմ քըննել։ Ե՛կ գընանք անտառ, ես այնտեղ կ'անեմ քո դատաստանը։—Ասաց գազանը, և մեր գառնուկին դըրեց շալակին...։

Ղ. Աղայեանց

23.

ՄԱՐԴԸ ԵՒ ՀՐԵՇԸ

(Հէքեաթ)

Ա.

Շատ տարի առաջ, հին ժամանակը,
Երբ հըրաշքներով լի էր աշխարհքը՝
Իւր ամուսինով և զաւակներով
Ապրում էր մի մարդ իւր առւտուրով։
Ուրախ ու զուարթ էր նորա կեանքը,
Պատճառ՝ միշտ ոսկով լի էր քըսակը.
Բայց յանկարծ բախտը երեսը դարձըրեց,
Եւ մեր խեղճ մարդը բոլորը կորցրեց.
Ուրախ կեանք, և փառք, և հարըստութիւն
Եւ նոցա հետ էլ քաղցր առողջութիւն.
Ընկաւ անկողին, խիստ հիւանդացաւ,
Ոյժ ու զօրութիւն նրանից հեռացաւ.
Չէր կարողանում ոտի վրայ կանգնել,
Մինչև որ նորան իւր կինը չօգնէր։
Դըժբախտ տարաբախտ նորա խեղճ կինը
Ստիպուեց կերակրել այժըմ իւր տունը.

Գիշեր ու ցերեկ պէտք է աշխատէր,
Որ իւր որդիքը սովից ազատէր։
Ամիս ամսի վրայ այսպէս անցկացաւ,
Վերջապէս կինը իսպառ ձանձրացաւ։
«Ի՞նչ ես վայր ընկել,—ասում էր մարդուն,—
Գլխիս ցաւ դառել, խլել ես իմ քուն.
Մինչև երբ պէտք է այսպէս չարչարուեմ,
Կեանքըս մաշելով ես քեզ կերակրեմ.
Վեր կաց, մարդ ես, գնա՛, գլուխդ քարին տուր,
Եւ որդոցդ համար ճարէ կերակուր»։
Պատասխան տուեց խեղճ հիւանդ մարդը.
—Բաւական է ինձ իմ դառը վիշտը.
Քանի ունէի, երբ բան խնայեցի,
Առողջ ժամանակ երբ ծոյլ մնացի.
Իսկ այժմ աղքատ եմ և մարմնով տկար.
Խղճա՛, մի՛ տանջիր դու ինձ անդադար։
Բայց կինը երկար էլ չըհամբերեց
Եւ հիւանդ մարդուն տանից դուրս արեց.
«Գնա՛, ուր կ'ուզես, գլխիցս հեռացիր.
Դու իմ խեղճ անձը լաւ չարչարեցիր.
Ինչքան էլ կ'ուզես լաց ու աղաչես՝
Էլ տուն չեմ թողնի՝ քանի աղքատ ես»։
—Լա՛ւ,—ասաց մարդը ձայնով տխրագին,—
Կ'երթամ, կը կորչեմ, ո՛վ դու անգութ կին.
Կըտոր հաց գոնեա տուր հետըս առնեմ,
Որ ճանապարհին քաղցած չըմեռնեմ։

Բ.

Կինը դուրս բերեց, տուեց երկու հաց,
Եւ մեր խեղճ մարդը հեռացաւ գընաց,
Իւր չար բաղդիցը գանգատ անելով,
Թողեց իւր տունը անհաստատ քայլով։
Ինքն էլ չըգիտէր, թէ ո՛ւր է գընում.

Միայն միշտ առաջ քայլում էր տըրտում.
Վերջը գադրելով՝ մի քարի վըրայ
Նըստեց, որ սակաւ մի հանգըստանայ։
Այնտեղ նըկատեց, որ ճանապարհին
Նրանից ոչ հեռու ընկած էր գետնին
Մի մազից հիւսած երկար սև պարան,
Որ նա վեր առաւ ասելով այս բան.
«Սա ինքն ըստ ինքեան մի չընչին բան է,
Բայց խեղճիս համար շատ թանկագին է»։
Այսպէս ասելով՝ պարանն փաթաթեց
Եւ իբրև թանկ բան ծոցումը պահեց։
Յետոյ սակաւ ինչ հացով ու ջըրով
Իւր տըկար մարմնին զօրութիւն տալով՝
Նորից վեր կացաւ, կամացուկ քայլով
Առաջ ընթացաւ նոյն ճանապարհով։
Այդպիսով անցաւ նա բաւական տեղ,
Մինչև որ հասաւ մի աղքատիկ գեղ,
Ուր անցկենալիս՝ տեսաւ շատ հաւեր։
Հաւերից մինը հանդարտ նըստած էր
Կիտած աղբի վրայ ու ձու էր ածում։
Եւ մեր խեղճ մարդը դըրեց իւր մըտքում,
Որ բռնէ նըրան ու հետը տանէ,
Մի քանի շահով քաղաքում ծախէ։
Ահա այս մըտքով նա կամաց-կամաց,
Ձու ածող հաւին ըգգոյշ մօտ գընաց,
Բայց հէնց այն կողմը իւր ձեռքը մեկնեց՝
Վեր թըռաւ հաւը և մէկ ձու թողեց։
Իսկոյն վեր առաւ թողած ձուն մարդը,
Դըրեց գըրպանը օրհնեց իւր բախտը.
—Է՛հ, փա՛ռք Աստուծոյ, ասաց ինքն իրան,
Այս մէկ հաւի ձուն սա էլ է մէկ բան։
Էլի առաջ գնաց մի կարճ ժամանակ,
Վերջապէս տեսաւ մի փոքրիկ գետակ,

Որ դուրս էր բղխում մօտիկ անտառից,
Մերթ հանդարտ գնալով, մերթ փրփրալից։
Յոգնած, վաստակած՝ մեր մեղաւորը
Շատ ուրախացաւ՝ երբ տեսաւ ջուրը.
Իսկոյն մօտ գընաց, որ պարզ ցուրտ ջըրով
Փոքր ինչ հովանայ, մէջ լողանալով։
Ջըրի աւազոտ ափերի վըրայ,
Նստոտած էին մի քանի կըրիայ.
Մօտեցող մարդուն երբ նոքա տեսան՝
Շտապով վազեցին ջուրը թափուեցան։
Միւսների պէս շուտ հասանել ջըրին
Չըյաջողուեցաւ նոցանից մէկին։
Մարդը մօտ գընաց, վեր առաւ նըրան,
Իւր գըրպանի մէջ տուեց բնակարան։
Ինքն էլ լողացաւ, հագաւ շորերը,
Եւ յետոյ գընաց դէպի անտառը,
Որ շատ հեռու չէր, և մի ժամի մէջ
Արդէն գընում էր խիտ անտառի մէջ։

Գ.

Շատ գընաց թէ քիչ՝ վերջապէս նըստեց
Մի աղբիւրի մօտ և շատ մըտածեց,
Թէ ինչպէս անէ, որ իւր խըղճալի
Անբախտ դըրութիւնն ուղղէ մի կերպի։
Յանկարծ դըղըրդաց բոլոր անտառը,
Թընդաց որոտաց հովիտ ու լեառը,
Եւ հանդէպ լեռան սև ու մութ այրից
Դուրս եկաւ մի հրէշ, որ հին դարերից
Բնակւում էր այնտեղ և սպանում, լափում՝
Ով այրի մօտով անցնել չէր վախում...
Ահա այդ հրէշը դուրս եկաւ այրից
Ու խեղճ մարդու վրայ գոռաց հեռուից.

«Բարո՛վ քեզ, բարո՛վ, դու համեղ կըտոր,
Որին կ՚ընդունէ իմ պատուական փոր.
Արդէն կը լինի մի ամբողջ ամիս,
Որ ես չեմ կերել մարդու անոյշ միս»։
—Այդ ինչ խօսքեր են, գարշելի գազան,
Դու յանդըգնո՞ւմ ես ասել ինձ այդ բան.
Ապա այդտեղ կաց, և դու կը տեսնես,
Ո՞ւր կը շըպըրտեմ մարմինդ երկու կէս։
Ասաց ու անվախ մօտ գընաց հրէշին
Եւ խիստ բարկացած նայեց երեսին։
«Ոչ ոք մինչև այժմ,—գոչեց գազանը,—
Չէ համարձակուել ասել այդ բանը
Ինձ, որի ձեռքից դեռ մինչև այսօր
Ազատ չէ մնացել ոչ մէկ մեղաւոր։
Բայց որովհետև մեծ-մեծ բըրդում ես՝
Արի մեր ոյժը փորձենք դու և ես.
Ե՛կ գօտեմարտենք, և ով որ յաղթուի՝
Թող նա յաղթողին կերակուր լինի»։
—Թէպէտ այդ բանում ես քեզ կը յաղթեմ,
Եւ մինչև վիզըդ գետին կը խըրեմ,
Բայց քեզ կարող եմ ես դեռ աւելի
Հասարակ կերպով յաղթել, գարշելի։
«Լա՛ւ, համաձայն եմ, ցոյց տուր շընորհքըդ
Եւ իսկոյն ևեթ կատարէ խօսքըդ»։
—Ի՞նչ ես ըշտապում, ասաց նըրան մարդը.
Երեք բան կ՚անեմ, թէ կ՚անես հատը՝
Ես այն ժամանակ քեզնից յաղթուած եմ,
Իսկ եթէ չանես՝ գլուխըդ կը ջարդեմ.
Մէկ մազ ես հանեմ, մէկը դու հանէ,
Չափենք ու տեսնենք, ո՞ւմ մազն երկայն է,
Եւ ով աւելի երկայն մազ ունի՝
Թող նա մեր մէջը յաղթողը լինի։
Թէ որ կարենաս ինձպէս չոր քարից

Գոյն-գոյն ջուր քամել՝ դու յաղթել ես ինձ։
Եւ ում մարմնի վրայ մեծ միջատ լինի՝
Թող որ նա միւսի գլուխը ջարդի։
«Լաւ», ասաց հրէշը ու մի մազ հանեց
Եւ ուրախ-ուրախ մարդուն դէմ արեց։
—Ա՞յդ է,—ասաց սա,—և հանեց ծոցից
Գրտած պարանը հիւսած սև մազից։
Հրէշն երբ տեսաւ հիւսած պարանը՝
Ահից, զարմանքից բաց մնաց բերանը,
Բայց իսկոյն նեղ նորից սիրտ առաւ
Ու խիստ կատաղած մի քար վեր առաւ
Եւ երկու ձեռքով այնպէս պինդ սեղմեց,
Որ աւազի պէս նրան փշշրտեց։
Մարդն էլ իր կողմից մէկ քար վերցրեց
Ու հրէշից ծածուկ գրպանից հանեց
Հաւից խլած ձուն, և հէնց որ սեղմեց՝
Իսկոյն երկու գոյն հիւթը դուրս ծորեց։
«Այդ երկու փորձով,—կանչեց հրէշը,—
Դու ինձ յաղթեցիր. ցոյց տուր ուրիշը»։
Մարդը դուրս հանեց գրպանից կրիան.
—Ահա միջատըս,—ասաց,—գո՛րշ գազան,
Ցոյց տուր ինձ իսկոյն սրա հատը, տեսնեմ,
Թէ չէ՝ յիմար գլուխդ երկու կէս կ'անեմ...
Ո՞ւր ես փախչում, էյ. չէ՛, կա՛ց, սիրելի,
Կա՛ց, որ ընդունես մահ սարսափելի...
Բայց լաւ իմացիր, ուր կ'ուզէ գնաս՝
Երբէք ինձանից չես մնայ անվնաս։

Դ.

Իրաւ որ հրէշը սաստիկ զարմացած
Մարդու արարքից՝ իսկոյն փախաւ գնաց։
Սա էլ այն կ'ուզէր։ Ուրախ մտաւ այրը,

Անցաւ մի ծայրից մինչև միւս ծայրը.
Տեսաւ լի արկղեր ոսկով, արծաթով,
Գոյն-գոյն ակներով, մարգարիտներով,
Ախոռների մէջ սիրուն ձիաներ
Պատրաստ էին նրա տանել հարուստ բեռ։
Նա էլ ժամանակը զուր չկորցրեց,
Գրտած գանձերը ձիերին բարձեց,
Դուրս եկաւ այրից, փառք տուեց Աստծուն
Եւ պատրաստւում էր դառնալ դէպի տուն,
Երբ յանկարծ տեսաւ հեռուից հրէշին
Վազելիս դէպ այր, մի աղուէս ուսին։

Ե.

Բայց թող դեռ պատմեմ, թէ ինչպէս եղաւ,
Որ հրէշը յանկարծ կըրկին յետ դառաւ։
Մարդուց փախչելով՝ կարճ միջոցի մէջ
Հասաւ հեւալով մինչ անտառի վերջ,
Ուր մի կաղ աղուէս պատահեց նրան
Ու գլուխ տալով ասաց նա այս բան.
«Բարո՛վ քեզ, բարո՛վ, իշխան ահաւոր,
Դու մեր անտառի հզօր թագաւոր.
Բայց ինչի՞, ասա՛, այդպէս տըրտում ես,
Խնդրում եմ վիշտըդ ծառայիդ յայտնես.
Գուցէ կարող եմ մէկ բանով պէտք գալ
Եւ քո տըրտմութեան շուտով վախճան տալ։
Հրէշը կարճ կերպով, մի քանի խօսքով
Պատմեց աղուէսին, թէ ինչ փորձանքով
Ստիպուած է փախչել, թողնել տուն ու տեղ,
Յաղթուած մի մարդուց իրանից զօրեղ։
«Այդ ինչ եմ լըսում,—կանչեց աղուէսը.—
Թոյլ, անզօր մարդուց ի՞նց պիտ' քեզպէսը
Փախչի, վախենայ, թողնէ տունը, գնայ։

Ասա՛, ինչ կասէ, ով այդ իմանայ։
Հաւատա՛ ինձ, տէր, նա քեզ խաբել է,
Իր հընարքներով աչքըդ կապել է.
Ե՛կ, դու ինձ լըսի՛ր, իսկոյն յետ դարձիր,
Ձեռք ընկած որսը զուր մի՛ կորցրնիր։
Քանի դեռ ուշ չէ՝ շուտ արա՛, գընանք,
Գիտեմ, պատուական ընթրիք կ'ունենանք.
Շատ ցանկանում եմ մարդու միս ուտել,
Պատճառ, այս տըրս մարդիկ են կոտրել»։
Աղուէսի խօսքերն հըէշը լըսելով՝
Իսկոյն յետ դարձաւ, արագ քայլերով
Վազեց դէպի այր։ Բայց ճանապարհին
Աղուէսն յետ մընաց և խնդրեց հըէշին,
Որ յետ չըթողնէ իր կաղ ծառային,—
Շատ ծանր բեռ չէ,—շալակէ ուսին։
Այդպէս շալակած, ինչպէս փոքր առաջ
Արջէն ասացի, հըրէշը քաջ-քաջ
Եւ արագաքայլ դէպ այրն էր վազում,
Ուր մարդը կանգնած նրան էր սպասում։
Սա մէկ բոպէում իր կըտրուկ խելքով
Արջէն որոշեց, թէ ինչ հընարքով
Այս երկրորդ անգամ ազատուի հըէշից,
Եւ այս պատճառով գոչեց հեռուից.
—Ա՜յ դու խաբեբա՛յ, անպիտան աղուէս,
Այսօր ինձանից անշուշտ մահ կ'առնես.
Հաւանոցումըս քեզ որ բըռնեցի՝
Այն պայմանով միայն կեանքըդ խնայեցի,
Որ դու ինձ համար երկու հըէշ բերես.
Դու էլ խոստացար։ Այժըմ, սևերես,
Այսքան սպասեցի, միայն մէկն ես բերո՜ւմ.
Դա առանց քեզ էլ ինձ էր պատկանում։
Հըրէշն երբ լըսեց մարդու խօսքերը՝
Բի՜զ-բի՜զ կանգնեցան նորա մազերը.

«Խորամանկ աղուէս,—որոտաց,—մեռի՛ր,
Դու միայն ա՛յն մըտքով ինձ այստեղ բերի՛ր,
Որ երկրորդ անգամ սրա ձեռը մատնես,
Որից մէկ անգամ հազիւ պըրծայ ես»։
Ասաց ու բըռնեց աղուէսի ոտից
Եւ սաստիկ ուժով նետեց իրանից,
Իսկ ինքը փախաւ։ Մարդը ազատուեց,
Ծունկ չոգեց իսկոյն, Տիրոջ փառք տըւեց։
Յետոյ վեր կացաւ այնպէս ուրախ-զուարթ,
Կարծես թէ երբէք չէր ցաւել մի մատ.
Բարձած ձիաներն գըտած գանձերով
Իրարու կապեց և ուրախ սըրտով
Հեծաւ ձիու վրայ ու կամաց-կամաց
Առաջ քըշելով՝ դէպի տուն գընաց...

Գ. Բարխուդարեան.

24.

ՈՍԿԻ ՁԿՆԻԿ

(Առակ)

(ՊՈՒՇԿԻՆԻՑ)

1.

Մի ծերուկ ձըկնորս և իր պառաւ կին
Բընակւում էին մեծ ծովի ափին.
Ծերը գընում էր, ձուկ բըռնում ծովից,
Պառաւն էլ տանը թել մանում բըրդից.
Այսպէս միասին՝ մի հին գետնատան
Ճիշտ երեսուներեք տարի ապրեցան։

Ահա մէկ օր էլ ծերը գընաց ծով,
Որ ձուկը որսայ իր մաշուած ցանցով։
Նա ուրախ-ուրախ ցանցը ծով ձըգեց—
Ցանցը այս անգամ միայն տիղմ հանեց,
Երկրորդ անգամը ցանցը ձըգեց ծով—
Ցանցը դուրս եկաւ ծովային խոտով.
Իսկ երրորդ անգամ որ ցանցը ձըգեց,
Ո՞վ կարէ ասել, թէ ինչ դուրս հանեց.—
Նա բերաւ իր հետ մի ոսկի ձըկնիկ,
Ձըկանց արքայի դուստրը գեղեցիկ.
Ծերի ցանցն ընկաւ իբրև խեղճ գերի
Ոսկի աղջիկը ձուկ-թագաւորի։
Խեղճ ոսկի ձըկնիկ, ինչպէս է խընդրում,
Մարդկային լեզուով ծերին աղաչում.
«Թո՛ղ ինձ, թո՛ղ, ծերո՛ւկ, թո՛ղ ինձ անվըտանգ,
Քեզ կը վըճարեմ թանկագին փըրկանք.
Ի՞նչ սիրտըդ ուզէ, ինչ որ կամենաս՝
Ուղիղ եմ ասում, ինձնից կը ստանաս»։
Վախեցաւ ծերը, մընաց զարմացած.
Նա այնքան տարի ձըկնորս էր եղած,
Բայց ձըկան մասին երբէք չէր լըսել,
Թէ նա մարդու պէս կարող է խօսել։
«Գնա՛, Տէր ընդ քեզ,—ասաց ծերունին,—
Ինձ չէ հարկաւոր փըրկանք թանկագին.
Գընա՛ քեզ համար դու ծիրանի ծով
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»։

2.

Այս դէպքից յետոյ ծերը տուն դարձաւ,
Պատմեց պառաւին, թէ ինչ բան տեսաւ։
«Այսօր ես ծովից, գիտե՞ս ինչ, ա՛ կնիկ,
Բըռնեցի յանկարծ մի ոսկի ձըկնիկ.
Ոսկի եմ ասում, և ոչ քո գիտցած.

Այսպիսի հըրաշք ոչով չէ տեսած։
Նա խօսել գիտէր ուղիղ մեր լեզուով,
Աղաչանք արաւ, որ յետ ձըգեմ ծով.
«Թո՛ղ,—ասաց,—խընդրեմ, թող ինձ անվըտանգ,
Քեզ կը վճարեմ թանկագին փըրկանք»։
Բայց ես ոչ մի բան չըպահանջեցի,
«Ոչինչ չեմ ուզում, գընա՛,—ասացի.—
Գընա՛ քեզ համար դու ծիրանի ծով
Ու այնտեղ ապրիր ազատ, ապահով»...
Պառաւը երբ որ այս բանը լըսեց՝
Խեղճ ալևորին շատ յանդիմանեց,
Թէ ինչո՞ւ ձըկնից փըրկանք չէ ուզել,
Ու այնպէս ձըրի յետ ծովն է ձըգել։
«Ա՜յ յիմար անմիտ,—հայհոյեց ծերին,—
Գոնէ կ՚ասէիր դու ոսկի ձըկնին.
«Մի նոր տաշտակ տուր, տանեմ իմ կընկան,
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...
Դարձաւ ծերունին, ծովի ափ գընաց,
(Տեսաւ նա ծովը մեղմիկ ծածանուած).
Ըսկըսեց կանչել ոսկի ձըկնիկին.
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ»,—հարցըրեց։
Ծերը գլուխ տուաւ ու պատասխանեց.
«Ողորմա՛ծ լինիս, թագուհի ձըկնիկ,
Ինձ նախատում է իմ պառաւ կընիկ,
Հանգիստ չէ թողնում խեղճ ալևորիս,
Վըրաս մըրթմըրթում, ուշունց է տալիս.
Մի նոր տաշտակ է հարկաւոր իրան,
Մերը կոտրած է, էլ չէ պէտքական»...
Ոսկի ձըկնիկը ծերունուն խըղճաց.
«Գընա՛, Տէր ընդ քեզ, մի տըխրիր,—ասաց.—
Թող քո պառաւը շատ չընեղանայ.
Այսօր նա մի նոր տաշտակ կ՚ունենայ»...

3.

Յետ դարձաւ ծերը դէպի իր տընակ,
Տեսաւ կընկայ մօտ մի սիրուն տաշտակ·
Բայց կինը գոհ չէր· Նա այս անգամ էլ
Ըսկըսեց ծերին սաստիկ նախատել.
«Գըտնացիր, անխելք, տաշտակ ուզեցիր,
Ի՞նչ շահ դորանից։ Ելի յետ դարձիր
Ոսկի ձըկան մօտ, ա՛յ դու անասուն,
Գլուխ տուր նորան և ուզիր մէկ տուն»...
Ծերունին դարձաւ, ծովի ափ գընաց.
(Այս անգամ տեսաւ ծովը պըղտորուած).
Ըսկըսեց կանչել ոսկի ձըկնիկին.
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ»,—հարցըրեց։
Ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց.
«Ողորմա՛ծ լինիս, Թագուհի ձըկնիկ,
Ինձ շատ նախատեց իմ պառաւ կընիկ.
Խեղճ ալևորիս հանգիստ չէ թողնում,
Հիմա էլ կատղել, մէկ տուն է ուզում»...
Ոսկի ձըկնիկը ծերունուն խըղճաց.
«Գընա՛, Տէր ընդ քեզ, մի՛ տըխրիր,—ասաց.—
Թող լինի այնպէս՝ ինչպէս կամենաք.
Դուք ձեր ցանկացած տունն էլ կ'ունենաք»...
Ծերը յետ դարձաւ կըրկին դէպի տուն.
Էլ նա չըգըտաւ իր հին գետնատուն.
Մի նոր տուն տեսաւ լուսամուտներով,
Կըտուրից հանած ծըխահաններով.
Պատ ու վառարան մաքուր սըւաղած,
Կըրով ու կաւճով սիպտակացըրած,
Վարպետի տաշած կաղնի տախտակից՝
Մեծ դուռն էր կախած լայն բակի կողմից։

Պատուհանի տակ կինն ուռած նըստել,
Իր չարութիւնից ուզում է տըրաքել.
Ի՛նչ անէծք ասես աշխարքիս տակին՝
Բոլորն էլ թափեց խեղճ մարդի գըլխին.
Վերջը, երբ փոքր ինչ բարկութիւնն իջաւ՝
Մըռութը կախած ծերունուն դարձաւ.
«Անշընո՛րհք ծերուկ, տընա՛կ ուզեցիր,
Երևի քո մէջ մեծ բան կարծեցիր.
Յետ դարձիր, անխելք, յետ դարձիր գընա՛,
Ոսկի ձըկնիկին իմ կողմից ասա՛,
Որ էլ չեմ ուզում մընալ գեղջուկ կին,
Ուզում եմ լինել գերագնիւ տիկին»...

4.

Ծերունին դարձեալ ծովի ափ գընաց.
(Այս անգամ տեսաւ ծովը վըրդովուած).
Ըսկըսեց կանչել ոսկի ձըկնիկին.
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ»,—հարցըրեց։
Ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց.
«Ողորմա՛ծ լինիս, Թագուհի ձըկնիկ,
Հանգիստ չէ տալիս ինձ իմ չար կընիկ.
Էլ չէ կամենում մընալ գեղջուկ կին,
Ուզում է լինել գերագնիւ տիկին.
Զըզւեցայ, գլուխն ինչ քամի մըտաւ,
Որ գեղջկութիւնից յանկարծ ձանձրացաւ»...
«Ոսկի ձըկնիկը ծերունուն խըղճաց,
«Գընա՛, Տէր ընդ քեզ, մի տըխրիր,—ասաց.—
Թող քո պառաւը հէնց այսօրուանից
Ազատ համարուի իր գեղջկութիւնից»...
Յետ դարձաւ ծերը, և ինչ է տեսնում.
(Կարծես ցընորք է աչքին երևում).
Պառաւն է կանգնած ինչպէս նոր խանում.

Հագին սամույր բաճկոնակ սիրուն,
Գլխին դիպակէ չարղաթ գոյնըզգոյն,
Վիզը զարդարած մարգարիտներով,
Մատերին մատնիք անգին քարերով.
Մաշիկներն՝ ինչպէս կաս-կարմիր որդան,
Միւս հագուստներն էլ մետաքս պատուական.
Ծառաներ ունի մի քանի տասնեակ,
Բոլորն էլ իրան հըլու հըպատակ։
Մարդին որ տեսաւ՝ պառաւը կատղեց,
Խեղճ ծառաներին ծեծել ըսկըսեց.
(Երևի ուզեց ցոյց տալ իր մարդին,
Որ ինքն այժըմ է գերագնիւ տիկին)։
Հայհոյանք թափեց ամենքի վըրայ,
Տեղի-անտեղի քօթկեց անխընայ,
Մէկի մազերից բըռնեց քաշքըշեց,
Միւսին էլ մի լաւ ապտակներ զարկեց։
Ծերը մօտեցաւ դող-դող քայլերով,
Ասաց պառաւին՝ խոր գըլուխ տալով.
«Բարո՜վ գերագնիւ խանում-խաթունիս,
Հիմա խօմ գո՞հ ես, հանգիստ կը լինիս»...
Պառաւ տիկինը այնպէս բըղաւեց,
Որ խեղճ ծերունու լեղին պատառուեց.
Նորան հրամայեց, որ իսկոյն գընայ,
Գոմն աւլէ, քերէ ու այնտեղ մընայ։

5.

Մէկ երկու շաբաթ հազիւ անց կացաւ՝
Պառաւ խանումը նորից կատղեցաւ.
«Շուտ կ՚անես, կ՚երթաս,—ասում է մարդին,—
Ու իմ կողմանէ կ՚ասես ձըկնիկին,
Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
Ուզում եմ ազատ թագուհի լինել»...

Այս խօսքի վըրայ ծերունին սոսկաց
Եւ աղաչելով պառաւին ասաց.
«Գըժուե՞լ ես, ա՛ կնիկ, ես չեմ հասկանում,
Արդեօք դու գիտե՞ս, ինչ ես ցանկանում.
Մէկ նայի՛ր վըրադ, չէնք ու շընորհքիդ,
Ղըբլըբան լեզուիդ, ծուռումուռ քայլքիդ.
Ախըր ինչ ունիս թագուհու վայել,
Որ խելքիդ այդպէս քամի է փըչել.
Արի, լըսիր ինձ, մի՛ անիր այդպէս,
Ամբողջ աշխարհքին կը ծիծաղացնես»...
Էլ չըհամբերեց մեր պառաւ տատը
Որ վերջացընէր մարդն իր խըրատը.
Նա այնպէս գոռաց, այնպէս որոտաց,
Որ ամբողջ տունը հիմնովին թընդաց.
«Ի՞նչպէս թէ այդպէ՛ս, յանդուգն ըստահակ»,—
Գոչեց ու զարկեց մի ուժգին ապտակ.—
«Համարձակու՞մ ես, գըռեհի՛կ անզէտ,
Վիճել ինձ նըման ազնիւ տիկնոջ հետ.
Քեզ հրամայում եմ պատուաւոր խօսքով,
Որ իսկոյն գընաս քո յօժար կամքով,
Եթէ ոչ՝ ահա ժողովուած կըշտիդ՝
Սոքա կը տանեն խըփելով վըզիդ»։
Ծերունին դարձեալ ծովի ափ գընաց,
(Այս անգամ տեսաւ ծովը սևացած).
Ըսկըսեց կանչել ոսկի ձըկնիկին.
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերո՛ւկ»,—հարցըրեց։
Ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց.
«Ողորմած լինիս, թագուհի ձըկնիկ,
Էլի է կռւում իմ պառաւ կընիկ.
Ների՛ր ինձ, խընդրեմ, ես ամաչում եմ,
Որ չար պառաւիս նոր ուզածն ասեմ,
Բայց ո՛ր ջուրն ընկնեմ, հանգիստ չէ թողնում,

Կըրակն է գըցել, այրում, խորովում.
Գընա՛, ասում է,—ո՛վ նըզովեա՛լ կին—
Ձո՛ւտ գընա, ասա՛ ոսկի ձըկնիկին,
Որ էլ չեմ ուզում տիկնութիւն անել,
Ուզում եմ ազատ Թագուհի լինել»...
Ոսկի ձըկնիկը ծերունուն խըղճաց.
«Գընա՛, Տէր ընդ քեզ, մի՛ տըխրիր,—ասաց.—
Թող քո պառաւի ուզածը լինի,
Թող գընայ դառնայ ազատ Թագուհի»։

6.

Ո՞վ կարէ պատմել, թէ ծերն ինչ տեսաւ,
Երբ ձըկան մօտից տուն վերադարձաւ.
Էլ ինչ տուն, ինչ բան. դու արքայական
Ապարանք ասա, կամ հըսկայական
Մեծ-մեծ պալատներ շարիշար կանգնած,
Բարձըր բուրգերով չորս կողմը պատած.
Ձըքեղ դահլիճներ, անթիւ սենեակներ,
Մարդ կը շըշկըլուէր, եթէ մէջն ընկնէր։
Ծերը բարձրացաւ մարմար սանդուխքով,
Մի դահլիճ մըտաւ խիստ պատկառանքով.
Առջևը բացուեց մի նոր տեսարան,
Երբ այդտեղ գըտաւ իր պառաւ կընկան.—
Նա հիմա ազատ Թագուհի դառած՝
Առօք ու փառօք ճաշի է նըստած.
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր
Ոտի են կանգնած որպէս ծառաներ,
Թագուհու համար գինի են ածում
Եւ ահ ու դողով աչք-ունքին նայում.
Ձեմքում կանգնել են ահեղ զինուորներ,
Ուսերին բռնած կացնաձև սըրեր.
Մենակ պառաւն էր սեղանին բազմել.
Ո՞վ կը յանդըգնէր նորա հետ նըստել.

Բայց կերակուրներն այնքան շատ էին,
Որ հարիւր հոգի կը կըշտացնէին.
Եւ քանի՛ տեսակ անծանօթ բաներ,
Ի՜նչ անուշեղէն, ինչ տապականներ...
Պառաւն ուտում էր մեծ ախորժակով
Ու գինին դարտկում լիքը բաժակով,
Վերջն էլ մեղրահաց կերաւ բաւական,
Որ քաղցըրացընէ իր գուշիկ բերան։
Ծերն այս տեսնելով՝ մընաց շըփոթուած,
Ընկաւ պառաւի ոտքերն ու ասաց.
«Բարո՛վ քեզ, բարո՛վ, ահեղ Թագուհի,
Քո մեծութիւնը յաւիտեան լինի»։
Այս խօսքից յետոյ նա կամաց շշնջեց
Ու փըսփըսալով պառաւին հարցրեց.
«Հիմա որ բախտի վերին ծայրումն ես,
Խօմ բաւակա՛ն ես, ա՛ կնիկ, ինչ կ'ասես»...
Թագուհի դառած պառաւն այս անգամ
Մարդի երեսին չընայեց անգամ.
Հրաման մըրմըռաց նա քըթի տակին,
Որ դուրս վըռընտեն մեր անկոչ հիւրին։
Հէնց որ լըսուեցաւ Թագուհու հրաման՝
Հնազանդ երևալ ամենքն ուզեցան.
Մեծ-մեծ իշխաններ, խաներ ու բէգեր,
Ինչպէս որսորդի արնախում շըներ,
Խըփելով ծերի շըլընքակոթին՝
Ձըքեղ դահլիճից դուրս վըռընտեցին,
Ձեմքումը կանգնած պահապաններն էլ
Իրանց կացիններն էին պատրաստել.
Վըրայ վազեցին ամենքը մէկէն
Ու քիչ մընաց որ խեղճին խողխողեն։
Ինչպէս որ եղաւ՝ մի կերպ դուրս պըրծաւ,
Գուրան էլ ամբոխի ծաղրի տակն ընկաւ,
Որ կարծես նորան լինէր ըսպասում,

Անձրևի տակին, ցեխոտ փողոցում.
—«Ա՜յ թէ լաւ արին, ծերո՛ւկ դու անգէտ,
Ում հետ ես մեկնում անճոռնի ոտներդ.
Թող այդ քեզ համար լինի լաւ խրատ,
Որ էլ չըցանես մանրը կըտաւհատ»...

7.

Այս դէպքից յետոյ շատ օրեր չանցան՝
Պառաւի այծերն էլի մօտ եկան.
Ուղարկում է նա իր իշխաններին,
Որ գըտնեն բերեն արտաքսուած ծերին։
Եկաւ ծերունին։ Պառաւն ըսկըսեց.
«Դու պէտք է գընաս ձկան մօտ,—ասեց.—
Կերթաս, խոր գըլուխ կը տաս դու նորան
Ու իմ փափագըս կը յայտնես իրան.
Կ'ասես՝ չեմ ուզում մընալ թագուհի,
Ուզում եմ լինել ծովի տիրուհի,
Ուզում եմ Ովկեան ծովումը կենալ,
Ոսկի ձըկնիկին ծառայ ունենալ,
Որ իմ հրամանին միշտ պատրաստ լինի
Եւ ինչ ուզենամ՝ իսկոյն կատարի»...
Պառաւին լըսեց ծերը լուռ ու մունջ,
Առանց յայտնելու որևէ տըրտունջ։
(Այս անգամ ծովը խիստ էր փոթորկուած.
Փըրփրած ալիքներ սարեր դառնալով՝
Իրար են զարկւում ահեղ գոռալով)։
Ողբաձայն կանչեց ոսկի ձըկնիկին։
Ձուկը լողալով մօտեցաւ ծերին.
«Ի՞նչ ես կամենում, ծերուկ»,—հարցըրեց։
Ծերը գլուխ տըւաւ ու պատասխանեց.
«Ողորմած լինիս, թագուհի ձըկնիկ,
Իսպառ զըժուել է իմ պառաւ կընիկ.
Ի՞նչ անեմ արդեօք այդ նըզովեալին,

Մինչև երբ տանջուեմ քաւթառի ձեռին.
Էլ չէ կամենում թագուհի լինել,
Այլ տես, անիծածն ինչ է միտք արել.—
Իշխել է ուզում բոլոր ջըրերին
Ու իշխանուհի դառնալ ծովային.
Ուզում է Ովկեան ծովումը կենալ,
Ոսկի ձըկանըդ ծառայ ունենալ,
Որ իր հրամանին միշտ պատրաստ կենաս,
Ու ինչ ուզենայ՝ շուտ կատարում տաս»...
Ոսկի ձըկնիկը լուռ ու մունջ լըսեց,
Բայց էլ ծերունուն չըպատասխանեց.
Ջըրի երեսին շըրըմփաց պոչով
Ու անցաւ-գընաց դէպի խորին ծով...
Շատ մընաց ծերը և շատ նայեցաւ,
Բայց ոսկի ձըկնիկն էլ չերևեցաւ.
Դարձաւ գըլխակոր որ յայտնէ կընկան,
Թէ ինչ փորձանքի մէջ գըցեց իրան...
Եւ գընաց տեսաւ... (բայց ինչ տեսնի, լաւ,
Որ արդար լինի և ոչ անիրաւ).
Հին խուղի շեմքում պառաւը նըստած,
Կոտրած տաշտակը առաջին ընկած...

Ղ. Աղայեանց

25.

ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ԵՒ ԱՌԱԿԱՒՈՐ ԽՕՍՔԵՐ

—

Քանի երկաթը տաք է՝
Կը ծեծեն ու ձև կը տան.

Քանի թոնիրը տաք է՝
Հացն անոր քովին կը տան։

—

Թէ ուրիշին փոս կը փորես՝
Նայէ որ շատ չըխորես,
Որ երբ դու՛ն մէջը գլորուես՝
Ողջ մընաս, ողջ դուրս ելնես։

—

Ի՛նչ կ՚անես՝ արա՛, որդի,
Չար ընկերի հետ մի մընար.
Ի՛նչ կ՚անես՝ արա՛, որդի,
Լաւ ընկերէ յետ մի՛ մընար։

—

Հարցընելով, հարցընելով՝
Նա սար ու ձոր անցեր է.
Սա էլ «ես գիտեմ» ասելով՝
Դաշտին մէջ մոլորել է։

—

Վար ընկնողին ձեռքէն բռնես՝
Աստուած քու ձեռքէդ կը բռնէ.
Վար ընկնողին ոտքով զարնես՝
Աստուած ալ գլուխըդ կը զարնէ։

—

Մի՛ լինիր ուրագի պէս—
Միշտ դէպի քեզ, միշտ դէպի քեզ.
Հապա լեր սըղոցի պէս—
Մէկ դէպի քեզ, մէկ դէպի մեզ։

26.

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարուն է։ Հրաշագործ բնութիւնը վաղուց արդէն զարթել է իր ձմեռնային թմրութիւնից։ Արարատեան նահանգում ամեն ինչ կենդանացել է, կեանք առել. ամեն ինչ ծառ ու տունկ է. կանաչները նոր դուրս եկած՝ ցնծին են տալիս այգիների ափերումը. ուռի ծառերը՝ բաց արած իրանց լեզուիկ տերևները, գարնան մեղմ քամուց խշխշալով՝ իրար են դիպչում, հէնց իմանաս, թէ իրար բարևում են. պտղատու ծառերն իրանց կարգին՝ որը կոկոնել է, կարծես շարած մարգարիտ լինի, որն էլ ծաղկել է եօթանասուն տարեկան ալևորի նման. մանուշակն ու յասմիկը իրանց անուշ հոտերով քաղցր քուն են բերում այգու մէջ զբօսնողին. մանուշակը պըստիկ հարսի կամ համեստ աղջկայ նման գլուխը կախ է գցել, մտել է խոտերի տակը, որ մի՛ գուցէ երևալը հպարտութիւն համարուի. իսկ յասմիկը իր թփի վրայից ճիթ-ճիթ կախ ընկած լցրել է աշխարհքը հոտաւէտ բուրմունքով. վարդն էլ հագել է կանաչ ատլաս շորեր և իւր՝ ոսկէ կոճակի նման կոկոններովն իմաց է տալիս, թէ «ես ուղարկել եմ ինձանից առաջ իմ քոյր մանուշակին, որ ձեզ ուրախացնէ, մինչև որ ես էլ կը գամ իմ մէկէլ ընկեր ծաղիկների հետ»։ Այսպէս ամեն բան մեծ ուրախութիւն էր բերում մարդու վրայ Կարմիր կիւրակի օրուան առաջին շաբաթ օրը։ Սարեակներն էլ՝ ծառի ճղներին կանգնած, կարմիր արեգակի դիմացը, հազար ու մի տեսակ ճլվլացնում էին ու իրանք ածում, իրանք պարում։

Պ. Պռօշեանց

27.

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Մեծ պասը ամբողջ վեց շաբաթ տխուր ու բարկացած մնալուց յետոյ, յանկարծ սկսում է ծիծաղել, խընդալ, ուրախանալ։

Այդ լինում է Ծաղկազարդին։

Ամբողջ տարուայ մէջ եկեղեցին ոչ մէկ անգամ այնպէս լիքը չի լինում, ինչպէս Ծաղկազարդի գիշերը։

Մեծ ու փոքր, ծեր ու մանուկ, մարդ ու կին, նորահարսներ ու նորափեսէք, նշանած ու նշանուելու տղերք ու աղջկերք, հանդերից հաւաքուած տաւարածներ, հովիւներ, խոզարածներ,—մի խօսքով՝ ամենքը, ամենքը Ծաղկազարդի գիշերը ժամումն են լինում։

*
* *

Հէնց որ մտնում ես եկեղեցին, կարծում ես թէ մի հարսնքատուն ես մտել։ Ամենքն էլ իրանց հին ու կեղտոտ հագուստը փոխած, նոր զարդարանքներով զարդարուած, մաքրուած, գեղեցկացած։

Եկեղեցու պատերի, սիւների ջահերի, աշտանակների վրայ էլ տեղ չէ լինում, այնքան մոմեր են լինում վառած։ Բացի դրանցից, ամեն մի հոգի մէկ-երկու վառած մոմ էլ ձեռին է ունենում բռնած։ Նշանած աղջկերանց ձեռքի մոմերը ոսկի վարաղով *) նախշած են լինում։

*
* *

Եկեղեցու մէջ այնպիսի աղմուկ է լինում, որ չի լսւում, թէ տէրտէրն ինչ է ասում, տիրացուն ինչ։

Փոքր երեխաների ճիչն ու աղաղակը, հարսների

*) Ոսկէփոշի, ոսկեջուր, որ քսում են առարկաներին՝ նրանց ոսկեզօծելու համար։

քչփչոցը, տաւարածների քրքըչոցը, ծերերի հազալը, ժամհարի բարկանալը, այդ ամենը իրար խառնուած, եկեղեցին շինում են մի ճշմարիտ որ հարսընքատուն։ Ճռռանն ու ճչանակն էլ միասին հարիւր երեխայի ձեռքում, մի այնպիսի աղմուկ ու աղաղակ են բարձրացնում, որ կարծես եկեղեցու պատերի բոլոր քարերը լեզու առած՝ գոռալիս լինեն։

Ահա ուռի ճղներից մեծ-մեծ խուրձեր կապած՝ դըրած են եկեղեցու մէջտեղը։

Երբոր ժամանակը հասնում է, վրայ են թափւում և կոտրտում։

Պէտք է տեսնել, թէ ինչ ճըրթճըրթոց է բարձրանում, ինչպէս շտապում են ամենքն էլ, որ մի-մի ճիւղն ունենան ձեռներին և նրանով դիմաւորեն Քրիստոսին, ինչպէս որ դիմաւորել են Նրան երուսաղէմացիք արմաւենու և ձիթենու ճղներով։

*
* *

Երբոր ժամասացութիւնը վերջանում է, դեռ լոյսը բացուած չի լինում։ Ամենքն էլ դուրս են գալիս և տուն գնում խումբ-խումբ, ճղները ձեռներին, վրան մոմեր վառռտած։

Այս ու այն կողմ ցրուելով, ամբողջ գիւղը լուսաւորւում է։ Ամեն դռան, ամեն կտրի, ամեն փողոցում լոյս է երևում և ամեն կողմից ուրախութեան ձայներ են լըսւում։

Վերջապէս ամենքն էլ մտնում են իրանց տները, ճղները խրում են պատերի արանքները և սուրբի պէս պահում։ Մոմերն էլ հանգցնում են, որ, երբ, Աստուած մի արասցէ, տան մէջ մի նեղութիւն պատահելու լինի, կամ կարկուտ լինի գալիս՝ վառեն։

Այսպէս ամենքն էլ ուրախ են լինում այդ օրը. ամենքն էլ հաղորդւում են։

Ղ. Աղայեանց

28.

ԹԱԹԱԽՄԱՆ *) ԵՐԵԿՈՅ

Զատիկ է։ Շուշի քաղաքում բոլոր ժողովուրդը ոտքի է կանգնել. տղամարդիկ վաղուց են դուրս եկել՝ տան համար հաւկիթ, իւղ ու բրինձ առնելու. իսկ կանայք տուն ու դուրսը մաքրում են, զարդարում կամ թէ օջախի առաջ կանգնած՝ կարմիր ու դեղին հաւկիթներ ներկում։ Փոքրիկ երեխաները իրանց մօր փէշից բռնած՝ անհամբեր սպասում են հաւկիթի խաշուելուն և վրնգվրնգում են, որ իրանց վէգերն էլ ներկեն։ Իսկ չափահասները այստեղ այնտեղ խմբուած՝ հաւկիթ են խաղում, առնում են հաւկիթները, ատամներին խփում, խնճնճում ու պինդը իմանում և կռուեցնում. չը՛ըթ,—կոտրւում է մէկի հաւկիթը. յաղթողը փառաւորւում է, յաղթուողը հաւկիթից զրկւում և գլուխը կախ անում։

Երեկոյեան չորս ժամն է. զօղանջում են եկեղեցիների զանգակները և ժողովրդին աղօթքի կանչում։ Ահա տներից դուրս են գալիս մարդ ու կին, տղայ ու աղջիկ նոր ու խշխշուն շորերով, զուգուած, զարդարուած, և դէպի եկեղեցի գնում։ Ամենքի դէմքն էլ ուրախ է ու զուարթ, ամենքի բերանին էլ ժպիտ է երևում։

Ահա և Աստուծոյ տաճարը, այն միակ սրբավայրը, որտեղ թէ աղքատն ու հարուստը, թէ մեծն ու փոքրը, թէ ծառան ու աղան հաւասար են։ Ամենքն էլ աղօթում են և իրանց ցաւերին դեղ ու դարման խնդրում։ Խունկի անուշահոտ ծուխը ամպի պէս փռւում է կամարակապ առաստաղի տակ։ Քահանաներն ու դպիրներն անուշ երգերով փառաբանում են Աստուծուն։ Արևի ճառագայթներն ու ջահերի և աշտանակների վառվռուն մոմերը պսպղում են։ Յանկարծ բացւում է վարագոյրը և պատարագիչ քահանան խաղաղութիւն ու սէր է քարոզում. սարկաւագը աւետում է ժողովրդին Քրիստոսի յարութիւնը և մարդկային ազգի փրկութիւնը. ժողովուրդը միաբերան կանչում է. «Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի», և միմեանց ողջունելով՝ այդ աւետիսը հաղորդում է ամենքին։

Ժամերգութիւնը վերջացաւ. փողոցները կրկին լցւում են մեծ ու փոքրով. ամեն մարդ տուն է շտապում. ամենքն էլ գոհ են և ուրախ։

Խոհանոցներից բարձրանում է խորովուն և տապակուած ձկան հոտը. լսւում է փլաւի ճլճլոցն և թշթշոցը, երեխաների ուրախ երգերը, մարդկանց մէկ մէկու տուած աւետիսն ու պատասխանը՝ «Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց»... «Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»»...

Ծերուկ

*) Թաթախման կամ խթման երեկոյ՝ Զատկի և Ծննդեան Ճրագալոյց երեկոյ։

29.

ԴՐՆԴԷԶ

Տեառնընդառաջի նախընթաց երեկոյին գիւղացիք իրենց տների տանիքների վրայ մի քանի փայտ վեղարի ձևով միմեանց դէմ են տալիս և վրան չոր խոտով ծածկում։ Դա կոչւում է «դրնդէզ»։

Այդ օրը եկեղեցիներում ժամերգութիւնը դուրսն են կատարում։ Եկեղեցու գաւթումը մի ահագին դրնդէզ է լինում շինած, շուրջը մի քանի նորափեսայ մի մի մոմ

բռնած բոլորուած են։ Երբ երգում են «Քրիստոս, փառաց թագաւոր»-ը, ամենից առաջ քահանան մօտենում է դրնդէզին ու վառում։ Հուրը բորբոքւում է և ժամաւորների ջերմեռանդութիւնը կրկնապատկւում։

Ժամերգութիւնը աւարտուելուց յետոյ նորափեսաները նոյն մոմերը ձեռքներին՝ առանց հանգցնելու գնում բարձրանում են իրանց տանիքները և երեք ծունր կրրկնելուց և ուխտ մի խնդրուածք անելուց յետոյ վառում են իրանց դրդէզները։

Նորահարսներին առաջուց չարսաւաւորած *) կանգնեցրած են լինում տանիքի վրայ. դրնդէզը կպցնելու պէս ամէն փեսայ բռնում է իր սիրելի հարսի կուռը և երեք անգամ վառուած խարոյկի վրայով պտոյտ են գալիս։

Մանր երեխայքն էլ, որոնք տանիքների վրայ լցուած ատամները սրած՝ «փոխինդ» ուտելուն են սպասում,— նոյնպէս անվախ ցատկում են բոցավառ կրակի վրայով։

Մի հիանալի տեսարան է ներկայացնում այդ երեկոյ Աշտարակ գիւղը մօտիկ հանդիսատեսին. երկինքը շառագունուած է, լոյսը մինչև հորիզոնն է խփել ու խառնուել երեկոյեան վերջալուսի հետ։ Իսկ հեռուից դիտող անծանօթի համար մի զարհուրելի պատկեր է. այլապէս չէ կարելի երևակայել, եթէ ոչ իբրև մի ահագին հրդեհ, որ բռնել է ամբողջ գիւղը։

Ի հարկէ այս երկիւղը երկար չի տևում. չոր խոտը մի րոպէի մէջ բոցի կերակուր է դառնում, և ամեն բան վերջանում է։

Պ. Պռօշեանց

---

*) Չարսաւ նշանակում է ծածկոց, սպիտակ սաւան, որով ծածկւում են Հայ կանայք տանից դուրս գալիս։

30.

ՄԱՅԻՍ.

Ահա հասաւ մայիսը, մեղրակաթ մայիսը, տասներկու եղբայրների մէջ ամենագեղեցիկը։ Մեր հայրենիքում այս ամիսը հեզիկ նազիկ պարում է բլուրներում ու հովիտներում։ Նրա ձեռքն ու ծոցը, գլուխն ու գօտին լցուած են փունջ-փունջ, գոյն-գոյն ծաղիկներով։ Նրա գալովը փրփրաւորուած աղբիւրները կանչում քչքչում են, քնքշափետուր թռչնիկները երգում պարում են. թեթևիկ ուլերն ու գառնուկները ցատկում վազվզում են։ Անուշահոտ հովերն ու զով զեփիւռները տարածում են ամեն կողմեր գարնան քաղցր բուրմունքը, երբ բլրից բլուր ոստոստալով անցնում վազում է գեղեցիկ մայիսը։ Նրա շաղակաթ շնչից ծաղիկները վառ վառ շողշողում են, պտուղները խայծ խայծ կարմրում։

Ղ. Աղայեան

31.

ԱՄԱՌ

Ամառ է։ Օրերն երկարել են և տաքացել։ Ծաղկազարդ ծառերը փոխել են իրանց ծաղկեայ հագուստը, զարդարուել են լայն-լայն տերևներով և սրանց մէջ թագցնում են իրանց գոյն-գոյն ու անուշահոտ պտուղները։ Սև կեռասը դեղնում կարմրում է և թշերը պլպլացնում։ Կանաչ ու սպիտակ թութը ծածկում է ծառի յատակը։ Նրա վարունգի հոտով ամբողջ բուրաստանը բուրում է։ Նրա

ետևից հասնում են սեխն ու ձմերուկը, անուշահոտ և նաշխուն շամամը։

Ամառը երկրագործի աշխատութեան ամենաթունդ ժամանակն է։ Երկրի բերքերը այնպէս շուտ-շուտ են հասնում իրար ետևից, որ, եթէ տան մէջ աշխատող ձեռքերը շատ չըլինին, մենակ մարդը կը շշկլուի և ոչ մի բան էլ չի կարող անել։ Դեռ գարունքավարը, ցել անելը չըվերջացրած՝ խոտը գալիս հասնում է, որ, եթէ շուտ չըհարուի, կը փչանայ։ Ձեռք է զարկում խոտին, միւս կողմից գարին է հասնում. եթէ թութ ունի, արագ պիտի քաշի, նա է թափւում ծառերից. եթէ այգի ու բանջարանոց ունի, նրանք էլ այնտեղ են չորանում, ջրուել են ուզում։

Ամեն մի ծառ, ամեն մի թուփ, ամեն մի գեռուն շարժման մէջ է, գործի, աշխատանքի վրայ է։ Ճերամը կամաց-կամաց իր մետաքսն է գործում սուս ու փուս, մեղուն իր բճիճներն է մեղրով լցնում, մրջիւնն իր ձմեռուայ պաշարն է տուն կրում, թռչուններն իրանց ձագուկներն են շահցնում։ Յիրաւի, ինչքան տեսնելու բաներ կան։ Ճերամի կերպարանափոխութիւնը, թրթուրների թեւաւորուելը, մեղուների ձագ տալը, թռչունների բոյներն ու ձուաները, տեսակ-տեսակ բզէզներ, գեռուններ, սողուններ, ձկնիկներ, խոտեր, ծառեր, ծաղիկներ, բոլորն էլ իրանց կեանքի երիտասարդ ժամանակ...։

Իսկ հոտաւէտ բուրաստանը, ուր հարիւրաւոր ձմերուկներ կողք կողքի պառկած՝ իրար ականջի քըչփըչում են, թէ այն օրը պարտիզպանը իրանցից քանի հատ պոկեց։ Կարծես, անհամբեր սպասում լինեն, թէ երբ պիտի իրանք էլ կտրուեն, բացուեն ու մարդկանց երեսին ծիծաղելով՝ նրանց ծարաւը զովացնեն։

Ղ. Աղայեանց

32.

Ա Ռ Ա Ւ Օ Տ

Առաւօտ է։ Ինչպէս ամեն տեղ՝ այնպէս էլ Հայաստանի գիւղերում ամենքը շարժողութեան մէջ են։ Գիւղացիները արդէն զարթել են այն փոքրիկ թռչնիկի ձայնից, որ գալիս նստում է երդիքների վրայ ու կանչում. «Լծէ, լծէ»։ Նրանք արդէն լծել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը։ Տների մէջ մատակներն ու կովերը կթել են։ Ոչխարների հօտն էլ դաշտումը մատղաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել։ Տանտիկինն էլ կովերն ու հորթուկներն է դուրս հանում։

Գիւղի աղջկերքն էլ խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրայ ածելով, ծիծաղելով, խայտալով։ Նրանք հանդիպում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփ, ուզենալով իրար նմանել. դու ասա. աղջկերքը թեւաւոր թռչուններին, թէ թռչունները ոտնաթուիկ աղջըկանց։ Նրանք անցնում գնում են առաջ՝ բանջարներ ժողովելու և կանչելու, աղջկերքը՝ «քա՜, քա՜» կաքաւները՝ «գա՜ւ, գա՜ւ»։

—

Կռունկը երամով կարաւան է կազմել սլաքաձև, օդի բարձր տեղերովն անցնելով՝ «կռո՜ւ, կռո՜ւ» է կանչում։ Ծառա՜յ եմ ձայնին։

Երկարասրունք արագիլը կտուցը սրած՝ բոյնից դուրս է եկել, «հճղ, հճղ» ձայնելով դէպի դաշտն է վազում՝ ջրի ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու։

Չորթան-տարուկը գիւղի տանիքների վրայ ու բակերի մէջ է թագնուել, որ չորթան յափշտակէ։

Կոյր բուն այս ժամանակ իր համար մի բոյն է որոնում, որ ծածկուի այնտեղ, վերջացնելով իր «վա՜յ վա՜յ»-ն, որով սգում էր գիշերը, մի չորացած ծառի կամ գերեզմանաքարի վրայ նստած։

Ձկնկուլը գետերի ափերն է վազում ու «ձը՜կ, ձը՜կ» կանչելով՝ ձուկ-մուկ է որոնում կուլ տալու։

Բադն ու սագը ջրերի վրայ նստած՝ կայտառ նաւավարների պէս թըռվըռում են ու երգում։

Սանրակատար հոպոպը անհանգիստ ոստոստում է և անդադար աղաղակում. «յօպ, յօպ»։

Դեղնապորտիկը փափուկ ու մաքուր, ճերմակ ու դեղին շոշեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թագցնելով՝ իր ձայնն է լսեցնում։

Սոխակի ձայնն էլ լսւում է բոլոր երգողների ձայների հետ և ամեն լսողի ուշք ու միտքը վերացնում։

Բարբարոս բազէն որոտացող ձայնով վեր ու վայր է սլանում՝ մի անմեղ ու անզգոյշ աղաւնի կամ տատրակ պատառոտելու։

Անգղները, ձրի ապրող քրդերի պէս, մի սպանուածի հոտ առել գնում են նրա դիակի մսերը կողոպտելու։

Ահա արծիւն էլ երևում է. նրա հզօր թևերի բաղխումից օդը շառաչելով պատռւում է. բոլոր թռչունները մի անգամից լռում են, մինչև անցնի հեռանայ այդ ահեղ ու փառահեղ թագաւորը։

Գ. Սրուանձտեանց.

33.

Ա Շ Ո Ւ Ն Ք

Աշունքացաւ։ Աշտարակի կանաչ այգիները, որոնք մարդու սիրտ էին ուրախացնում իրանց գեղեցիկ տեսքովն ու անուշ հոտովը, Աստուծոյ փռած կանաչ գորգերովը, հազար տեսակ ծաղիկներովը,—հիմա այնպէս են դարձել, որ մարդ չի ուզում երկրորդ անգամ վրաները նայել։ Խաղողի որթերը, որոնք գլուխ գլխի կպցրած՝ իրանց սաթի նման ողկոյզներովը մարդու բերանի ջուրն էին բերում ու երեսին ծիծաղում,—հիմա բոլորովին մեռած են երևում, հողը գլխներին տուած։ Ծառերը, որոնք մի փոքր հով ընկած ժամանակը իրանց տերևների սօսափիւնով ամեն տխրած սիրտ բաց էին անում,—հիմա մերկացած՝ մի տերև էլ չես գտնում վրաները. միայն չոր չոփերն են երևում բիզ բիզ։ Ջրերի ափերը, որ իրանց գոյնզգոյն խոտերով և ծաղիկներով անուշ բուրմունք էին տարածում չորս կողմը,—հիմա, կարծես, մեռած մարդու երես են դարձել՝ ծառերից թափուած, դեղնած տերևներովը։ Ամեն բան էլ փոխուած՝ մի տխուր տեսարան է ներկայացնում։

Պ. Պռօշեանց

34.

Ջ Ր Օ Ր Հ Ն Է Ք

Յունվարի 6-ին, առաւօտեան արշալուսից առաջ, Աշտարակ գիւղի եկեղեցու զանգերը խփեցին. ամեն մարդ իւր ընտանիքով գնաց եկեղեցի։ Հէնց որ պատարագը

վերջացաւ, տէրտէրներն ու տիրացուներն, առօք փառօք զարդարուած, խաչ ու խաչվառով, քշոցներով ու բուրվառներով, կնդրուկի հոտն աշխարհը լցնելով, ժողովուրդը առաջներին գլխաբաց գնալով, խաչը տարան «Մելիքի բաղչէն», այնտեղ առուումը ջուրը ձգելու համար։ Առուի եզերքի ուռիների վրայ ամուրի երիտասարդները, հրացանները լցրած, կանգնել էին. մեր Սօսն է դոցա գլխաւորը։ Առուի երկու կողմը շարուել էին մեծ բազմութիւն. «Ազրգենց կալը» կանանցով և հարս ու աղջկերանցով զարդարուել էր, մի մարդ չկար, որ մի փոքրիկ շիշ չունենար խաչալուայ վերցնելու համար։

Հէնց որ մեռոնը ջրի մէջն ընկաւ, ուռիների միջից հրացաններն սկսեցին որոտալ. ամեն բերանից այս խօսքերն էին դուրս գալիս. «Ո՛վ Սուրբ Մեռոն, դու մեր հայոց ազգը հաստատ պահես, ամեն ցաւի փարատում լինիս»։ Կանայքն էլ, արտասուք թափելով, ջերմեռանդութեամբ աղօթում և իրանց ցաւերին դարման էին խնդրում։ Առուի վրայ կանգնածներն էլ մի-մի շիշ խաչալուայ էին վեր առնում, աչքերին քսում, մի քիչ խմում ու պահում տուն տանելու համար։

Խաչը ջրից հանելու ժամանակ տէր հայրը մի այնպիսի ազդու քարոզ տուեց, որ թէ ինքը լաց եղաւ և թէ ժողովրդին լացացրեց։

Տէրտէրի քարոզն ամեն մարդու սիրտն էլ գութ գցեց. բայց մեր ջերմեռանդ Սօսը ամենքից առաջ ընկաւ, ծառի վրայից ձայն տուեց. «Ես երեք ռուբլի կը տամ, կը հանեմ. իմ կարողութիւնս այսքան է ներում. ո՛վ աւելի կը տայ՝ հրամայեցէք»։

—Դէհ, ցած արի՛, օրհնեա՛լ լինի քո ծնունդը, ձայն տուեց մեծ տէրտէրը. անցեալ տարի դռնաբացէքը դու արիր, հիմա էլ խաչին ես կնքահայր դառնամ։

Սօսը ցած իջաւ, հրացանն ու զէնքերը եղբօրը տուեց, գնաց տէրտէրի կողքին կանգնեց։

—Օրհնեա՛լ լինի Սօսը, բարձր ձայնով ասաց տէր հայրը, Աստուած սորա հաւատն օրհնի՛, շա՛տ ապրի, Քրիստոս սորա սրտի խորհուրդը կատարի. անցեալ տարի ժամի դուռը բաց արեց, հիմա խաչն է ջրից հանում, Յովհաննէս Մկրտչին փոխանորդ դառնում, երեք ռուբլի էլ փող է տալիս սուրբ եկեղեցու օգտին։

Ամեն տեղից կանչեցին. «Զօրանա՛յ ինքը, խաչն իրան պահի, շատ լաւ է անում»։

Խաչը տէրտէրը ջրից հանեց, թաշկինակը ձգեց Սօսի կրծքին, տուեց գիրկն ու շարական ասելով յետ դարձան դէպի եկեղեցին։ Մինչև եկեղեցի մտնելը երիտասարդներն իրանց հրացանները ճանապարհին տրաքտրաքացնում էին։

Խաչը տարան եկեղեցի. Սօսին կանգնեցրին սեղանի առաջը՝ խաչը գրկին, ջերմեռանդ ժողովուրդն եկաւ՝ համբուրեցին ու գնացին իրանց տները։

Պ. Պռօշեանց

35.

ՁՄԵՌ

Բարեկենդան էր։ Ձիւնն եկել, դիզուել, սար ու ձոր բռնել էր։ Պարզկայ գիշերն այնպէս էր գետինը սառցրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում, ճաքճքում էր և մարդու մարմինը սըրսըռացնում, ձայն տալիս։ Ամէն մէկ ծառի ճղներից, ամէն մէկ տան բաշից՝ *) հազար տեսակ սառուցի լուլայ, հազար տեսակ ձիւնի քուլայ՝ կախ էր եղել ու բիզ-բիզ

*) Բաշ՝ տան, պատի ծայրը։

իրար վրայ սառել: Հէնց գիտես սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել՝ մահուան դուռն ընկել: Թռչուն, գազան, անասուն, սողուն՝ որը փէտացել, այստեղ-այնտեղ վայր ընկել, որն էլ վազուց, ամսով առաջ բուն մտել՝ ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն էր սպասում: Գետերի, առուների երեսը սառույցը մէկ գազ եկել, հաստացել, իրար վրայ դիզուել և այնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուպ տուել, որ մօտերին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր լսում, որ սառուցի տակին տխուր տրտում քլքլում էր *) ու էլ յետ այստեղ-այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում, պապանձւում, սառչում:

Արեգակն այս առաւօտ, որ քնատեղիցն ու աղօթարանիցը գլուխը չբարձրացրեց ու աչքը աշխարհի վրայ չգցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին այնպէս էր փայլում, պսպղում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս՝ որ հէնց իմանաս ադամանդ, զմրուխտ, եաղութ ու հազար տեսակ անգին քարեր լինէին՝ դաշտերի, սարերի գլխին, երեսին, կրծքին փռած: Սառերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին այնպէս էր հրապարակ բաց արել, գոռում, փչում, ձիւնի թեփը իրար գլխով տալիս, որ ճանապարհորդի քիթ ու պռունգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում գլխին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին էլ կամ ձորերը գցում, խեղդում կամ ձնումը թաղում, շունչը կտրում կամ ոտ ու գլուխ փէտացած, ճանապարհից խռկում, սար ու ձոր գցում, խեղդում կամ քարէքար տալիս:

Խ. Աբովեանց

*) Քլքլալ՝ ջրի հանած ձայնը սառցի տակ հոսելիս:

36.

ՎԱՆԴԱԿՈՒՄ ՓԱԿՈՒԱԾ ԹՌՉՆԱԿԻ ԵՐԳԸ

Իմ տիկինը կերակրում է
Ինձ նշերով, շաքարով,
Իմ վանդակը զարդարում է
Իր քնքուշիկ ձեռքերով...
Բայց գէթ մի ժամ ուրախ լինել
Ես չեմ կարող իմ կեանքում,
Երբ յիշում եմ, թէ գերի եմ
Այդ նեղ փակուած վանդակում:

Րաֆֆի

37.

ՀԱՍՕՑԻ ԵՐԳԸ

Ահա՛ ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը.
Դէ, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Յառա՛ջ տարէք արօրը:
Վարը վարենք, ակօս փորենք,
Խո՛ր ակօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հրնձենք.
Ցորեան դիզենք կալի մէջ:
Կը գայ ձմեռ—մենք վախ չունենք—
Ուրա՛խ կանցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի և կուշտ է մեր փորը:

Դէ, քաշեցէք, սիրո՛ւն եզներ,
Ձուտով վարենք արտերը.
Թո՛ղ չասեն մեր գըրացիքը՝
Ծոյլ են Հասօյի եզները։

Րաֆֆի

38.

ՉՈՐՍ ԵՂԲԱՅՐ

Չորս եղբայր են. ամէն տարի
Երկրիս վրայ ման են գալի,
Չորսն էլ ջոկ-ջոկ ունեն հասակ,
Պարգևներ են հազար տեսակ։

—

Առաջինն է պատանի,
Բողբոջ, տերև, սաղարթ ունի,
Պայծառ արև, կանաչ արօտ,
Որոնց տղայք են միշտ կարօտ։

—

Երկրորդ եղբայրն երիտասարդ,
Տալիս է մեզ անձրև առատ,
Ծաղկունք ցանում է ամէն դի,
Յոյս է տալիս ամէն հրնձի։

—

Երրորդ եղբայրն այր չափահաս,
Մրգերով լի ունի մի թաս,
Բաժանում է տղոց իր գանձ—
Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ։

—

Չորրորդ եղբայրն է ծերունի,
Ցուրտ ու խաւար շալկած ունի,
Այգի, անտառ ամայացրեց
Դաշտ ու արօտ ձիւնով լցրեց։

—

Գիտե՞ն արդեօք հայ տղերքը,
Որո՞նք են այս չորս եղբարքը.
Եղանակներն են սըրանք մեր.
Գարուն, ամառ, աշուն, ձմեռ։

Գամառ Քաթիպա

39.

ՁՄԵՌ

Չըգիտեմ՝ ինչո՞ւ ձմեռուայ օրը
Յիշում եմ ես միշտ իմ խեղճ եղբօրը,—
Ասում եմ՝ արդեօք չունի՞ նա կարիք,
Հաց, միս, եղ ու փայտ ունի՞ նա հերիք։
Ունի՞ տաք հագուստ, ունի՞ նա մուշտակ,
Ամո՞ւր է տունը, կտուրը չէ՞ ծակ…
Ու այսպէս ես միշտ ձմեռուայ օրը
Միտս եմ բերում իմ խեղճ եղբօրը։

Գամառ Քաթիպա

40.

Գ Ի Շ Ե Ր

Սիրո՜ւն պատկեր։ Պարզ գիշեր էր,
Եւ օդեղէն ովկիանում
Փայլում էին անթիւ աստղեր,
Եւ ուրախ էր սիրտս զարկում։
Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշութիւն էին բուրում,
Եւ երկնքի ցօղ կենարար
Բնութիւնն է զովացնում։
Ես անխռով երգում էի.
Իմ երգս սուրբ և մաքուր էր.
Ազատութիւն էի երգում,
Հայրենիքի «պարծանք ու սէր»։

Ս. Շահազիզեանց

41.

Մ Ո Ւ Կ Ն Ո Ւ Կ Ա Տ Ո Ւ Ն

«Ընկել եմ ճանկըդ, դէհ ուտում ես՝ կեր,
Էլ ինչ ես խառնում իմ դառը ցաւեր.
Գիտեմ, որ իմ վերջս այսօր հասել է,
Խեղճ ձագըս բընում անտէր մացել է».—
Ասաց մի խեղճ մուկ անիրաւ կատուին,
Որ ճանկել նըրան՝ դըրել էր տակին։
—Մինչ ուտելն է մենակ իմ ուզած,—
Պատասխան տուեց կատուն բարկացած.

Ամէն մի ձայնըդ, քաղցր ծըվծըվոցդ,
Որ ականջս է ընկնում, ու այդ թուլանալդ
Տեսնելիս՝ սիրտըս այնպէս է ցընծում,
Որ կարծում եմ, թէ նոր կեանք եմ ստանում»։

Խ Աբովեան

42.

Ծ Ա Ռ Ե Ր Ն Ո Ւ Կ Ա Ց Ի Ն Ը

Ծառերն անտառում երբ շատ նեղացան
Կացնի ձեռիցը ու էլ չիմացան
Ինչ անեն, որ իրանց գլուխը պահեն՝
Խորհուրդ արին, որ մի հընարք գըտնեն։
«Կացինն ով է, որ մեզ կարողանայ
Զօր անել, յաղթել. ինչ մեծ բան է նա».—
Այսպէս ձայն տուեց ծառերից մէկը.—
«Մենք որ կոթ չըտանք, կացինն ինչ է որ
Ցանդըգնի անել մեզ կըտոր-կըտոր»։

Թող իմացողը ինքըն իմանայ
Եւ իզուր տեղը կացնից չնեղանայ.
Ով որ կոթ կը տայ պողպատէ կացնին՝
Թող «հոգւոցն» ասէ առաջ իւր անձին։

Խ. Աբովեանց

43.

Ե Ր Ա Զ

Ես լըսեցի մի անոյշ ձայն—
Իմ ծերացած մօր մօտ էր,
Փայլեց նըշոյլ ուրախութեան։—
Բայց ափսո՛ս, որ երազ էր։

Կարկաչահոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յըստակ էր որպէս բիւրեղ։—
Այն երազ էր ցնորամիտ։

Եւ մեղեդին տխուր մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.
Մօրըս համբոյրն ես ըզգացի։—
Ա՜խ, ափսոս, որ երազ էր։

Կուրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց—շատ թաց էր—
Բայց արտասուքս գնում էին...
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

Ս. Շահազիզեան.

44.

Մ Ա Ց Ր Ի Կ Ի Ս

Հայրենիքէս հեռացեր եմ,
Խեղճ պանդուխտ եմ տուն չունիմ,

Ազիզ մօրէս բաժանուեր եմ,
Տխուր-տրտում—քուն չունիմ։

Սարէն կու գաք, նշխուն հաւքեր,
Ա՜խ, իմ մօրս տեսեր չէք.
Ծովէն կու գաք, մարմանդ հովեր,
Սխըր, բարև բերեր չէք։

Հաւք ու հովեր եկան կըշտիս,
Անձէն դիպան ու անցան.
Պապակ-սրտիս, փափագ-սրտիս
Անխօս դիպան ու անցան։

Ա՜խ, քու տեսքին, անուշ լեզուին
Կարօտցեր եմ, մայրի՛կ ջան,
Երնէկ, երնէկ, երազ լինիմ,
Թռնեմ մօտդ, մայրի՛կ ջան.

Երբ քունդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գրկեմ, համբոյր տամ,
Սրտիդ կըպնիմ վառ-կարօտով,
Լամ ու խնդամ, մայրի՛կ ջան...

Աւ. Իսահակեանց

45.

Փ Ի Ղ Ը Ե Ւ Ք Ո Թ Ո Թ Ը

Մէկ փիղ առած ման կ՚ածէին
Փողոցներէն անցընելով,
Յանկարծ քոթոթ մի կռուասէր
Վըրայ վազեց խիստ հաչելով։

«Ձայնըդ կըտրի՛ր, ըրացի եղբայր,
Ասաց գամփռը մեր քոթոթին.
Չե՞ս տեսնում, որ ծաղըր եղար
Բոլոր շների դու առաջին։
Դու ո՞վ ես, և փիղը ո՞վ.
Ահա քո հեքդ է բըռնում,
Իսկ նա հանդարտ և անխըռով՝
Հաջելուդ էլ ուշք չէ դնում»։
—Հա՛—հա՛, հա՛—հա՛, դու չիմացար,—
Պատասխանեց մեր քոթոթը,—
Ու իմ միտքըս չըհասկացար։
Հեռուից կանչեմ, կըռուեմ հետը,
Որ մեծ բանի մէջ երևամ,
Ուրիշներին էլ ասել տամ.
«Տեսէք քոթոթն ինչպէս քաջ է,
Որ փըղի դէմ էլ կը հաջէ»։

Կռիլով

46.

ԱՇՏԱՐԱԿ

Գեղեցկանիստ է Աշտարակ.
Ճատ այգիներ նա ունի,
Այնտեղ երկինքն է կապուտակ,
Այնտեղ օդն է քաղցրալի։

Մեծ, ընդարձակ, կանաչ դաշտեր
Լի են ծաղկով քաղցրահոտ.
Մարգահասակ, խնկանըւէր,
Բարձրանում է այնտեղ խոտ։

Այդ սիրուն գիւղն ունի մի գետ,
Եւ այն լի է ձըկներով.
Այնտեղ իշխան և կարմրախէտ
Խաղ են կապում խայտալով։

Եւ հարազատ այգիներից
Տարածւում է քաղցրութիւն,
Եւ Քասախը ուրախալից
Բերում է ձեզ իր ողջոյն։

Բայց այդ բոլորն ըստըրկութեան
Կաշկանդած է կապանքով.
Ժողովուրդը թըշուառական
Խեղդուած է մեծ խաւարով։

Ս. Շահազիզեան

47.

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ

Քաղցած աղուէսը, ինչ արաւ չարաւ՝
Մի այգի մըտաւ.
Տեսնում է, որ խաղողները
Կուզ-կուզ կախուած են, փայլում.
Մեր սանամօր ոչ թէ միայն աչքերը,
Ատամներն էլ կըրակ են առնում։
Կուզերն, որ ասես՝ իրարից հասուն,
Մի մի յակընթի նըման պըսպըղուն։
Ի՞նչ էր, գիտե՞ս, ցաւալին.—
Կուզերը խիստ բարձր էին։

Մեր խեղճ աղուէսը շատ աշխատեցաւ,
Ցատքեց-ցատքըտեց, չորս դին ման եկաւ,
Միջից կէս եղաւ—մի ճար չըգըտաւ,
Մի կուզ էլ փըրցնել անկարող եղաւ։
Աչքերը լաւ էին տեսնում,
Ատամները չէին համնում։
Մի ամբողջ ժամ անցնում է,
Իզուր տեղը յոգնում է.
Աղուէսը շատ է վըշտանում
Եւ այսպէս է բացագանչում.
—Է՛հ, ինչ կայ. տեսքին նայես՝ նա վատ չէ,
Բայց դեռ չէ հասել, խակ ու կանաչ է»։
Գիտեմ, բերանըդ որ դըրուեն՝
Ատամներըդ կը հարուեն»։

Կոլցով

48.

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ա.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թըռչնակ,
Դէպի ուր, ինձ ասա,
Թըռչում ես այդպէս արագ։

Բ.

Ա՜խ, թըռիր, ծիծեռնակ,
Ծընած տեղս Աշտարակ,
Անդ շինիր քո բոյնը
Հայրենի կըտուրի տակ։

Գ.

Անդ հեռու ալևոր
Հայր ունիմ սըգաւոր,
Որ միակ իւր որդուն
Ըսպասում է օրէ օր։

Դ.

Երբ տեսնես դու նորան՝
Ինձնից շատ բարև արա,
Ասա, թող նըստի լայ
Իւր անբախտ որդու վըրայ։

Ե.

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել է կէս

Զ.

Ինձ համար ցերեկը
Մութ է շըրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։

Է.

Ասա, որ չըբացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ,
Հայրենի հողից զըրկուած,—

Ը.

Դէհ, սիրուն ծիծեռնակ,—
Հեռացիր, թըռիր արագ,
Դէպի Հայոց երկիրը,
Ծընած տեղս Աշտարակ։

Դոչոխեան

49.

ԷՇ ԵՒ ՍՈԽԱԿ

Ձեռ *) էշը մէկ սոխակ տեսաւ,
—Մէկ ինձ նայիր, նըրան ասաւ.
Ասում են՝ դու լաւ ես երգում.
Բայց չը գիտեմ ղօրդ են ասում։
Ես ականջներ ունեմ լայն-լայն,
Լաւ եմ լսում ամեն մի ձայն.
Բայց քո ձայնը ես չեմ լսած,
Թէև լսել շատ եմ ուզած։
Այս լաւ եղաւ, որ քեզ գտայ,
Դէ մէկ երգիր,— մէկ բլբլա՛,

*) Մեծ։

Տեսնեմ ուղիղ լա՛ւ ես երգում,
Թէ իզուր են այնքան գովում։
Անմեղ սոխակը նազ չարաւ,
Միրուն կտուցը բաց արաւ.
Ուզեց ցոյց տալ աւանակին,
Որ զուր չեն գովում սոխակին։
Ձայնը լարեց եւ սկսեց։
Սոխակի ձա՜յն… ինչե՜ր չասեց.
Մէկ խօսում էր ու մէկ երգում,
Հազար խաղով խաղացնում.
Մէկ դայլայլում, դլդլցնում,
Մէկ գեղգեղում, կլկլցնում։
Այնպէս շրվւում, սրնգում էր,
Որ սար ու ձոր զմայլում էր.
Լեռ քարերն էլ դարձրին ուշ,
Այնքան քաղցր էր, այնքան անուշ։
Ամեն մի շունչ եւ արարած
Լսում էր լուռ, ապուշ կտրած.
Քամին կտրեց իր վզզոցը,
Աղբիւրն իրան քչքչոցը.
Ոչ մի տերև չէր սլսլում,
Ոչ մի թռչուն չէր ծլվլում.
Տաւարներն էլ չարածեցին։
Այլ նստեցան, ականջ դրին,
Տաւարածն էլ շունչը քաշած.
Սոխակին էր լսում ապշած.
Անմեղ ժպիտը բերանին,
Ձեռքով էր անում ընկերին։
Վերջապէս սոխակը լռեց.
Իշի վճռին ականջ դրեց.
Երկարականջ գոզոանը
Այսպէս կտրեց դատաստանը.
—Է՜հ, ինչ ասեմ, վատ չես երգում.

Լաւ ես շրվւում. կլկլցնում,
Բայց ես շատ եմ ափսոսում քեզ,
Որ չես երգում աքլարի պէս.
Եթէ մեր աքլարին տեսնես,
Ու նրանից էլ դաս առնես,
Այնուհետեւ նրա նման
Դու կը երգես շատ աննման»։
Այս վճիռը երբոր լսեց,
Մեր սոխակը նո՛ր աչք բացեց.
Նա նո՛ր տեսաւ, որ իր դիմաց
Մի գեռագլուխ էշ է կանգնած.
Թեւերն խփեց խսկոյն թռաւ,
Իշի ձեռքից ազատուեցաւ։

Ղ. Աղայեանց

50.

Կ Կ Ո Ւ

(ԳԵԼԼԵՐԻ)

«Քաղաքիցը նոր ես չըւել, բարեկամ,
Ասա՛, ինչ են այնտեղ խօսում մեր մասին,
(Կկուն հարցրեց կաչաղակին մի անգամ).
Օրինակ՝ հէնց առնենք փոքրիկ սոխակին,
Զատ կ'ուզէի իմանալ, թէ քաղաքում
Ով ինչպէս է նրա երգը հաւանում»։
—Օ՜, սոխակը տաղ ասելիս այգու մէջ,
Ողջ քաղաքի հիացմունքին չըկայ վերջ։
«Իսկ արտոյտը».
—Արտոյտն էլ է երգելիս,
Իր երգերով շատ շատերին դուր գալիս։

«Ա՜յ զարմանք բան։ Իսկ սարեկին լըսելով
Ի՞նչ են ասում քաղաքացիք»։
—Ջատ սիրով
Նրան էլ են գովում։
«Մի՞թէ... բայց էլի
Քեզ, բարեկամ, մի բան հարցնել կ'ուզէի.
Արդեօք երբէք քաղաքում դու չե՞ս լսած
Իմ մասին էլ մի քանի խօսք»։
—Ճիշդն ասած,
Այնտեղ, քոյրիկ, անունդ անգամ, որ ասես,
Ոչ տալիս են, ոչ էլ երբէք յիշում քեզ։
«Ա՜,—վրէնդ ճղաւեց կկուն սաստիկ զայրացած,
Որ այդպէս է, ես ցոյց կը տամ այդ մարդկանց,
Մինչև մահըս, ինչքան մէջըս ոյժ ունեմ,
Ես ինքս ինձ կը գովեմ»։

Ա. Ծատուրեանց

51.

ՍՈԽԱՆ ԵՒ ՕՁ

Մի օր շուն, գայլ, էշ, հետերն էլ աղուէս
Իրար հանդիպած՝ գընացին պարտէզ,
Ուր մէկ ստուերախիտ վարդի թըփի տակ
Նըստած՝ երգում էր սիրակէզ սոխակ։
Մէկ մէկու աչքի ըսկըսան նայել
Ու քըմծիծաղով սոխակին ասել.
«Սոխակ, մի՞թէ դու դեռ չես նըկատում,
«Որ օձը քեզի սաստիկ է ատում,
«Անդադար վըրադ բարդում է սուտեր
«Եւ հրուշակիդ վրայ ձըգում է նա ստուեր.

«Փառքիդ տակ նա շուտ կը փորէ ական—
«Այժըմ օձն էլ է սուլում բաւական»։

—Մի՞թէ յանցաւոր եմ, ասաց սոխակ,
Որ օձի երգին ունեն ախորժակ
Ձըներ, աղուէսներ, գայլեր, իշակներ
Եւ դոցա նըման թըշուառ էակներ....
Եւ հըպարտութեամբ երեսը դարձրեց,
Դայլայլիկներով պարտէզը լըցրեց։

Գամառ Քաթիպա

52.

ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով։

Հեռանում եմ, անգին ընկեր,
Չըգնահատուած ոչ ոքից.
Բայց հաւաստեաւ անձնանըւէր
Ազգիս մըշակ կը հաշուիմ։

Ազնիւ ընկեր, չըմոռանաս.
Անդաւաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,
Գընա և դու նոյն շաւղով։

Խեղճութիւնը հայոց ազգի
Կարեկցաբար մըտածիր,

Ոսկէ գըրքոյկն եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։ —

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Ազատ կամքով ու խըղճով.
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան
Իւր խընկելի քաջերով։

Հայրենիք,—սեղան սրբութեան—
Ես Աստուծոյ առաջև
Շատ կ՚աղաչեմ, շատ կ՚արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև։

Իմ մըտերիմ, մահըս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտութեան ջատագով։

Ս. Շահազիզեան

53.

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հա՛յրիկ,—ասաց դուստրը հօրը—,
Կապոյտ երկընքի վերայ
Ո՞րքան աստղեր փայլում են վառ,
Ասես, համար, թիւ չըկայ։

Ասում են, որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկընքում.
Ճշմարի՞տ է, ասա, հա՛յրիկ,
Իմը ո՞րտեղ է փայլում»։

—Այո՛, դըստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար։
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար։

«Հա՛յրիկ, տե՛ս, տե՛ս, աստղը թըռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկընքիցը,
Միւս անգամ այլ չերևեց։»

—Ո՞հ, իմ դըստրիկ, հանգի՛ստ կացիր.
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չըգիտէր.
Աղքատները նորա դըռնից
Գիշեր ցերեկ հալածուած.
Մի մարդ չըկար նորան ծանօթ՝
Որ չըլինէր վըշտացած։

«Հա՛յրիկ, դարձեալ թըռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկընքից.
Հայրիկ, որի՞ աստղն էր արդեօք,
Որ գըրկուեցաւ իւր տեղից։»

—Ո՞հ, դըստրիկըս, հանգի՛ստ կացիր.
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր.
Փարիսական իւր ձևերով
Աշխարհ խաբեց, զարմացրեց.
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարցրեց։

«Հայրիկ, տես, տես միւս աստղ թռաւ
Եւ գիծ անգամ չըթողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց։»

Ո՛հ, սիրական, խաղաղ մընա.
Բռնակալի դա աստղ էր,
Որ աշխարհը իւրեան գերի
Ծընած օրից կարծել էր.
Շատ հալածանք, շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում.
Շատ տուն քանդեց, շատ մարդ զըրկեց,
Գութ չունեցաւ իւր սըրտում։

«Ապա այն ինչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառւում է,
Նորա մաքուր, պայծառ լոյսը
Չորս կողմը բակ բռնել է։»

—Ո՛հ, իմ զըստրիկ, աղօթք արա.
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչինչ մարդու
Ոչինչ վընաս տըւած չէ.
Այն լուսաւոր բակն է՝ նորա
Առաքինի գործերը.
Աղօթք արա, որ երկարին
Նորա կեանքի թելերը։

Շատ օր չանցաւ, երկընքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ովի՛ աստղիկն էր որ ընկաւ.
Բան հարցընող չերևեց։

Մինչդեռ լուսինն արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին.
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով, խոր լռութիւն՝
Մի սըրտաթափ, մազերն արձակ
Վազեց աղջիկ սըգաւոր
Դէպի գիւղի գերեզմանքը,
Ծունկ չոգեց մի շիրմի մօտ։

«Հայրիկ, աստղիկըդ չէ փայլում.
Դու յաւիտեան քընեցիր.
Ա՛ռ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր։

Իմ աստղիկին ասա՛ նոյնպէս,
Որ չըփայլի, հերի՛ք է.
Այս աշխարհը ինձ առանց քեզ
Մութն ու խաւար մի բանտ է»։

Մի մարդ չը կար, որ նըկատէր,
Որ հետևեալ գիշերին
Պակասեցաւ երկընքիցը
Մի պայծառ աստղ խընդագին։

Երրորդ օրը շատ սըգաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին
Մարմինը խեղճ աղջըկան։

Մ. Նալբանդեան

54.

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

Մեզնից շատ առաջ կար մի Թագաւոր,
Հոգւով դեռ արի, գըլխով ալեւոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի՝ ասացին գիտունք՝ այն դարը։
Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ տըգեղ, միւսը գեղեցիկ։

Մի օր տգեղը ասաց միւսին.
«Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»։
Սիրունը գընաց առաջից տըրտում,
Տըգեղը յետնից, ոխ պահած սըրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած՝
Իր սիրուն քըրոջ գըլորեց նա ցած։
Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից.
«Քոյրի՛կ իմ, քոյրիկ, փըրկէ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քեզ լինի, պարգեւէ ինձ կեանք»...
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ.
Ինձնից փըրկութիւն դու բնաւ մի յուսալ։—
«Քոյրի՛կ, թէ այդ էլ քեզ չէ բաւական՝
Կու տամ քեզ ոսկի պըսակ պատուական»։
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ.
Ինձնից փըրկութիւն դու բնաւ մի յուսալ։—
«Քոյրի՛կ, մի թողնիլ դու ինձ անտէրունջ,
Քեզ սիրուն փեսաս կու տամ անտըրտունջ»։
Տըգեղի սիրտը դարձել էր ժէռ քար.
Քըրոջ խընդիրքը թողեց անկատար։

Ջըրկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Բըռնեց մարմինը սիրուն աղջըկան...

Ջըրիցը հանեց, դըրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ։
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջըկան,
Լացեց ու առաւ, դըրեց ուսի վըրան,
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Չորացուց նորա մարմնի դիփ հիւթը։
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկըրից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից.
Երբոր ամեն բան պատրաստեց կարգին՝
Գընաց արքունիք, տաւիղը ձեռքին։
Երբ մըտաւ դահլիճ շըքեղ զարդարած՝
Տեսաւ տըգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խըփեց,
Հիւրերի առջեւ քաղցրաձայն երգեց.—
«Հընչէ՛, իմ տաւիղ, հնչէ համարձակ,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ պըսակ։
«Լըսէ՛, իմ ծընող, լըսէ, սիրական,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ փեսան։
«Լըսէ՛, ժողովուրդ, լըսէ անխըռով,
«Հարազատ քոյրըս գըլորեց ինձ ծով»։

Միւս օր դահիճներ խարոյկ շինեցին,
Մահապարտ քըրոջ մէջը գլորեցին.
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»։

Ռ. Պատկանեան

55.

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի՛, իմ սոխակ, թո՛ղ պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր որդիս աչերին։
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։

Ե՛կ, արեղաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ որդիս, քնի է կարօտ։
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ։

Թո՛ղ դու, տատրակի՛կ, քու ձագն ու բունը,
Վուվույով որդիս բեր անուշ քունը։
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի գալ,
Իմ որդին չուզէ սրգաւոր դառնալ։

Կաչաղա՛կ ճարպիկ, գող, արծաթասէր,
Ճահի զըրուցով որդուս քունը բեր։
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի գալ,
Իմ որդին չուզէ սովդագար դառնալ։

Թո՛ղ ոսըրդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ։

Ռ. Պատկանեան

56.

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ժամանակով կատուն ճոն էր,
Շունն էլ գլխին գդակ չունէր,
Միայն, գիտեմ ոչ որդիանց-որդի,
Ճանկել էր մի գառան մորթի։
Եկաւ մի օր, ձմըռնամըտին,
Կատուի կուշտը տարաւ մորթին.—
«Բար՚աջողում, ուստա Փիսօ,
Գլուխս մըսեց, ՚ի սէր Աստծոյ.
Առ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարիր գլխիս յարմար.
Վարձդ կը տամ, միամիտ մնա.
Միայն խնդրում եմ շատ չուշանայ»։
—«Աչքիս վրայ, քեռի Քուչի,
Մի գդակ ա խու մի քուրք չի,
Քու թանկագին խաթէր համար
Ուրբաթ օրը համեցէք տար.
Փողի մասին աւելնորդ ա,—
Մեր մէջ խօսալն էլ ամօթ ա,
Ինչ մեծ բան ա, տո հէր օխնած,
Միա՛յն, միայն, միայն մի գդակի վարձ...

*

Ուրբաթ ծէքին, քեռի Քուչին,
Ուստից առաջ, բաց բաց կուճին
Թափ թափ տալով, ծանդըր ու մեծ
Ուստա կատուի շեմքում կանգնեց.
«Ուստէն ո՞ւր ա... փափախս ո՞ւր ա...
—Մի քիչ կացի, հրէս կ՚երեւայ։

*

Ուստէն էկաւ քուրքը հագին.
Ձանը տեսաւ, բեխի տակին
Իրան իրան քիչ փնթփնթաց
Ու մուշտարու վրայ թնդաց—
«Ցրտատար էլա՛ր... վա՛հ, տնաշէն,
Չես թողնում որ մի շունչ քաշեն.
Մհաթ խդւ չի, դեռ հլա նոր եմ
Ցրցամ տուել, թէ որ կարեմ»։
—«Դէ, հէր օխնած էտէնց ասա.
Էդ բարկանալդ էլ ընչիս ա.
Փող եմ տուել, շուտով կարի,
Թէ չէ, ասա էգուց արի...
Ասաւ Քուչին ու նեղացած
Վերադարձաւ գլուխը բաց։

*

Մին էլ էկաւ, դարձեալ չըկար.
Էս անգամը գիպան իրար.
Էլ անպատիւ, պետռը խօսքեր,
Էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,
Էլ գող Փիսօ, էլ քաչալ Ձուն...
Բանը հասաւ դիւանբաշուն։
Մինչև շունը գնաց-էկաւ,
Ուստա կատուն կոտըրն ընկաւ.
Գլուխն առաւ ու մի գիշեր
Հայդէ, կորաւ. էն գնալն էր...

*

Էն օրուանից մինչև օրս էլ
Ձունն էս բանը չի մոռացել,
Մտքումը հլա դեռ պահում ա.
Որտեղ կատուին պատահում ա,
Վրայ ա վազում, մորթուց քաշում,
Իրան մորթին ետ ա ուզում։

Իսկ սևերես կատուն յանկարծ
Ետ ա դառնում ու բարկացած
Փշտացնըմ ա, մթամ նոր եմ
Ցրցամ տուել, թէ որ կարեմ։

Յովհաննէս Թումանեանց

57.

ԱՐԾՈՒԻՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Եղաւ՝ մի անգամ անտառի մէջ էլ
Արծիւն ու կաղնին սկսեցին վիճել,
Թէ որն իրենցից շատ տարի կ՚ապրի,
Որն է դիմացկուն ու պինդ աւելի։
Արծիւն ասաւ՝ ես. կաղնին էլ թէ՝ ես։
Երկուսն էլ յամառ ու հպարտ այսպէս,
Մեծ մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,
Վերջը այս տեսակ պայման կապեցին։
Ժամանակ դըրին հինգ հարիւր տարի
Արքան հաւքերի, արքան անտառի,
Որ թէ որոշած այն օրին հասնեն,
Այն օրը մին էլ գան իրար տեսնեն։
Ու արծիւն իսկոյն կաղնուց հեռացաւ,
Հըզօր թևերը շարժեց, վերացաւ
Դէպի ամպերը, դէպի ժայռերը,
Ուր անց է կացնում իր լաւ օրերը։
Կաղնին էլ փռեց ճիւղերն երկաթի,
Խո՛ր ու խոր մըխեց ճանկերն արմատի,
Ու այնպէս հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգհարիւր տարում։
Դարեր անցկացան։

Եւ ահա մի օր
Արծիւը եկաւ ծերացած, անզօր,
Ծըւոցը կըտրած, տըկար, հեւալով,
Թոյլ թոյլ թեւերը հազիւ քաշ տալով
Տեղ հասաւ մի կերպ, նայեց դէս ու դէն,
Տեսաւ որ կաղնին ընկել էր արդէն.
Ճիւղերը թէեւ դեռ թարմ ու կանաչ,
Ընկել էր անհեղ փոթորկի առաջ։
—Հէյ, կանչեց, գոռոզ, պարծենկոտ կաղնի,
Դէ լաւ ճանաչիր ինձ ու քեզ հիմի,
Հինգհարիւր տարուց մի ժամ էլ դեռ կայ,
Ընկել ես արդէն, անկոտրում հըսկայ։
—Հինգհարիւր տարի ապրել եմ կանգնած,
Այդքան էլ կ'ապրեմ դեռ այսպէս թիկնած,
Մինչեւ լըրանայ մի հազար տարին,
Պատասխան տըւաւ ընկած վիթխարին։

Յովհաննէս Թումանեան

58.

ԱՂՔԱՏ ԿԻՆ

Ցուրտը փըչեց, ձըմեռ սաստիկ,
Ձիւնը ծածկեց գետինը.
Ամենայն մարդ մըտաւ իւր տուն,
Պատըսպարուել ցըրտից։
Ժամի դըռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին,
Նորա հանդերձ պատառ-պատառ,
Չունի շալիկ իւր հագին։

Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ձեզ, սիրելիք, ասեմ ով էր
Այս խըղճալի աղքատը
Այն ցըրտումը ոտաբոպիկ
Կանգնած ժամի դըռնումը։
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատուով
Մ'ան էր գալիս փողոցներում
Իւր սեփական կառքերով։
Այժըմ վախով նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Ամենայն օր նըրա դըռնում
Կանգնած էին շատ կառքեր,
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նըւագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նորա բարեկամ։
Այժըմ զըրկուած ամեն բանից՝
Չունի անգամ հացի գին։
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Ամենայն օր իւր մարմինը
Անուշահոտ ջըրերով
Լըւանում էր, մազը սանրում
Կըրիայի սանրըով.

Նա հագնում էր բեհեզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանկագին.
Նա չըգիտէր ինչ ասել է
Կարօտութիւնն արծաթին։
Այժմ անլուայ, մազերն արձակ,
Զունի հագուստ, թէև հին։
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Ժամի դըռնում նա կանգնած է,
Աչքերը կոյր, վիզը ծուռ.
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան. «Խըղճուկ,
Ե՛կ դու մեր մօտ, մենք կ՚ամոքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կը թուլացնենք ճակատագրից
Խիստ հարուածի սաստկութիւն։»
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վըշտերին։
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Մ. Նալբանդեան

59.

ԱՐՏԱՒԱԶԴ

Լոյսը շողաց. ծագեց արև
Թուխ-թուխ ամպերի միջից.
Մի ձիաւոր անցաւ շուտով
Արարատայ կամուրջից։

Գինայ գետի ափերի մօտ
Սև նըժոյգը վազում էր,
Նա՛ վազում էր որպէս սև ծուխ,
Մըրրկից առաջ թըռչում էր։
Նորա վըրայ մի պատանի
Նստած էր քաջի նման
Կապարճը լի էր նետերով
Ուսին՝ աղեղ, լայն վահան։
Որսորդական իւր շները
Թափառում են սար ու ձոր,
Հոտ քաշելով փընտռում են
Էրէ, թռչուն նորա նոր։
Թըփի միջից յանկարծակի
Վազեց կինճը սոսկալի,
Սոսկալի էր ժանիքները,
Աչքերը վառ, կրակով լի։
Տեսաւ նորան Արտաւազդը,
Վըրայ հասաւ ձիընթաց,
Նետեց նետը, վայրի կինճը
Ահեղ ձայնով որոտաց։
Օդը մը՛թնեց, փոշին պատեց,
Բարձրացաւ մի թունդ մըրրիկ,
Եւ անդունդը խոր յատակից
Գոռաց ձայնով յոյժ սաստիկ։
Նորա առջև բաց է լինում
Լայնաբերան մի վիհ—փոս.
Ուր որսորդը իւր ձիու հետ
Ներս է գլորւում դիւրահոս։
Կորաւ արին՝ Արտաւազդը.
Կորաւ խորին անդընդում.
Հօր անէծքը նորան պատժեց,
Որին նա շատ չէր սիրում։

Իսկ քաջքերը մեծ Մասիսի
Դարընեցին շէկ երկաթը,
Յափշտակած՝ Արարատի
Տարան նորան գագաթը։
Այնտեղ դրին խոր այրի մէջ,
Ձեռքն ու ոտքը շղթայած,
Որ Արտաւազդ միշտ, յաւիտեան
Մընայ այնտեղ բանտարկուած։
Զը հեռացան Արտաւազդից
Իւր շներն հաւատարիմ.
Զոյգ շըները որսորդական
Մնացին նորան մօտերիմ։
Նոքա այնտեղ ամբողջ տարին
Կըրծոտում են հաստ շղթան,
Կըրծոտում են, որ որսորդին
Տան հընար ազատութեան։
Եւ մաշւում է ծանր շղթան,
Նա մաշւում է օրէցօր,
Փոքր է մընում, որ կորցընի
Զօրութիւնը իւր հզօր։
Հայոց երկրի դարբինները
Մեծ Զատիկի գիշերին,
Երեք անգամ ծանր մուրճը
Զարկում են իրանց սալին։
Նոյն րոպէին ծանրանում են
Արտաւազդի շղթայքը,
Որ չազատուի, չըկարենայ
Ջընջել բոլոր աշխարհքը։

Րաֆֆի

Բ. ՄԱՍՆ

Բ. ՄԱՍՆ

(4-րդ տարի)

1.

ՍՈԽԱԿ

Գարնան գեղեցիկ երեկոյին մէկ փոքրիկ տղայ իւր ուսուցչի հետ պտըտում էր անտառի շուրջը։ Խիտ անտառի միջից լսւում էր սոխակի հրապուրիչ ձայնը։ «Ի՞նչ գեղեցիկ ներդաշնակութիւն, ասաց տղան, երկար ժամանակ հիացած ականջ դնելուց յետոյ. սաստիկ ցանկանում եմ այդ գեղեցիկ երգը մօտից լսել. մի քիչ առաջ գնանք, վարժապետ, որտեղից ձայնն է գալիս»։

—Զգո՛յշ կաց, ասաց վարժապետը. սոխակը վայրենի թռչուն է և անչափ կասկածոտ, եթէ փոքր ինչ մօտենանք, կը խրտնի և կը դադարի երգելուց։

«Բայց ինչի՞ համար ասաց տղան, ինչի՞ այդ թռչունը, որ իւր երգի ճոխութեամբ ուրիշներինը խափանում է, բուի պէս միայնութիւն է սիրում. ինչի՞ իւր քաղցր ձայնը մեր բնակութիւնից հեռու է հնչեցնում, մինչդեռ մեր պարտիզի փոքրիկ ծառերն անգամ մանրիկ թռչունների ձանձրացնող ճռւողիւններով լիքն են։

—Ճշմարիտ արժանաւորութիւնը, պատասխանեց ուսուցիչը, համեստ է լինում և սիրում է առանձին կենալ. պէտք է մեծ յարգանքով մօտենալ նորան և հեռուից վայելել նորա արդիւնքը։

Բազմավէպ

2.

ԱՐԾԻՒՆ ՈՒ ՀԱՒԸ

Մի անգամ գիշատիչ արծիւն ընկել էր երկաթեայ վանդակի մէջ, տխուր ու մունջ էր նա և կատաղաբար չորս կողմը նայելով՝ չէր մօտենում առաջն ածած մսի կտորներին։ Վանդակը դրած էր դուրսը և նրա մօտով ման էին գալիս հաւերը։ Դոքա սկզբում բաւականին հեռու էին շրջում արծուից՝ դողդողալի մտիկ տալով ահարկու թռչունին. բայց յետոյ, հասկանալով որ նա չի կարող վնաս տալ վանդակի միջից, փոքր առ փոքր սիրտ առան, սկսեցին պտըտիլ վանդակին շատ մօտ. վերջապէս սկսեցին խօսել արծուի հետ։

«Ինչո՞ւ չես ուտում, ասաց նրան մի բարեսիրտ հաւ. միթէ չես տեսնում առաջդ թափած քո սիրելի կերակուրը։ Տես, ինչպէս ախորժակով ենք ուտում մենք գարու հատիկները։ Կեր, մեր տէրն էլի կը տայ քեզ։ Որ չուտես՝ կը մեռնես։ Հոգս մի՛ անիր, անազատ կեանքն այնքան վատ չէ, ինչպէս դու կարծում ես. վանդակդ էլ բաւականին ընդարձակ է»։

—Այո՛, այդպէս է՝ միայն հաւերի՝ և ոչ արծիւների համար,—ձայն տուեց վերջապէս տխուր կալանաւորը։ Վաղը աւելացրեց նա, ձեզ շամփրի կ՚անցկացնեն կամ կը ձգեն կերակրի մէջ, իսկ դուք այնքան տխմար էք, որ չէք հասկանում ձեր թշուառ դրութիւնը, և այնչափ ստրուկ էք, որ չէք կարողանում սիրել ազատութիւնը, ինչպէս ես եմ սիրում նրան։ Դուք փոխել էք նրան չընչին հատիկների հետ, որ ձրի թափուած են դաշտերում. իսկ ինձ համար՝ անազատ կեանքը ոչինչ գին չունի։

3.

ՀԱԶԱՐԱՆ ԲԻՒԼԲԻՒԼԸ ԵՒ ՍԸՀԱԿ ԹՌՉՈՒՆԸ

Բաղէշի ձորը մի սքանչելի պատկեր է ներկայացնում գարնանը։ Այնտեղ ես տեսայ հազարան բիւլբիւլն որ յիշատակւում է հէքեաթների մէջ. ես լսեցի նրա զմայլեցնող երգերը, որ նա երգում էր մաքուր և քաղցր դայլայլիկներով. նա գիտէ հազար եղանակ գեղգեղել. նա լցնում էր ձոր ու անտառ իր հրաշալի գեղգեղանքով։ Նա սարեկի չափ է, աչեղ, լանջագեղ, թիկունքը և գլուխը փայլուն ոսկու պէս դեղին, թևերը սևաթուխ, ծանր նայուածքով, վսեմ շարժմունքով. նա արագ է թռչում, բայց ո՛չ մացառի փոքրիկ բիւլբիւլի նման վժիկ-վժիկ և ճռճռ..., և ոչ նրա պէս ոստոստուն և մարդկանցից խրտնող. սա, ընդհակառակը, հաճոյք է զգում ցոյց տալ իր գեղեցկութիւնը, և ախորժում է երգել, երբ իրան լսում են։

Բաղէշի ձորի ծառերի վրայ ամեն երեկոյ, երբ արևը մայր է մտնում, թփերի միջից մի ամաչկոտ աղջկայ ձայնի նման լսւում է սրտին դիպչող մի շվոց. «Սըհա՛կ, սըհա՛կ, սըհա՛կ...», երեք անգամ կրկնւում է, մի պահ լռում է, կարծես, արձագանքի կամ պատասխանի է սպասում, ապա յուսակտուր կրկնում է ու կրկնում. «Սըհա՛կ, սըհա՛կ, սըհա՛կ», և այդպէս մինչև առաւօտ։ Գըտըտիկ, կատարագլուխ, վախկոտ և ամաչկոտ այս թռչնիկը ո՞վ է, հարցրի ես բարեկամիցս։ Միթէ չգիտես։ Եղել են որբուկներ՝ քոյր ու եղբայր. մի երեկոյ եղբայր Սըհակը սանդրում էր իր քրոջ ծամերը. յանկարծ նրան յափշտակում ջին, տանում։ Արծիւ էր յափշտակողը թէ գազան՝ Աստուած գիտէ. միայն քոյրը աղեկտուր ճչում է. «Աստուած, թռչունի թևեր տուր ինձ, թռչեմ, եղբայրիկիս գտնեմ»։ Աստուած թևեր է տալիս աղջկան։ Այն օրից 'ի վեր ծա-

ռեր ու գռներ է թափառում նա, լեռներ ու անտառներ է թռչում ու կանչում «Սըհա՛կ, Սըհա՛կ, Սըհա՛կ»։

Գ. Սրուանձտեանց.

4.

ԻՄԱՍՏՈՒՆ ՋՈՒԼՀԱԿԸ

Մի թագաւոր նստած էր իր գահի վրայ։ Հեռաւոր երկրից մի դեսպան եկաւ և, առանց խօսելու, թագաւորի գահի շուրջը մի կլոր գիծ քաշեց ու լուռ ու մունջ մի կողմը քաշուեց նստեց։

Թագաւորը այս մարդու արարմունքից ոչինչ չհասկացաւ. կանչեց իր իշխաններին. նրանք էլ մի բան չըհասկացան։ Թագաւորը շատ վատ դրութեան մէջ էր։ Նրա համար մեծ ամօթ էր, որ իր տէրութեան մէջ մի խելօք մարդ չէր գտնւում՝ դեսպանի արածը հասկանալու համար։ Թագաւորը սաստիկ նեղացած՝ յայտնեց ամենքին, որ եթէ նորան պատասխան տուող չգտնուի, էլ ոչ ոքի կենդանի չի թողնի։

Թագաւորի կողմից խնդրակներ ման եկան ամեն կողմ, և վերջը մի տան մէջ գտան մի ջուլհակ (ոստայնանկ)։ Տեսնում են, որ այն մարդը մի տեղ նստած, միևնոյն ժամանակ երեք գործ է շինում.—համ իր կտաւն է գործում, համ երկու երեխայի օրօրոց է օրօրում, համ էլ տանիքի վրայ ցորեն է փռել, մօտը մի ճիպոտ է տնկել. երբ ինքը իր կտաւի թելերը շարժում է՝ կտաւը գործւում է, օրօրոցները օրօրւում են, այն ճիպոտն էլ շարժուելով՝ տանիքի ծտերն են փախչում, ցորենից հեռանում։

Նրանք այս բանի վրայ շատ են զարմանում։ Յետոյ նորան պատմում են, թէ հեռաւոր երկրից մի մարդ եկաւ, թագաւորի գահի շուրջը մի գիծ քաշեց, և ոչ ոք չկարողացաւ իմանալ, թէ դրանով ինչ էր ուզում ասել։ Վեր կաց, գնանք. եթէ դու նրա միտքը իմանաս՝ թագաւորը քեզ մեծ պարգևներ կը տայ։

Ջուլհակը մի քիչ մտածում է, յետոյ առնում է երկու վէգ ու մի վառեկ և գնում է հետները։ Հասնելով թագաւորի մօտ՝ վէգերը հանում է և ձգում է դեսպանի առաջը։ Դեսպանը գրպանից մի բուռը կորեկ է հանում շաղ տալիս գետին։ Ջուլհակը բաց է թողնում վառեկը որ իսկոյն սկսում է կտցահարել կորեկը։

Այս բանը տեսնելով՝ դեսպանը տրեխները հագնում է ու սուս ու փուս դուրս գնում։

Թագաւորը ջուլհակին հարցնում է, թէ՝ «Այդ ինչ արիր»։ Ջուլհակը պատասխանում է. «Այդ մարդը եկել էր ասելու, թէ՝ «Մեր թագաւորը գալիս է քեզ հետ պատերազմելու, քո երկրին տիրելու. խոնարհւում ես, թէ կռուով ես ուզում պատասխանել»։

Ես նրա առաջը վէգեր ձգելով հասկացրի, թէ՝ «Դուք մեզ համար երեխաներ էք, գնացէք վէգ խաղացէք. դուք ո՞վ, մեզ հետ կռուողն ո՞վ»։ Նա իր շաղ տուած կորեկով ուզեց հասկացնել, թէ՝ «Մեր զօրքերը անթիւ, անհամար են. դուք ինչ կարող էք անել»։ Եւ երբ ես վառեկս բաց թողի ու նորա բոլոր կորեկը կերաւ՝ դրանով պատասխանեցի, թէ՝ «Մեր մի մարդը ձեր հազար մարդուն կը ջարդէ. գնա պատմիր քո թագաւորին»։

Թագաւորը այս բացատրութիւնը լսելով՝ մեծամեծ պարգևներ տուեց ջուլհակին և ուզեց նորան վէզիրի պաշտօն տալ։ Բայց ջուլհակը պարգևների մի մասովը բաւականացաւ և թագաւորին ասաց. «Ո՛չ, թագաւոր, թո՛ղ որ ջուլհակ մնամ. միայն այս եմ խնդրում քեզանից, որ չըմոռանաս, որ հասարակ արհեստաւորի մէջ էլ կը գտ-

նուէ այնպիսին, որ այսպիսի նեղ օրում քեզ պէտք կը գայ։ Վէզիրներիդ ինչ պատիւ ուզում ես՝ տուր, միայն ջուլհակին ու կօշկակարին էլ մարդու տեղ դիր»։

Գ. Սրուանձտեանց

5.

ՄՈՒՐԱՑԿԱՆ

(ՏՈՒՐԳԵՆԵՎԻՑ)

Ես անցնում էի փողոցով… Ինձ կանգնեցրեց մի ծեր, հալից ընկած մուրացկան։ Աչքերն արտասուալից, ուռած ու կարմրած, շրթունքները կապտած, հագին լաթեր, մարմնի վրայ անմաքուր վէրքեր… Օ՜, ինչ այլանդակ կերպով մաշել կերել էր այդ անբախտ արարածին աղքատութիւնը։

Նա ինձ պարզել էր իր կարմրած, ուռած ու կեղտերով ծածկուած ձեռքը… Նա հառաչում էր, նա խեղդուած ձայնով ողորմութիւն էր աղերսում։

Գրպաններս սկսեցի տակն ու վրայ անել… Բան չը գտայ—ո՛չ փող, ո՛չ ժամացոյց, ոչ էլ նոյն-իսկ թաշկինակ,.. հետս ոչինչ չէի առել… Իսկ մուրացկանը շարունակ սպասում էր… և նրա կարկառած ձեռքը թոյլ կերպով երերւում ու ցնցւում էր։

Ինքս ինձ կորցրած, շփոթուած՝ ես ամուր սեղմեցի այդ դողդոջուն, այդ կեղտերով ծածկուած ձեռքը… «Թողութիւն արա, եղբա՛յր, ես ոչինչ չունեմ»։

Մուրացկանն իր կարմրատակած աչքերը յառեց վրաս։ Նրա կապտած շրթունքները քմծիծաղ տուին, և նա էլ իր կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները։

«Է՛հ, ինչ արած, եղբա՛յր,—ծամծմեց նա.—դրա համար էլ շնորհակալ եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբա՛յր»։

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից։

Ա. Ծատուրեանց

6.

ԵՐԿՈՒ ՀԱՐՈՒՍՏ

(ՏՈՒՐԳԵՆԵՎԻՑ)

Երբ իմ առաջ գովաբանում են հարուստ Ռոտշիլդին, որ իր ահագին եկամուտներից ամբողջ հազարներ է բաժին հանում մանուկների կրթութեան, հիւանդների բժշկութեան և անկեալների խնամատարութեան՝ ես նրան գովում և զգածւում եմ։

Սակայն և գովելով նրան և զգածուելով՝ ես չեմ կարող չյիշել գիւղական մի չքաւոր ընտանիքի՝ մարդ ու կնոջ, որոնք իրանց քանդած բնում ապաստան տուին իրանց մի մօտ ազգականի որբ մնացած աղջկանը։

—Կատեային որ մեզ մօտ առնենք, ասում էր գիւղացի կինը,—մեր վերջին կոպէկն էլ նրա վրայ կը գնայ աղի փող էլ չի մնայ, որ աղ առնենք, կերակրին անենք…

—Է՛հ, ոչինչ… մենք էլ կերակուրն առանց աղի կ'ուտենք,—պատասխանեց նորան մարդը։

Ո՜ւր այս գիւղացին, ո՜ւր Ռոտշիլդը։

Ա. Ծատուրեանց

7.

ԱՆՏՈՒՆՆԵՐԸ

—Մայրիկ, դեռ հեռու է…
—Մօտ կէս մղոն… Ահա այս անտառի ետեւում կե-
րեւան խրճիթները… Մրսում ես, Եմս։
—Ո՛չ, մայրիկ, ո՛չ։
Այս խօսակցութիւնը տեղի ունէր երկու հոգու՝ մօր
և որդու մէջ։ Մայրը գնում էր առջևից ճանապարհ բա-
նալով որդու համար ձիւնի հիւսերի մէջ։ Ամեն մի բոպէ
ընկնելով, նա դառնում էր որդուն։
—Զգոյշ, Եաս… Անցիր այս կողմով։
—Լաւ, մայրիկ, լաւ… սառած շրթունքներով շշըն-
ջում էր որդին, սակայն չէր գանգատւում, թէև ցուրտը
թափանցում էր մինչև ոսկորները։ Եւ հիմա, երբ մայրը
հարցրեց.
—Մրսում ես, Եաս… նա պատասխանեց.
—«Ոչ, մայրիկ, ոչ…» Ու միայն նրա դողացող ձայնն
էր, որ հակառակ նրա խօսքերին, ասում էր ճշմարտու-
թիւնը։
Երկու մարդ կռւում էին ձիւնի հիւսերի հետ… Եր-
կու դիւրաբէկ արարածներ կռւում են անսահման, ցուրտ,
մեռած բնութեան հետ… Ո՞վ կը յաղթէ, մարդը՝—թէ
այս անշունչ աժդահան…
—Մայրիկ, դեռ հեռու է… հարցնում է Եասը։
—Շուտով, շուտով, միայն եկ, Եաս, յետ մի մնալ,—
—Իմ ետևից, իմ ետևից…—Եւ նա,
աղաչում էր մայրը։—Իմ ետևից, իմ ետևից…—Եւ նա,
հաւաքելով իր վերջին ույժերը, պատռում է սառած ձիւ-
նի շերտերը, ճանապարհ բանալով իր որդու համար…
Նա զգում էր, որ թուլանում է, բայց մի և նոյն ժամա-

նակ զգում էր, որ պիտի գնայ… Թէ չէ ցրտահար մահը
սպասում է թէ իրան, թէ Եասին։
—Միայն թէ բուք չըսկսվի…, քամի չըվերկենայ…
—ցածր ձայնով շշնջում էր ինքն իրան մայրը… Ու կար-
ծես՝ իբրև նրա խօսքերին պատասխան, անտառի կողմից
բարձրանում է քամին և սառած ձիւնը տալիս նրա երե-
սով…
—Տէր Աստուած,—շշնջում է նա, դժուարութեամբ
շարժելով ցրտից թմրած ոտները։ Իսկ ետևից նրա հետ-
քերով գնում է թմրած մանուկը, հագած մօր բաճկոնը,
որ նա հանել էր իր վրայից ու տուել նրան։
—Մայրիկ…
—Ի՞նչ է, սիրելիս…
—Մայրիկ…—հազիւ լսելի շշնջում է երեխան ու
կուչ գալով նստում սառը ձիւնի վրայ։
—Եմս, մի քիչ էլ…, արդէն մօտ է…—աղերսում է
մայրը, ու նրա ձայնի մէջ զօղում են բոլոր լարերը՝ թէ
սիրոյ, թէ աղերսանքի, թէ անսահման յուսահատու-
թեան։…
Նա հանում է իր գլխաշորը ու երեխային փաթա-
թում նրա մէջ։
—Եմս, սիրելիս… Մի քիչ տեղ, մի փոքրիկ տեղ…
—Չեմ կարողանում, մայրիկ,—աւելի կամաց շշնջում
է երեխան և ուժասպառ վայր ընկնում ձիւնի վրայ…
Մայրը մնաց կանգնած ու կոտրատում էր իր սառած
ձեռները, իսկ բուքը ցրուեց նրա գլխի սև մազերը։
Բուքը, զգալով իր իրաւունքները, սուր համբոյրնե-
րով գիշատում էր նրա դէմքը…
—Եմս…—շշնջում էր նա ատամների միջից և կռա-
նում դէպի երեխան, բայց սրա դէպի մայրը դարձրած
ապակեայ անշարժ հայեացքը զրկում է մօրը իր վերջին
ույժից… Նա ցանկանում է բարձրացնել երեխային և
ինքն էլ ընկնում է ծնկների վրայ… Սառնամանիքը յաղ-

թեց նրան, սղմեց գետնին ու, սառցնելով արիւնը, սկսեց թափանցել դէպի սիրտը․․․

—Ինչո՞ւ ես Դու ինձ ծէր Աստուած այսքան խիստ պատժում․․․ Մեռնել այստեղ․․․ առանց քահանայի․․․

—Նա ցանկանում է բարձրանալ, բայց նրա ծնկները սառել կպել են ձիւնին։—Անիծուած մարդիկ․․․ Դուրս վռնդեցին խրճիթից․․․

Սաստիկ ցաւը ճնշում էր նրա սիրտը, կտրտում էր աչքերը ու տարածւում ամբողջ մարմնի մէջ։ Նրա շրթունքները դեռ ևս ցանկանում էին աղօթք շշնջալ, սակայն նա իր միտքը վերջացրեց․․․ գուցէ այնտեղ, միւս աշխարհում։․․․

Քամին խղճաց նրան ու քնքշաբար ծածկեց ձիւնի վերմակով․․․ Ու գնալով մեծանում էր նրանց վրայ ձիւնեղէն գերեզմանաթումբը․․․

Խեղճ կինը սառել էր իւր երեխայի հետ։ Նրանց դուրս են արել խրճիթից, նրանք էլ գիշերով ճանապարհուել են․․․ Միայն հետևեալ օրն են նրանց գտել ձիւնի տակ։

8.

ՄԵԾ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

I

Ես փոքր էի, հազիւ եօթ-ութ տարեկան։ Մի հեռու տեղից հօրս հետ սայլով վերադառնում էինք տուն։

Յիշում եմ՝ երկար, ոլոր-մոլոր ճանապարհ էր, որ մեզանում «Թագաւորական ճանապարհ» էին կոչում, որովհետև իշխանութեան հրամանով պատրաստուած խճուղի

էր։ Մեր սայլը բարձած էր ցորենով և այնքան ծանր էր, որ երկու ուժեղ գոմէշները հազիւ էին քաշում։ Հայրս գնել էր արդեօք այդ ցորենը, թէ փոխ էր վերցրել հեռաւոր բարեկամից, այդ չեմ յիշում։ Երևի, հայրս գոհ էր իր ցորենով, որովհետև սայլի առջևում նստած՝ հանդարտ մռմռում էր մի գեղջկական երգ, մի բան, որ նա անում էր միմիայն այն ժամանակ, երբ գործն աջող էր ու սիրտն ուրախ։

Ճանապարհից ոչ հեռու մի նոր ցանած ցելում կանգնած էր մի ջրւոր՝ *) բահն ուսին դրած. նա ջրում էր իր նոր ցանած արտը և նայում էր դէպի մեզ։ Սարեակները և ագռաւները ահագին երամներով հետևում էին մարգերում հոսող ջրի ընթացքին, հաւաքելով միջատներ։ Աւելի հեռու բարձրանում էր ծխի մի պտոյտ՝ բարակ և ոլորմոլոր. հօտաղներից մէկը կրակ էր արել և, երևի, եփում էր որ և է ամտիք։

Եւ մեր սայլը ճռնչալով գլորւում էր, հա՛ գլորւում, և հայրս ուրախ սրտով շարունակում էր իր երգը։ Այդ ժամին երջանիկ էինք ամենքս՝ և հայրս, և ես, և նոյն մեր գոմէշները, որոնք առանց խարազանի՝ իրանց կամքով հանդարտ քայլում էին որոճալով։

Յանկարծ մեր ետևից լսուեց մի կառքի զանգակի ձայն և դրա հետ միասին մի սպառնալից «խաբարդա՛»։

Հայրս ցնցուեց իւր տեղում, նրա թիկունքն սկսեց ծռմռուել և նա, խարազանով մերթ մէկ, մերթ միւս գոմշի մէջքին խփելով՝ աշխատում էր սայլը հեռացնել ճանապարհից մի կողմ։ Մինչ այդ՝ ես յետ նայեցի։ Քառաձի կառք էր մեզ վրայ վազողը և երկու զինուած ձիաւորներ սրարշաւ քշում էին իրանց ձիերը, մէկը կառքի առաջից և միւսը ետևից։ Ես սարսափեցի․ ես լաւ գիտէի, թէ ինչ խորհուրդ ունի այն կառքը, որին ուղեկ-

---

*) Արտը ջրող։

ցում են զինուած ձիաւորներ, իսկ այդպիսի կառքերից ես այժմ էլ վախենում եմ, ուր մնաց մանկութեանս օրերում։ Փոշու ամպերի մէջ կորած ձիաւորներն ու կառքը մրրիկի պէս մեզ վրայ էին վազում, ասես, խեղդելու համար. ինչպէս կ'ուզէի, որ մեր գոմէշներն այդ ժամին թռչունների արագութեամբ խլէին ու փախցնէին մեր սայլը երկրի երեսից, քանի զարհուրելի կառքը չէր հասել ետեւից։

Երևի, մեզ սպառնացող վտանգը շատ էր ահաւոր, որովհետև ես տեսայ, թէ ինչպէս հեռւում ջրուորը ձեռքերով մի յուսահատական շարժում արեց դէպի հայրս, ճչալով քանի ոյժ ունէր՝ «Ձօ՛ւտ, տունդ քանդուի, շուտ»։ Նրա ձայնից և ձեռքերի շարժումից վախեցած՝ ագռաւներն ու սարեակները մէկէն թռան գետնից, իրար խառնուեցին ահագին կռնչիւնով և մեր գլխի վերև պտոյտներ էին գործում, կարծես, մեր դիակներին սպասելով։ Մի րոպէ թռչունների կռնչոցը, զանգակների ձայնը, կառքի որոտը, ձիերի ոտների դոփիւնը, ձիաւորների սարսափելի «խաբարդան» ու հայհոյանքները իրար խառնուեցին և ես, գլուխս կորցրած՝ էլ չէի հասկանում, թէ մեզ հետ ինչ է կատարւում։

Հօրս նայեցի. նա անխնայ թակում էր գոմէշներին, ոլորւում էր իր տեղում, ճչում, գոռում, ատամները կրճտում, որ հաստամարմին անասունները մի փոքր շուտ շարժուեն, դուրս տանեն սայլը ճանապարհից. սակայն իզո՛ւր, դանդաղաշարժ, հաստակաշի կենդանիների փոյթը չէր. նրանք ոչ ձիաւորներից էին վախենում, ո՛չ կառքից, և մէջքերը դէմ տուած խարազանի հարուածներին շարունակում էին ճանապարհը մի և նոյն քայլուածքով և և միևնոյն գծով։ Մէկ էլ փորձեցի յետ նայել, բայց արդէն ուշ էր. ես տեսայ կառքը մեր սայլի կողքին, տեսայ երկու ձիաւորներին, որոնք իրանց մտրակները շարժելով մօտեցան հօրս, որ կծկուել էր իր տեղում, և էլ

բան չըտեսայ, որովհետև բարձրաձայն ճչացի և գլուխս ծածկեցի ջուալների արանքում, որ չըտեսնեմ, թէ սարսափելի ձիաւորները ինչպէս են սպանում հօրս։

Ես լուրջ հաւատացած էի, թէ որովհետև հայրս չը կարողացաւ իր սայլը ճանապարհի կենտրոնից մի կողմ դարձնել, որովհետև կառապանը ստիպուած եղաւ այդ խորհրդաւոր կառքը ճանապարհի եզրով քշել, ուստի աղան, երևի, բարկացաւ և հրամայեց, որ ձիաւորները հօրս սպանեն... մտածում էի ես. սիրտս ճմլւում էր, ցաւում, որովհետև սպանում էին հարազատ հօրս, իմ խեղճ, իմ բարի հօրը...

II

Եւ այսպէս ես կռացած ծածկել էի աչքերս. ոչինչ չէի տեսնում, բայց լսում էի սարսափելի հարուածների ձայներ և հօրս մեղմ աղերսանքն ու տնքոցը։ «Սպանում են, մտածում էի ես, էլի մի րոպէ, և ամեն ինչ կը վերջանայ»։ Հարուածները բաւական երկար տևեցին. ապա ամեն ինչ լռեց։ «Վերջացաւ, սպանեցին պրծան», մտածեցի ես, առանց համարձակուելու գլուխս բարձրացնել։ Մի րոպէ ես մոռացայ նոյն իսկ, թէ ինչ է կատարւում մեր շուրջը, ուր եմ ես. յետոյ ինձ թուաց, թէ մեր սայլն անտէր-անտիրական մնացել է դաշտում հեռո՜ւ, հեռո՜ւ.... Չըգիտեմ, որքան երկար մնացի այդ դրութեան մէջ, միայն գիտեմ, որ գլուխս բարձրացրի այն ժամանակ, երբ հօրս ձայնը հասաւ ականջիս.

—Վեր կաց, որդի, մի վախենա՛ր, գնացին։

Թւում էր, թէ ես երազի մէջ եմ. նայեցի,—մենք դարձեալ ճանապարհի վրայ էինք, ջրուորն իր տեղումն էր, ծուխը շարունակում էր բարձրանալ ոլոր-մոլոր, թռչուններն իջել էին ցելի վրայ, մեր սայլն իր առաջուայ տեղումն էր, միայն հօրս գլուխը փաթաթուած էր ա-

ըխնոտ թաշկինակով։ Մի փոթորիկ էր անցել մեր գըլխով, և չընայելով դրան՝ ես հօրս նայեցի մի րոպէ և ժպտացի ուրախ սրտով, այո, ուրախ սրտով, որովհետև հայրս կենդանի էր, որովհետև ձիաւորները նրան չէին սպանել. ուրեմն նրանք այնքան էլ չար չէին, ինչքան ես կարծում էի, մտածեցի ես, գթացել են և չեն սպանել հօրս. որ ուզէին, կը սպանէին, ո՞վ էր նրանց ձեռքը բռնողը. միայն ծեծել են, և շատ են ծեծել. էհ ինչ անենք, ո՞ւմ չեն ծեծում. մեր գիւղում ոչսը ճիպոտ ունի, որի ծայրից արիւն է կաթում, տանուտէրը խօմ Աստուած փրկէ։ Այսպէս էի մտածում ես և ուրախանում հօրս համար, որ, կարծես, խեղդուելուց հրաշքով ազատուել էր։

Հայրս ցած իջաւ սայլից և գնաց դէպի առուակը. ես էլ հետևեցի նրան. ջրուորը դանդաղութեամբ մօտեցաւ մեզ և բահի վրայ յենուած կանգնեց առուակի միւս ափին մեր դիմաց։ Հայրս ու նա նայեցին իրար լռութեամբ։

—Օրն երթայ՝ չարը հետը, ասաց ջրուորը։

—Օրը գնաց՝ չարը մնաց, պատասխանեց հայրս։

—Անաստուածները գլուխդ պատռել են։

—Հա՛, պատռեցին, էհ ինչ անենք, այսքանով էլ պըծայ, լաւ է. չէ՞ որ կարող էին աւելին անել. մեր գլուխն էլ, գիտես, հաստ է, կը դիմանանք։

—Տնա՛շէն, քանի ճչացի, որ շուտ հեռանաս ճանապարհից։

—Ախր ինչ անեմ, ախպէր, սատկած գոմէշները չը շարժուեցին, ինչքան ծեծեցի։

Կրկին լռութիւն տիրեց. հայրս մի քանի բուռը ջուր վերցրեց և ագահութեամբ խմեց. նոր զգացի, որ ես էլ ծարաւ եմ. հօրս օրինակին հետևեցի։

—Երեսդ էլ լուա, բարեկամ, ասաց ջրուորը, այդպէս լաւ չէ, որ տուն գնաս, արիւնոտ է։ Հօրս ձախ այ-

տը ամբողջապէս պատած էր արիւնով, նա ձեռքով շօշափեց, նայեց կարմրած մատներին, մի բան մռմռաց ատամների արանքից և կռացաւ ջրի վրայ, երեսն էր լուանում։ Ջուրը կարմրեց և արիւնոտ կոհակները գլորւում էին դէպի արտը։

—Վա՛յ, վա՛յ, արտն արիւնով է ջրւում, ճչացի ես։

—Արիւն և քրտինք, մռմռաց ջրուորը, բահն ուսին դնելով։

Երբ մենք սայլի վրայ էինք, գոմէշները վերսկսեցին իրանց դանդաղ ընթացքը, անիւները գլորւում էին այս անգամ ցաւոտ ճռնչիւն բարձրացնելով, իսկ հայրս լուռ էր և մտախոհ։ Նա էլ չէր երգում։

Աւ. Ահարոնեանց

9.

ԵՐԵԽԱՆԵՐԸ

I

Ցուրտ ձմեռուայ մի առաւօտ մեծ քաղաքի զառիվայր փողոցից դանդաղ բարձրանում էր մի վեց-եօթ տարեկան երեխայ։ Նա կրում էր իր մէջքին մի փոքրիկ կողով, որ պէտք է լիքը և ծանր լինէր, որովհետև մանուկը անդադար սայթաքում էր սառած ձեան կոկ մակերևոյթի վրայ և հազիւ քայլում էր։

Նա մեծ քաղաքի բանուոր ծնողների զաւակ էր. նրան ծանօթ չէին հայրական յարկի, սեփական պարտէզի հետ կապուած քաղցր յիշողութիւնները։ Մանուկը գիտէր, որ այն տունը, ուր իրանք ապրում են այժմ, ուրիշինն է, բայց նա այդ մասին քիչ էր մտածում, մի-

այն թէ կարողանար շուտ համնել, ազատուել այս անտանելի ցրտից։

Եւ նա շտապում էր, որքան կարող էր, բայց նրա քայլուածքը դժուարացնում էին ցուրտը, ձիւնը և մանաւանդ կօշիկները, որոնք չափազանց մեծ էին նրա փոքրիկ ոտների համար, և խեղճ երեխան հազիւ էր քաշ տալիս հին կաշուի և մեխերի այդ բեռը։ Այդ էլ վնաս չունէր, բայց մի կօշիկի կողքը պատառուած էր և ամեն անգամ, երբ մանուկն այն ոտքն առաջ էր ձգում, փոքրիկ թաթի բթամատը դուրս էր սողում այդ բացուածքից, քսւում էր ձեանը և կրկին ծածկւում, ինչպէս մի վախեցած սողուն, որ գլուխը դուրս է հանում բնից և վտանգ զգալով ներս քաշւում կրկին։ Հօր կօշիկներն էին, որոնք ամբողջ տարիներ քաշ էին եկել բանւորի տանջուած ոտներից։ Մի քանի շաբաթ առաջ, երբ նա, հագնելով առաջին անգամ այդ կօշիկները՝ փորձեց քայլել և ընկաւ ահագին աղմուկով, նա ցաւով նայեց իր ոտներին, և նրա փոքրիկ գլուխը չէր կարողանում հասկանալ, թէ ինչին են հարկաւոր այդքան մեծ կօշիկները, այդքան ծանր, այդքան չոր։

—Մայրիկ, ախր ուրիշներինը փոքր են ու թեթև։

—Մենք չունենք, զաւակս,—եղաւ պատասխանը։

Մայրն ասաց՝ մենք չունենք, ուրեմն պէտք էր հագնել, պէտք էր քաշ տալ այդ բեռը։ Այսօր երեխան դարձեալ ցաւով էր նայում իր ոտներին, բայց էլ չէր զարմանում կօշիկների ծանրութեան, տգեղութեան վրայ. նա այդ դժուարութեանը սովորել էր արդէն, կուզէր միայն, որ իր փոքրիկ վտիտ մատը դուրս չըգար այն պատառուածքից, և աշխատում էր այնպէս քայլել, որ մատը չը բացուի, ձեանը չըքսուի, բայց այդ նրան չէր աջողւում և ցուրտը կամաց-կամաց ընկճում էր նրան, փոքրիկ, կծկուած մարմինը դողդողում էր, խղճուկ ոտներն ու ձեռները կապտել էին։

—Երեխան քայլում էր և մտածում. նրա մէջքի փոքրիկ կողովն էլ, ինչպէս նրա կօշիկները, իր փոքրիկ պատմութիւնն ունէր։ Այդ պատմութիւնը այժմ անցնում էր նրա գլխով իր բոլոր մանրամասնութեամբ։ Ձմեռուան սկզբից քոյրն էր նրանով հէնց այս ժամին քարածուխ բերում, վառարանը վառում։ Խեղճ քոյր. եղբայրը երբ առաւօտեան զարթնելիս՝ շտապով հաւաքում էր իր զգեստները, վազում էր դէպի վառարանը և այնտեղ կրակի առաջ կծկուած հագնւում էր, նրա մտքովն անգամ չէր անցնում, թէ այսքան դժուարութեամբ է ձեռք բերւում ածուխը, թէ այդ հիւանդոտ, միշտ հազացող աղջիկը այսքան ցուրտ է քաշում։ Եւ այդ քոյրը մեռաւ։ Մի առաւօտ, երբ ինքը զարթնեց, քոյրն անշարժ պառկած էր անկողնում. հայրը չէր երեւում,—մայրը կամացուկ լալիս էր, փոքրիկ կողովը դատարկ էր, և վառարանը չէր վառւում։ Երեխան լաւ յիշում է, որ այդ օրը զարթնելուց յետոյ ինքը շատ մրսեց, երբ շորերը հագնում էր. նա ամենևին չէր հասկանում, թէ վառարանի կրակը այդպէս դժուար է ձեռք բերւում։

Քրոջ մահից յետոյ մայրն էր գնում ածուխ բերելու. նրա մտքովն անգամ չէր անցնում, թէ այդ կողովը վերջիվերջոյ իր մէջքին կը նստի։ Բայց երէկ առաւօտ նա զարթնեց և մօրը գտաւ հիւանդ պառկած, կողքին մի փոքրիկ երեխայ, որ, չըգիտես ինչու, ճչում էր անդադար. սենեակը դարձեալ ցուրտ էր, վառարանը սառը։ Նա շորերը հագաւ դողդողալով։ Մայրն ասաց, որ ինքը հիւանդ է, որ այս պստիկը մի նոր քոյրիկ է, գիշերն ընկել է երկնքից, որ այդ իր մեռած քոյրն է ուղարկել, որ մեծանայ, նրա փոխարէն գնայ, ածուխ բերի։

—Իսկ մինչև այդ,—ասաց մայրը,—դու պէտք է գնաս ածուխ բերես։

—Մայրիկ, շո՜ւտ կը մեծանայ իմ քոյրիկը։

—Հա՛, որդի, շուտ կը մեծանայ, որ սենեակը տաք լինի, շատ շուտ կը մեծանայ։

Յետոյ մայրն աւելացրեց, որ իր տղան խելօք է, քաջ տղայ է, որ նա կը լսի իր մօրը և իսկոյն կ'երթայ ածուխի. նա խօմ ճանաչում է ածխավաճառի խանութը։

Եւ այսպիսով՝ փոքրիկ կողովը յայտնուեց նրա մէջքին։ Ահա այս էր մտածում երեխան, երբ բարձրանում էր ձիւնոտ զառիվայրով։ Ցուրտ էր, բեռը ծանր, ոտների տակ ձիւնը ճռճռում էր, աջ ձեռքը, որով բռնել էր կողովի պարանը, սաստիկ կապտել էր. նա դուրս հանեց գրպանից ձախ ձեռքը, բռնեց պարանը և սկսեց փչել սառած ձեռքը տաքացնելու համար, բայց նրա խղճուկ շունչն էլ այնքան տաք չէր, ջանքերն իզուր անցան։

Վիճակը քանի գնում վատանում էր, բայց մայրն ասաց, որ նա խելօք, քաջ տղայ է, նա չի վախենայ ցրտից և կերթայ ածուխի։ Այո՛, նա չի վախենում ցրտից, բայց ոտի բաց մատը շատ է մրմռքում, աջ ձեռքը շատ է կսկծում, գոնէ շուտ բարձրանար և ազատուէր զառիվայրից, այնուհետ հեշտ է։ Շրթունքները դողդողացին, նա չի ուզում լաց լինել, մայրն ասաց, որ նա քաջ է, այդ միայն ցրտից են դողդողում, ահա նա ներքևի շրթունքը ներս քաշեց և ատամների շարքի մէջ սղմեց. էլ չի դողայ։ Նա բարձրանում է. Տէր Աստուած, այս որքան երկար է ձիւնոտ զառիվայրը. վերելքը վերջ չունի. այս անգամ աչքերը թացացան և միայն երկու կաթիլ, աչքերի երկու խորշերից, քաշ ընկան, մնացին. այդ էլ ցուրտն է, մտածեց երեխան, և թևով սրբեց ու առաջ քայլեց։

II

Հազիւ զառիվայրի կատարին հասած, անց ու դարձից կոկուած ձեան վրայ ոտքը սայթաքեց, նա ընկաւ

ծնկների վրայ, թէև իսկոյն վերկացաւ, բայց աչքերից արցունքները կաթիլ-կաթիլ թափուեցին և նա այս անգամ բարձրաձայն հեկեկաց։ Հէնց նոյն րոպէին զառիվայրի վրայ յայտնուեց մի ուրիշ երեխայ. նա էլ մի բան ունէր ձեռքին, մի փոքրիկ, կոկիկ սահնակ, որով մանուկները ձմեռ ժամանակ սահում են ձիւների վրայ զառիվեր փողոցներում։ Հարուստ ծնողների մի բաղդաւոր երեխայ էր, ձեռներին ունէր բրդեայ տաք ձեռնոցներ, ոտներին՝ փոքրիկ սիրուն կօշիկներ ռետինէ կրկնակօշիկների մէջ, վրան՝ հաստ տաքուկ վերարկու։ Նա վազելով, ուրախաձայն աղաղակներով դուրս թռաւ հարևան տնից, բայց տեսնելով այս երեխային, որ կողովի տակ կռացած արտասւում էր, կանգ առաւ ինչպէս քարացած։

Նրանք երկար նայեցին իրար. երջանիկ, հարուստ երեխան տեսնում էր այդ կեղտոտ, գզգզուած երեխայի մէջ մի փոքրիկ գազան, որ կարող էր գուցէ կծել. իսկ արտասւող երեխան նայում էր առաջինին և զարմանում էր, որ օրուայ միևնոյն ժամին, միևնոյն զառիվայրի վրայ, միևնոյն ցրտի տակ ճիշդ իր հասակակից մի երեխայ կողով չունի, չէ մրսում, որ նրա ոտքի մատը դուրս չէ գալիս կօշիկի ծակից, որ նա չէ սայթաքում, չէ դողում, չէ լալիս։

Ամենից ծանրը, ամենից անտանելին դարձեալ իր կօշիկներն էին. մանուկը նկատեց, որ իր բաղդաւոր հակառակորդը զարմացած հէնց իր ահագին կօշիկներին է նայում, ինքն էլ աչքի տակով նրա ոտներին նայեց. Նրա կօշիկները որքան փոքր էին, որքան սիրուն։ Խեղճ... Նա երբէք այդպէս ցաւ չէր զգացել. նոյն իսկ առաջին օրը, երբ նա ընկաւ երեսի վրայ, նրա վիշտն այս աստիճան մեծ չեղաւ, որքան այսօր։ Օ՜, ինչպէս կ'ուզէր նա փոքրիկ կօշիկ ունենալ այս ժամին։ Հապա մի կօշիկի այդ պատառուածքը... Գոնէ այդ չլինէր, մտածեց երեխան, բայց հէնց նոյն վայրկեանին անսպասելի կեր-

պով, կարծես դիտմամբ, կապտած մատը դուրս ցցուեց. նա զգուշութեամբ ներս քաշեց և շարունակեց նայել դիմացինին։

Երկար ժամանակ լուռ էին նրանք։ Առաջինը խօսեց բախտաւոր երեխան։

—Է՜յ, բլօճ, ինչո՞ւ ես լալիս։

—Ցուրտ է... էլ չեմ լալիս,—շտապեց աւելացնել երկրորդը, ամաչելով իր թուլութիւնից իր հասակակցի առաջ։ Մայրն ասել էր, որ նա քաջ է։

—Ցո՞ւրտ է, հէչ *) էլ ցուրտ չէ... ես չեմ մրսում,—վրայ բերեց առաջինը յոխորտանքով։

—Նրանք կրկին լռեցին, կրկին նայում էին իրար, ոտից գլուխ չափելով։

—Ինչո՞ւ ես տանում ածուխը։

—Քոյրս մեռաւ, մայրս հիւանդ է, տանում եմ, որ պստիկ քոյրս տաքանայ, մեծանայ, յետոյ նա կ'երթայ ածուխի։

—Մեր ծառան է բերում։ Գիտե՞ս, ես այստեղից դէպի ներքև այնպէս սլլում եմ, որ դու խսկի չես կարող բռնել։

Նա մի դառն հայեացք ձգեց իր հակառակորդի վրայ և առաջ շարժուեց։ Հազիւ մի քանի քայլ արած՝ նա յանկարծ զգաց իր գլխին ձնագնդի մի սաստիկ հարուած. ցաւը խիստ էր, բայց նա էլ չարտասուեց, այլ նեղացած յետ դարձաւ։ Իր խօսակիցն էր խփողը, որ իր սահնակի վրայ նստած՝ սլանում էր դէպի ներքև, յետ յետ նայելով և հռհռալով։

Վշտացած մանուկը վճռեց վազել, բռնել նրան, մի քանի հարուած տալ գլխին, որ նա էլ լաց լինի, արցունք թափի իր պէս։ Սահնակը շատ արագ էր իջում, իր կօշիկները շատ էին ծանր, շատ էին մեծ, մէջքի բեռն էլ

*) Բոլորովին։

ճնշում էր, ճնշում. ահագին կօշիկները ճռճռացին ձեան վրայ, նա կրկին սայթաքեց և այս անգամ այնպիսի ոյժով փռուեց գետին, որ կողովը շուռ եկաւ, ածուխը թափուեց, դէմքը թաղուեց ձեան մէջ, քիթն արնեց, առաջի ատամները խրուեցին շրթունքների մէջ. հակառակորդին բռնելու հնար չըկար. նա սղմեց իր բռունցքը, բարձրացրեց օդի մէջ վեր վեր և ճչաց սպառնալի ձայնով.

—Սպասիր, մենք էլի կը պատահենք։

Նրանք հեռու չեն ապրում իրարից, անշուշտ էլի կը պատահեն։

Աւ. Ահարոնեանց

10.

Լ Ե Ռ Ն Ե Ր Ո Ւ Մ

Երկու ընկեր էինք և գնում էինք սարերով, ձորերով. մի և նոյն հոգսն էր մեզ երկուսիս էլ միաժամանակ մեր յարկերի տակից դուրս շպրտել։ Այդ վնաս չունէր, գոնէ ճանապարհն ապահով լինէր։

—Ախ մեր լեռները, հեռուից նայում ես՝ կապոյտ, ալիքաւոր բարձրութիւններ, խորհրդաւոր ու սիրուն, որ կարծես թարթում են ու գրաւում քեզ իրանց ծոցը. մօտենում ես, թաղւում ես ձորերում, կիրճերում։ Լուռ սարսափը պատում է կուրծքդ ու խեղդում։ Ասում են լեռներում մարդ հեշտ ու ազատ է շնչում։ Այստեղ կարծես օդ չըկայ։

—Օդ կայ, թէ չըկայ, այդ մի և նոյն է, պէտք է անցնենք, լաւ է լուռ կաց և ձիուդ զօր տուր շուտ անցնենք, դատողութեան ժամանակ չէ։

Ես լուռ կացայ, ընկերս իրաւունք ունէր, բայց ձիս այն օրին չէր, որ զօր տալով բան դուրս գար. դեռ նրա բանը լաւ էր, հոնի մի կարճ փայտ ձեռքին էր, անդադար զարկում էր իր ձիու կողերին և առաջ ընկնում: Իմը՝ մի ողորմելի, լղար կենդանի, ասպանդակների պատճառած ցաւը տանում էր, բայց ընթացքը չէր փոխում, ես չարչարում էի նրան, նա չարչարում էր ինձ: Եւ գնում էինք, ճար չըկար:—Մեր մի կողմում բարձրանում էր Չարսալայ սարը և միւս կողմում Թաքեալթուն. երկսի ոտների տակ բլուրներ ու ձորեր, մութ կիրճեր ու ժայռեր, մացառներ ու աղբիւրներ, և մեր ճանապարհը օձապտոյտ:

Կէս օր էր և դեռ մենք որքան պիտի գնայինք՝ վտանգաւոր տեղերից ազատուելու համար:

—Անիծուած Բարդողեան շղթայ. տեսնես ուրիշ աշխարհում էլ այսպիսի սարեր կա՞ն:

—Սիրուն սարեր են:

—Սիրուն են, թո՛ղ հիմայ մի խումբ գլուխ կտրողներ առաջներս դուրս գան, նոր կ՚իմանաս սիրուն են՝ թէ չէ: Էլի նրանք սիրուն կը մնան, սարն ինչ անի, որ ես և դու հիմայ այստեղ իրար մորթենք:

Ես լռեցի. նա դարձեալ իրաւունք ունէր. անտառն ինչ անի, որ այնտեղ գազաններ են բոյն դնում:

—Տեսնո՞ւմ ես այն սև մեծ ժայռը մեզանից դէպի ձախ, ասաց ընկերս:

—Տեսնում եմ:

—Անունը գիտե՞ս:—Ո՛չ:—Նա կոչւում է Կոկորդ-կտրող:—Ինչո՞ւ:

—Որովհետև շատ ինձ ու քեզ նման ողորմելիներ գլուխները թաղել են այնտեղ:

—Անիծուած ժայռ:

—Ժայռը մեղաւոր չէ. մեզ էլ կարող են սպանել, բայց այդ ժայռը կը մնայ օրհնուած:

Ընկերս դարձեալ իրաւունք ունէր. ես գլուխս քաշ ձգեցի, մի պահ լուռ կացայ, մտածմունքի մէջ ընկղմած:

—Որ այդպէս է, ինչո՞ւ այստեղից եկանք. չէ՞ որ դու ճանաչում ես այս լեռների բոլոր անկիւնները:

—Ուրիշ ճանապարհ չըկայ. բայց ապահով եղիր, ցերեկով այս տեղերում վտանգը միշտ մեծ չէ. դէ, ցաւի տէր ենք, պիտի անցնենք. մարդ էլ պատահի մեր ինչը տանի:

—Զէնք էլ չունենք:

Նա յետ նայեց մեզ ժպտալով. «զէնքով ինչ կ՚անէիր:

—Ի՞նչ կ՚անէի, ես ինչ գիտեմ, դէ վտանգաւոր սարերում անզէն լաւ չէ, գոնէ մի խէնջար:

—Տանը խէնջար ունէի՞ր:—Չէ:—Երբ և իցէ ունեցե՞լ ես:

—Չէ, բայց կարելի էր ճարել:

—Ճարած խէնջարով բան չի դուրս գայ. ձիուդ զօր տուր, դու էլի յետ մնացիր:

Ես սկսում էի բարկանալ. ձիս չէր գնում. չորս կողմերս սարսափելի էր, իսկ նա քշում էր առաջ այնպէս հանգիստ, կարծես Կոկորդ-կտրող ժայռն առաջներս չը լինէր: Միթէ նա էլ չի վախենում ինձ պէս, էլ ինչ կարիք կայ ինձ մօտ քաջ ձևանալ, մտածում էի ես՝ նայելով նրա օրօրուող թիկունքին, նրա կարճ մահակին, որով անդադար խթում էր ձիու կողերը: Նրա ձին էլ մի բան չէր, բայց էլի իմից լաւ էր: Մտքովս մի բան անցաւ, գնամ ասեմ, դէ որ դու այդպէս քաջ ես, արի ձիերս փոխենք, և դու յետևիցս գնա, ես առաջից. ես յետևից վախենում եմ:

—Լսի՞ր:

—Էլի ինչ կայ. նա յետ նայեց... տեսայ այդ պարզախաղաղ դէմքը և ամաչեցի մտածածս յայտնել:

—Կեցցե՛ր ես հասնեմ քեզ, գուցէ ձիս այդպէս լաւ գնայ քոնի հետ կողք-կողքի։

Նա կանգ առաւ։ Ես հասայ։ Վրաս նայեց փորձող հայեացքով։

—Դու շա՛տ ես վախենում։

—Ի՞նչ կայ չվախենալու. այս ժայռը, այս սարերը։

—Դու հաւատո՞ւմ ես բաղդին։—Ի հարկէ։

—Եթէ հաւատում ես, էլ ինչո՞ւ ես վախենում. ինչ գրուած է, այն էլ կը կատարուի։

—Իրաւունք ունես, բայց վախենում եմ։

Ես լռեցի և սկսեցի մտածել նրա ասածի մասին. ճիշդ որ, թէ մարդ իր ճակատագրից ազատուել չի կարող, ինչո՞ւ եմ վախենում։

—Դէ դու ասա՛, ինչո՞ւ եմ վախենում։

—Ինչո՞ւ ես վախենում, ասաց նա դանդաղութեամբ. երևի նրա համար, որ չես իմանում, արդեօ՞ք ճակատագրիդ գրուածն է կատարւում, թէ՞ չգրուածը։

—Ես չեմ հասկանում, դու միշտ...

Վ՜զզ.... Մի գնդակ էր, որ Կոկորդ-կտրող ժայռի կողմից եկաւ ու անցաւ մեր գլխի վրայով։ Վ՜զզ..., անցաւ երկրորդը։

—Հիմայ հասկացա՞ր։

Ես էլ սիրտ չունէի նրան հասկանալու. սարսափած նայեցի դէպի ժայռի կողմը և տեսայ, թէ ինչպէս վեր ցցուեց նախ մի մարդու պատկեր, ապա երկրորդը։

Քիւրդ աւազակներ էին։

Կանգ առէ՛ք, հրամայեցին նրանք մի զոյգ հրացանի փողեր մեզ ուղղած։

Մենք կանգ առանք. ճար չըկար։

—Ցած իջէ՛ք ձիերից, լսուեց երկրորդ հրամանը։

Ընկերս մի րոպէ մնաց մտազբաղ։ Տեսնես քանի հոգի՞ են, ասաց նա կամացուկ։

—Երկու են, ես լաւ տեսնում եմ. դրանից մեզ ինչ

օգուտ. մի հոգի էլ լինէր, այդ հրացանով մեզ...։ —Դու էլի սկսեցիր։

—Ցած իջէ՛ք, թէ չէ... լսուեց նոյն հրամանն աւելի խիստ կերպով։ Մենք ցած իջանք։

—Այժմ թողէ՛ք ձիերը և հեռացէ՛ք դէպի մի կողմ։

—Ձիդ թող և հեռացի՛ր, ասաց ինձ ընկերս կամացուկ։—Իսկ դո՞ւ...

—Թո՛ղ ասում եմ։

Նա ինձ երբէք այդպէս խիստ չէր հրամայել. թւում էր, եթէ էլի մի բառ ասեմ, ինձ կը խեղդի տեղն ու տեղը։ Ես հնազանդուեցի։

Ընկերս իր ձիու սանձից բռնած մի քանի քայլ առաջացաւ դէպի աւազակները.

—Նայեցէ՛ք, ասաց, ես բոլորովին անզէն եմ. այս ձին կատաղի է. եթէ թողնեմ, կը փախչի, ինչպէս մըրրիկ, և ոչ ձեզ բաժին կը լինի, ոչ էլ մեզ՝ ափսոս է. ցած եկէ՛ք ու տարէ՛ք. մեզ էլ թողէ՛ք մեր ճանապարհը ոտքով շարունակենք։ Խեղճ մարդիկ ենք, ինչպէս տեսնում էք, մեր ցաւի համար չօլերն ենք ընկել։

Ես նայում էի և չէի հասկանում, թէ ինչ է միտքը, քանի որ լաւ գիտէի, որ այդ ձիու կողերը մահակով էլ ջարդես, դարձեալ փախչողը չէ, իսկ ինչո՞ւ չի ձգում, որ մենք թողնենք ու գլուխ առնենք կորչենք շուտով։

Աւազակները մի երկու րոպէ իրար հետ խորհրդակցեցին և ապա, հրացանները մեզ վրայ բռնած՝ ցած իջան ժայռից և առաջացան դէպի ընկերս, որ հանգիստ կանգնած սպասում էր նրանց։ Ահա նրանք բոլորովին մօտեցան, աներկիւղ և վստահօրէն։ Ընկերս շարունակում էր կանգնել անշարժ և հանգիստ։ Ահա նրանցից առաջինը ձեռքը մեկնեց՝ ընկերոջս ձեռքից ձիու սանձը բռնելու։ Ես նայում էի սրտատրոփ։ Մէկ էլ յանկարծ ընկերս ազատ ձեռքը բարձրացրեց և հոնի փայտով արագութեամբ մի ծանր հարուած իջեցրեց քիւրդի մեկ-

նուած ձեռքի դաստակին ու փշուր-փշուր աշեց, սառ ցաւից մռնչաց, կծկուեց ու թեր բռնած գետին ընկաւ. համարեա մի և նոյն վայրկեանին փայտի երկրորդ հարուածը իջաւ միւս քիւրդի գագաթին, որ նոյնպէս գլորուեց գետին, հրացանը ձեռքից թողնելով։

—Վազի՛ր, ճըչաց ընկերս։ Ես մօտեցայ։ Մի վայրկեան յետոյ երկու աւազակները զինաթափ և կապոտուած՝ մեր ոտների առաջն էին։ Ես աչքերիս չէի հաւատում։

—Մի քիչ ջուր թափիր այս ուշաթափուած քիւրդի երեսին, թող ուշքի գայ։

Հրամանը կատարեցի, ինչպէս ստրուկ։ Թակարդում բռնուած գազանների պէս այս երկու քիւրդերը ընկած էին կանաչի վրայ և պուշ-պուշ նայում էին մեզ։ Նրանք շշմել էին անսպասելի դէպքից։

Ես նրանցից պակաս շփոթուած չէի. նայում էի և չէի հասկանում, թէ ինչ գործ ունեն այդ երկու գազանները մեր ճանապարհի վրայ, այն աստիճան արագ կատարուեց այդ բոլորը։

—Ջո՛ւր, մրմնջաց ջարդուած բազկի տէրը առանց մեզ նայելու, կարծես ուրիշից էր սպասում մի քանի կաթիլ ջուր։

—Ջուր տուր սրան, ասաց ընկերս։ Ես վազեցի մօտակայ աղբիւրը, գլխարկիս մէջ մի փոքր ջուր ածեցի և բերի։ Պապակած քիւրդը խմեց, բայց շարունակում էր տնքալ ցաւից։

—Քեզ շա՜տ է ցաւում, հարցրեց ընկերս։

Վիրաւորուած քիւրդը նայեց նրա աչքերի մէջ, մի բան մռմռաց և գլուխը քաշ ձգեց, հարցը թողնելով անպատասխան։

—Ինչո՞ւ չես պատասխանում։

—Քեզ ինչ թէ ցաւում է։

—Ինձ ինչ թէ ցաւո՞ւմ է, ուզում էի կապել։

Քիւրդը հեգնաբար նայեց նրան, չէր հաւատում թըշնամու խօսքերի անկեղծութեանը։

—Կապի՛ր սրա թեը, դարձաւ ինձ ընկերս։ Ես մօտեցայ, պատռեցի քիւրդի շորերի մի մասը, վիրակապ շինեցի և պատեցի փշրուած բազուկը։ Միւս ընկերը շարունակում էր նայել գազանի վայրենի աչքերով և կարծես ոչինչ չէր հասկանում։

—Ինչո՞ւ չէք սպանում մեզ, ասաց նա յանկարծ։

Ընկերս ժպտաց.

—Դուք մեր տեղը լինէիք, կը սպանէիք։

—Անպատճառ։

—Ինչո՞ւ էք սպանում անմեղներին։

—Ես ինչ գիտեմ։

—Մենք ձեզ չենք սպանի։

—Հապա ինչ կ՚անէք։

—Մի բան կ՚անենք։ Վեր կաց, սիրելիս, հեծնենք ձիերը, արևն արդէն թեքուեց, իսկ մենք շատ ճանապարհ ունենք։

—Իսկ սրա՞նք։

Պատասխանի փոխարէն ընկերս արձակեց անզէն գերիներին։

—Գնացէք, ասաց նա։

Քիւրդերը վերկացան իրար բռնած, օրօրուելով գնացին նորէն դէպի Կոկորդ-կտրող սարը, իսկ մենք վերցրինք նրանց զէնքերը, թռանք ձիերի մէջքին և քշեցինք-անցանք վտանգաւոր վայրերից։

—Ասա՛ այժմ, սիրելիս, գրուա՞ծը կատարուեց, թէ հոգրուա՞ծը։

—Չը գիտեմ, պատասխանեցի, բայց ընկերս դարձաւ իմ աչքում մի հսկայ, որ, կարծես, իր ձեռքում տանում էր իմ բաղդը, և այդ բաղդին էլ ոչ մի վտանգ չէր սպառնում...

Ա. Ահարոն անց

11.

ԱՂԲԻՒՐ

Գաղթականների խումբը, թշնամուց փախչելով՝ մէկ ամայի տեղ հաստատեց իր բնակութիւնը։ Ժամանակը գարնանային էր. շուտ-շուտ տեղացող անձրևների պատճառով գաղթականները ուշադրութիւն չըդարձրին այն հանգամանքի վրայ, որ նրանց բնակութեան մօտերքը ոչ գետ կար, ոչ աղբիւր։ Գաղթականներից մէկը, որ աւելի հեռատես էր, առաջինը ուշ դարձրեց այդ ձախողակ բանին, և իր բռնած տեղի վրայ սկսեց ջրհոր փորել. Նրա միամիտ ընկերները, որովհետև ազատ ժամանակ ունէին, սրտանց օգնում էին նրան։ Հազիւ թէ բահը մի քանի անգամ գետնին զարկեցին, ո՛վ հրաշք, խցուած աղբիւրի ակը բացուեց և մէջից սկսեց ջուրը առատօրէն բղխել։ Ծէրը—Նրա անունը Հազա էր—շատ ուրախացաւ. Նրա հետ միասին ուրախ էին նրա միամիտ ընկերները՝ Աստուծոյ այս անակնկալ ողորմութեանը, որ շնորհել էր նա իրենց դրայուն. Նրանք վստահ էին, որ երկնքի անձրևը տարին տասներկու ամիս նոցանից անպակաս պիտի լինի, բայց եթէ երբեմն ջրի պակասութիւն էլ լինէր, նրանք երկիւղ ունենալու չէին, որովհետև նրանց դրացին ունէր առատ աղբիւր, որի ջրից անշուշտ նա մասն պիտի հանէր կարօտեալներին, մանաւանդ որ—նրանք այդպէս էին կարծում—այդքան ջուր նա երբէք չի կարողանալու սպառեցնել և նրա պէտքից միշտ պիտի աւելանար։ Թէև նրանց առողջ դատողութիւնը այդպէս էր կարծել տալիս նրանց, բայց Հազայի կարծիքը բոլորովին ուրիշ տեսակ էր։ Իսկ աղբիւրի ջուրը շարունակ վազում էր գնում։

Դաշտերը վարուեցին և ցանուեցին. անձրևները շա-

ռունակ գալով և արեգակն էլ իր ջերմութիւնը տարածելով դաշտերի երեսին՝ սերմերը ծլեցին և բոյսերը կանանչեցին ու մի քանի ժամանակից ցորենի հասկերը մէկ թիզ բարձրացան գետնից։ Եղանակը փոխուեց. առաւօտից մինչև երեկոյ անընդհատ պարզ էր երկինքը։ Արևը աւելի էր սաստկացնում իր ջերմութիւնը. արևելքից չոր քամիները փչելով՝ սկսան դեղնացնել ցորենի բոյսը։ Աղբիւրի տէրը անհոգ էր. նա ջուրը տարաւ և ջրեց իր արտը և նրա ցորենը ապահով մնաց երաշտից։ Միւս գաղթականները՝ տեսնելով ջրի այդպիսի բարերար զօրութիւնը, նոյնպէս ուզում էին ջրել իրենց արտերը, բայց Հազան նրանց առջև պայման դրեց, ասելով. «Եթէ ինձ օգնէք ջրաղացը շինելու, այն ժամանակ ո՛չ միայն կը տամ ձեզ ջուր, այլ և շինելիք ջրաղացըս ամառուայ մէջ ձեր ցորենը կ՚աղայ և ալիւր կ՚անէ»։

Գաղթականները տեսան, որ իրաւ է նրա ասածը, որ ջրաղացը պէտք է. ուստի ուրախ-ուրախ սկսան ջրաղացը շինել և նրանց աշխատանքի փոխարէն, Հազան թոյլ տուեց նրանց արտերը ջրելու։ Ամառուայ մէջն էր. հասան ցորենները։ Երբ գաղթականները հասկերը հնձեցին, կալ տարան կամնեցին ու ցորեն ստացան, եկան, Հազային ասացին. «Տուր ջրաղացդ ցորեններս աղանք»։ Հազան ասաց. «Իմ բնակարանիս շուրջը շինեցէք քարէ ամուր պատ, այն ժամանակ ես կը թողնեմ ջրաղացքիս մէջ ձեր ցորենը աղաք»։ Նրա տան չորս կողմը հաստ ու բարձր քարէ պատեր ու ամուր դռներ շինուեցին, և գաղթականները աղացին իրենց առաջին հունձի ցորենը։ Ձմեռը անցաւ, գարունը եկաւ. գաղթականները նորից վարուցանք ելան։ Հազան նրանց ասաց. «Վարեցէք, ցանեցէք, հնձեցէք իմ արտերը, ապա թէ ո՛չ՝ չեմ տալ ձեզ ոչ արտերդ ջրելու ջուրս և ոչ ցորեններդ աղալու ջրաղացքս»։ Գաղթականները միտք արին, և յօժարեցան նրա պահանջը կատարելու. վարեցին, ցանեցին և հնձեցին

նրա արտերը. իսկ ինքը Հագան ոչ միայն անաշխատ էր, այլ և գլխների վրայ պտուտ գալով՝ սաստիկ հրամաններ էր տալիս նրանց, առանց թագի թագաւոր էր նրանց վրայ։ Փոքր ինչ ժամանակ անցնելուց յետոյ, ասաց Հագան. «Արտերիս վրայ աշխատելու համար ամառները աղբիւրիցս ջուր էք առնում, բայց ինչ վարձատրութիւն պիտի տաք ինձ տարուայ ուրիշ եղանակներին ջուրս առնելու համար։ Ահա ձեզ վրայ հարկ եմ դնում. ամեն մէկ կուժ ջրին այսքան բուռ (ափ) ցորեն պիտի հատուցանէք ինձ. ապա թէ ո՛չ՝ ջուր չըկայ ձեզ»։ Եւ փորեց իւր բակի մէջ ահագին պրգայ և աղբիւրի ջուրը այնտեղ վազեցրեց։

Գաղթականները անջուր մնացին։ Ջուրը մարդուս ամեն օր պէտք է խմելու, լուացուելու, կերակուր եփելու, ձի ու տաւար ջրելու. գիւղացիները ամեն օր իրենց պէտք ջրի համար տանում էին իրենց ցորենը և տալիս Հագային, լցնում էին նրա ամբարները և բերաններից հացը կտրում էին։ Քանի որ Հագայի տունը շէնանում էր, նրա դրացիները աղքատանում էին, և որքան դրացիների վիճակը դառնանում էր, այնքան Հագան իրան երջանիկ էր համարում, որովհետև նա այն անգութ մարդկանցից էր, որոնց սրտի ուրախութիւնը բազմանում է ընկերների տխրութիւնից և թշուառութիւնից։

«Ո՜վ մարդ, ասում էին նրան դրացիները, Աստուած իւր առատ աջովը օրհնել է. ո՛չ հացդ պակաս է, ո՛չ ջուրդ և ո՛չ մեր պատիւը ու ծառայութիւնը քեզնից։ Այդ անսպառ ջուրը, որ ժողովում ես անյատակ պրգայիդ մէջ, դու երբէք չես կարողանալու սպառեցնել ոչ քո և ոչ զաւակներիդ պէտքի համա՛ր. ժամանակ-ժամանակ մեզ էլ տուր նրանից. մեր բերանները պապակեցին, մեր անասունները տանջւում են, մեր մարմինը կեղտի մէջ փտեց, մեր արտերը ցամաքում են, խնայիր մեզ, մեր կուշտ լինելովը դու երբէք չես սովելու. ինչո՞ւ անգութ սրտով

նայում ես մեր տանջանքներին։ Աղքատութիւնը մաշում է մեր կեանքը, մեղքացի՛ր մեզ»։

Հագան առանց շահի և տոկոսի ոչ մի կաթիլ ջուր չէր տալիս իւր պրգայից և ո՛չ մի բուռ ցորեն իր ամբարից. իր շուրջը կեցած մարդոց լացը, արտասուքը և լալագին աղաչանքը ուրախացնում էին նրան, բայց նրա սրտի գութը չէին շարժում։ Նա այն ժամանակ միայն ուրախ էր և ցնծում, երբ քովի կեցողները լացի ու սըգի մէջ էին։

Մէկ գարնան գիշեր, երբ Հագայի պրգան արդէն բերնէ բերան լիքն էր և նրա բակի երկաթապատ դըռները ամուր փակուած ու նիգերը վրաները դրուած էին, —յանկարծ գոռացին ամպերը, փայլատակեց երկինքը և սկսեց յորդ անձրև թափուել, կարծես թէ կաթիլների տեղ երկնքից փարչեր էին պարպում։ Ջուրը սկսեց պրգայից վայր թափուել. և որովհետև քարէ ամուր պատերը և փակած դռները ջրի ճամփան փակել էին, ջուրը սկսեց բակի մէջ բարձրանալ։ Անձրևը քանի գնում էր սաստկանում էր և բակի ջուրը աւելի ու աւելի էր բարձրանում։ Տան դռները չըդիմացան ջրի ուժին, ծըխնիները թռան տախտակներից, դռները բացուեցին և ջուրը հեղեղատի պէս ներս մտաւ։ Հագան և նրա ընտանիքը կանգնեցին աթոռների և սեղանների վրայ, բայց ջուրը այնտեղ էլ հասաւ նրանց։ Բայց անձրևը ՚չէր դադարել, աղբիւրը առատ-առատ բղխում էր գետնից, ջուրը մտաւ ամբարները, թրջեց ցորենը, ապականեց ամեն կերակուրների պաշար և խեղդեց տարաւ Հագայի անասունները։ Անձրևը անընդհատ գալիս էր, ամպերը կատաղի գոռում էին. ջուրը հասաւ Հագայի կրունկին, ծնկին, ապա և վզին... «Ա՜խ, միտք արաւ Հագան, ինչո՞ւ մէկ հրաշքով չի բացւում բակիս դուռը, որ ջուրը ազատ ելք գտնէր և ինձ խեղդելուց ազատէր».... Բայց բակի դուռը ինքը իւր ձեռքով ամուր փակել էր և կողպել, որ դրա-

ցինները գաղտուկ ներս չըմտնէին և պապակած բերանները թաց չանէին։ Ջուրը ճամփայ չըգտաւ, աւելի բարձրացաւ և խեղդեց նրան, որ խեղճերից մէկ կաթիլ էր խնայում։ Այսպէս պատժուեց ագահ Հազան։

Ռ. Պատկանեան

12.

Ա Ղ Ա Ւ Ն Ի Ն Ե Ր

(ՏՈՒՐԳԵՆԵՎԻՑ)

Ես կանգնած էի սեպացած բլրի գագաթին։ Իմ առաջ մերթ ոսկեփայլ, մերթ արծաթափայլ շողշողում էր ծովի պէս փռուած հաճարի հասուն արտը։ Բայց այդ ծովը չէր ծփում. նրա երեսին չէին խաղում անհանգիստ ալիքներ։ Օդը խեղդուկ ու անշարժ էր և գուշակում էր մի մեծ փոթորիկ։

Իմ շուրջը դեռ ջերմ ու աղօտ լոյս էր սփռում արեգակը. բայց այնտեղ, արտի այն կողմը, ոչ այնքան հեռու, մուգ-կապոյտ ամպակոյտը բռնել էր երկնակամարի ամբողջ կէսը։

Ամեն ինչ շունչը կտրել... ամեն ինչ թալկացել, նուաղում էր արևի վերջին չարագուշակ ճառագայթների տակ։ Չէր երևում ոչ մի թռչուն. ոչ էլ գէթ ձայնն էր լսւում։ Ճնճղուկներն անգամ թագ էին կացել։ Միայն մի տեղ, մօտերքում, ջրածաղկի մենաւոր, խոշոր տերևը յամառ կերպով շրշիւն ու շշուկ էր բարձրացնում։

Ափսինդի սաստիկ բուրմունքը բռնել էր հանդերը։ Ես նայում էի կապտագոյն ամպակոյտին... և սիրտս խռովւում, նեղանում էր։ Դէ, շուտ արա, մտածում էի

ես. փայլի՛ր, փայլատակի՛ր, ո՛վ ոսկի օձ. ճայթի՛ր, գըրգռա՛, ո՛վ որոտ. շարժուի՛ր, գլորուի՛ր, երկիր թափուի՛ր, ո՛վ չարագէտ ամպակոյտ, վերջ տուր այս թախծալի հեծութեանը։

Բայց ամպակոյտն անշարժ էր։ Նա առաջուայ պէս ճնշում էր լուռ ու մունջ երկիրը... և միայն կարծես աւելի ու աւելի ուռչում, մթնանում էր։

Ահա նրա միագոյն, կապուտակ երեսին մի բան սպիտակին տալով՝ սահուն ու հաւասար սլացաւ առաջ. սլացողը կարծես մի սպիտակ թաշկինակ կամ ձիւնի քուլայ լինէր։ Եայց դա մի սպիտակ աղաւնի էր, որ թռչում էր գիւղի կողմից։

Նա թռաւ, թռաւ միևնոյն ուղղութեամբ... և սուզուեց անտառի յետևը։

Անցաւ մի քանի վայրկեան։ Նոյն անողոք լռութիւնը շարունակւում էր։ Բայց ահա արդէն երևում են երկու թաշկինակ, ձիւնի երկու քուլայ, որոնք յետ են դառնում։ Դրանք երկու սպիտակ աղաւնիներ են, որոնք հաւասար թռիչքով դէպի տուն են թռչում։

Վերջապէս, փոթորիկն էլ ճայթեց և սկսուեց տարերքի աղմկալից խաղը։

Ես վազէվազ հազիւ տուն հասայ։

Քամին աղմկում, կատաղի, պտոյտներ է անում։ Ցածիջած շէկ-շէկ ամպերը, կարծես գզլտորուած լաթեր, թռչում սլանում են գլխապատառ։ Ձփո՛թ, աղմո՛ւկ—ամեն ինչ իրար խառնւում, իրարով է անցնում։ Անձրևի սաստիկ տարափը, օրօրուող սիւների ձև առած՝ շըշռալի թափւում է գետին։ Կայծակները հրականչ փայլատակումներով աչք են կուրացնում. ընդհատուող որոտը տրաքում ու գըրգռում է, կարծես թնդանօթներ լինի արձակելիս։ Օդում ծծմբային հոտ է փչում...

Իսկ կտուրի ծածկի տակ, երդիկի հէնց ծայրին, իրար կողքի նստած են երկու աղաւնի. նստած է համ

նա, որ թռել էր իր վարուժանի յետևից, համ նա, որին հետը բերել էր և, շատ կարելի է, ազատել նրան կորուստից։

Երկուսն էլ մէջքերն ուռցրել են, և ամեն մէկն իր փոքրիկ թևով զգում է դրացու թևի մեղմ շփումը...։

Բախտաւո՜ր են նրանք։ Նրանց նայելով՝ ես էլ ինձ բախտաւոր եմ զգում... թէև ես մենակ եմ... մէն-մենա՜կ, ինչպէս և միշտ։

Ա. Ծատուրեանց

13.

«ՓՇՈՒՐ ԸՄ ԽԱ՛Ց»

Ա.

Յունուարի մի ցուրտ, շատ ցուրտ օր էր. թքէիր՝ գետին չէր ընկնի։ Սպիտակ էր գետինը, սպիտակ էին տների պատերն ու կտուրները, սպիտակ էին մանաւանդ փողոցների և պարտէզների ծառերը. ձիւնի միատեսակ ճերմակ սաւանը փռուած էր ամեն տեղ, պատել էր ամեն ինչ։ Գիշերը խիստ պարզկայ էր, և այժմ սառած ձիւնը անցուդարձ անողների ոտների տակ անախորժ ճռճռոց էր հանում, որ մարդու մարմինը փշաքաղւում էր *)։ Արև չը կար. մառախլապատ էր երկինքը. սաստիկ ցրտից յանկարծ խտացած գոլորշիները բարակ եղեամներ դարձած՝ խաղում էին օդի մէջ։ Աղռաւներն ու աներես ճնճղուկներն անգամ այսօր, սովորականին հակառակ, ճիչ ու աղմուկով չէին թռչկո-

*) Սարսուռ էր զգում։

տում կտրից կտուր, բակից բակ՝ պաշար թռցնելու. նրանք նստոտել էին այս ու այն պատի վրայ, այս ու այն ծառի ճիւղերին լուռ, խղճուկ, կծկուած. սաստիկ ցուրտը սրանց էլ էր նեղել։ Ամեն մի անկիւնից, ամեն մի բնից, ամեն մի սաքուից, ուր կենդանի շունչ կար՝ ծուխ էր բարձրանում. մարդիկ կռւում էին ցրտի դէմ, ինչով և ինչպէս կարող էին՝ տաքանում էին։

Թէև արդէն առաւօտ էր, բայց Ա...ի փողոցները դատարկ էին և անկենդան. ո՞վ էր գժուել այս կատաղի ցրտին գլուխ դուրս հանել տնից. հազիւ երբեմն փողոցների այս ու այն ծայրում ստուերների պէս երևում էին մուշտակների, եափունջիների կամ վերարկուների մէջ կուչլուած մարդիկ, քիթ ու պռունգը փաթաթած, եղեամով ծածկուած. սրանք էլ, ո՞վ գիտէ, ո՞րպիսի անհրաժեշտ կարիքից ստիպուած էին թողնել իրանց փափուկ բնակարանները, այն էլ ոչ թէ քայլում էին, այլ ակամայ վազում էին, համարեա հևալով։

Բ.

Այդ ժամին փողոցի հեռաւոր ծայրում յանկարծ անսպասելի կերպով երևացին երկու փոքրիկ մանուկներ, 7 և 10 տարեկան։ Խեղճերն այնքան վտիտ էին, որ ասես գերեզմանից դուրս քաշած մեռելներ լինէին. դժուար էր առանց սոսկումի նայել նրանց վրայ։ Երկուսն էլ գլխաբաց, գզգզուած մազերով, որոնց վրայ առատօրէն թափուել էին եղեամների թերթիկներ. յօնքերի և աչքերի թերթերուքների վրայ նոյնպէս նստել էին եղեամներ, տալով մանուկներին մի անօրինակ, մի խղճալի տեսք։ Նրանց մարմինների մերկութիւնը հազիւ հազ ծածկուել էր ինչ-որ կախկխուած ծուէններով. անհնարին էր նոյնիսկ որոշել, թէ ինչ է նրանց հագինը, կամ ո՞րն է վարտիքը, շապիկը կամ արխալուխը։ Ա...-եցի չէին նրանք,

այլ գաղթականներ հեռու տեղից, տարաբախտ երկրից էին եկել, անհայր, անմայր, անտէր... կատարեալ որբիկներ... Այս փոքրիկ թշուառները շատ քիչ բան գիտէին իրանց հայրենիքի մասին. ասում էին միայն, որ այն երկրում «զուլում կ'էնեն, մարդ կը մորթեն. մեր խօրն ու մօր էլ մորթեցին անօրէնները»։

Խեղճերը գիշերները քնում են մի աստուածասիրի գոմում. այնտեղ շատ անասուններ կան, տաք է... Առաջ փորձեցին մեծ գոմէշների մսուրի մէջ քնել. բայց նրանք այս տարօրինակ մարմինները տեսնելով՝ խրտնեցին, փռնչացրին. թշուառները վախեցան և փախան մտան մի փոքրիկ, խղճուկ հորթուկի մսուրը, որ նոյնպէս նիհար էր, նոյնպէս տխուր, նոյնպէս թշուառ՝ որպէս երկու որբիկները։ Խեղճի մայրը հէնց նոր էր մեռել. նորան ծծտուող չկար, ուստի կերակրում էին չոր խոտով. բայց նա դեռ ուտել չէր կարողանում, սովոր չէր. մէկ-մէկ ծիլ վերցնում էր, ծամծմում և վէր ածում. նա միշտ էլ սոված էր, միշտ էլ տխուր, դունչը կախած, օր աւուր նիհարում էր ու նիհարում։

«Թշուառին թշուառն է միշտ մխիթար». որբ հորթուկը սիրով հիւրընկալեց որբ մանուկներին. նրանք բարեկամացան և սիրեցին իրար. և երբ գիշերներն երկու որբիկները ճիտ-ճիտ արած, իրար պինդ խտտած քնում էին մսուրի մէջ՝ հորթուկն էլ իր փոքրիկ դունչը դնում էր նոյն մսուրի շրթին, քնում էր, իր տաք շունչը մանուկների երեսին փչելով։ Գոհ էին մանուկները. միայն փոքրիկ որբը գիշերները շուտ-շուտ վեր էր թռչում, ճւում, ճչում, լաց լինում, ապա զարթելով զանգատւում էր մեծին, թէ գալիս են... տանում են... մորթում են... գոմի խաւարի մէջ սարսափում էր դևերից, չարքերից։ Եղբայրն այդ ժամանակ աւելի պինդ էր գրկում նրան, հանգստացնում էր, և նրանք կրկին քնում էին։

Լաւ էր գոմը նրանց համար, շա՜տ լաւ, տաք էր...

Առաւօտները վաղ զարթնում էին և իրանց վայելած հիւրընկալութեան փոխարէն նախ աւելում, մաքրում, չորացնում էին հորթուկի տակը, գուրգուրում էին նրան, ապա կրում թափում էին մնացած անասունների աղբը և դուրս էին վազում փողոցներում թափառելու... հաց հաւաքելու...։ Այսպէս էին ապրում նրանք, և գոհ էին— «զուլում» չկար։

Սրանից առաջ էլ համարեա ամեն օր նրանք շրջում էին փողոցներում. տեղացիք տեսնում էին նրանց նոյն ցնցոտիների մէջ, նոյնպէս ոտաբոբիկ, նոյնպէս գլխաբաց, գզգզուած, որպէս այսօր, և ոչ ոքի խիղճը չէր վրդովւում։ Դէ եղանակը տաք էր, «ելիմն էլ աներես կը լինի, հաց հաւաքելով կ'ապրեն, էլի՛», մտածում էին նրանք և խիղճը հանգստացնում։ Բայց այսօր... Որբերը դարձեալ փողոցումն են։ Այս լաւ չէ, անտանելի ցուրտ է. օձի ճուտն էլ այս ցրտին թող դրսում չըմնայ, մեղք է, մտածում էին անցորդները... ախր այդ ինչպէս են բոպիկ, դողալով վազում և ինչ կարիք կար այսօր էլ անպատճառ դուրս գալ... Ա՛խ, աներես լակոտներ...

—Վա՜յ, վայ, սրանց մտիկ տուր, սրանց,—ասաց մի մուշտակաւոր պարարտ մարմին իր հետ գնացողին՝ երկու վազող որբերի վրայ ցոյց տալով.—օ՜ֆ, հոգիս մղկըտաց, կրակ մաղուեց գլխիս, կրա՛կ... ինչպէս են դողում։ Աստուած իմ. ախր այս ցրտին ո՞ւր էին դուրս գալիս իրանց բնից... Եւ նա ի սրտէ ցանկացաւ, որ այդ որբերն այսօր գոնէ դուրս եկած չըլինէին կամ գոնէ ինքը չըտեսնէր նրանց դողդողալիս. հանաք չէ, մարդու հացը հարամ եղաւ...—Եթէ ճաշին միտս ընկնեն՝ դժուարութեամբ կը ճաշեմ,—մտածեց նա և դէմքը կնճռեց։

—Է՜հ, իզուր ես այդքան անհանգիստ լինում նրանց մասին, բարեկամ. նրանք սովոր են, կը տանեն. ա՜յ այլ բան է, Աստուած չանէ, եթէ իմ և քո երեխաներին մի այդպիսի բան պատահի. գիտե՞ս, իմ Օսիկին որ եօրղա-

նով էլ հիմա՝ դուրս հանես՝ տեղն ու տեղը կը սառի, հաւատա կը սառի. սրանց բանն՝ ուրիշ է, սրանք կը տանեն...

Երկու խօսակիցներն անցան...

Գ.

Իսկ որբերը... Նրանք՝ շարունակեցին առաջ գնալ փողոցով և ամենևին չէին էլ զարմանում, որ իրանք այս անտանելի ցրտին փողոցումն են, մինչդեռ իրանց հասակից ոչ մի ուրիշ երեխայ չէ երևում. Նրանք մի բան միայն գիտէին, որ թէև սաստիկ ցուրտ է, թէև իրանք էլ մերկ են, ոտաբոպիկ, գլխաբաց դողդողում են՝ բայց և այնպէս պէտք է դռներն ընկնեն, որ հաց ճարեն. շատ են սոված, երէկ ճաշից սկսած բան չեն կերել...

—Վա՜խ, Գա՛լօ, էս իմա՜լ ցուրտ ա, եաման,—ասաց փոքրիկը ձեռները իր կապտած շրթունքներին մոտեցնելով և ոտները խշխշացող ձիւնի վրայ վերև ներքև անելով։

—Խա՛, Մրտօ, շատ ցուրտ ա, մրմուռ մարդու ջիգեար կու տայ, շուտ արի։

—Ախր փազեախը (գոմ) տաք էր,— շարունակեց փոքրիկը լացակամած. արցունքների խղճուկ կաթիլները կախուեցին արտևանունքներից, բայց առանց ընկնելու սառան։

—Տաք էր, ապա որ անօթի ենք, ինչ էնինք... Փոքրիկը լռեց, կծեց շրթունքները, փչեց մատներին—քո՜ւ, քո՜ւ, քո՜ւ...

Ահա նրանք կանգ առան մի մեծ դարպասի առաջ, որ բացուած էր։ Բակի ներսում սաստիկ ցրտից կծկուած քնած էր մի մեծ գամփռ. նա չէր նկատում մանուկներին, որոնք վախվխելով, ձեռք ձեռքի տուած, անվստահ քայլերով ներս մտան բակը և մի փոքր առաջ գնալով

տեսան ահաւոր շանը։ Մեծը կանգ առաւ, չըհամարձակուելով աւելի առաջ գնալ։

—Մրտօ՛, շունը... կը կծի, դառնանք։

—Ախր անօթի եմ, մսիմ *), էլ դո՛ր երթանք,—մըրմընջաց փոքրիկը. էս տուն ճոչ **) ի, փշուր ըմ խաց ուզենք, էլ ման վազենք փազեախ. ցուրտ ա փէտացանք...

Նրանք մի փոքր էլ առաջացան, յուսալով անձայն, անշշուկ անցնել շան մօտից և տանը հասնել։ Բայց ձիւնի ճռճռոցը զարթեցրեց շանը. Նա գլուխը բարձրացնելով տեսաւ երկու գզգզուած մանուկներին, մի կատաղի ոստիւն գործեց և վրաները յարձակուեց։ Վտանգն զգալով՝ խեղճ մանուկները ճչացին, իրար գրկեցին և վայրկենապէս նստեցին ձիւնի վրայ։ Արդարև, շունը կանգ առաւ, կենդանու կատաղութիւնը զսպուեց որբերի անպաշտպանութեան առաջ. Նա մի փոքր հեռու պառկեց, գլուխը թաթերի վրայ դրած, աչեն հսկելով երկու թըշուառների վրայ, որ չըլինի թէ վեր կենան փախչեն։ Սրտաճմլիկ, արտասուելի տեսարան էր. երկու ոտաբոպիկ, գլխաբաց, ցնցոտիների մէջ դողդողացող մանուկներ, կապտած շրթունքներով, ուռած ձեռներով, իրար կպած կծկուել նստել էին ձիւնի վրայ և լալիս էին. եղեամի թերթիկները խաղում էին ցուրտ օդի մէջ և պտըտուելով թափւում էին նրանց գզգզուած մազերի վրայ։ Կատաղած շունը շնթըկել***) էր նրանց կողքին մռմռալով, կարծես սպասում էր, որ թշուառները վեր կենան թէ չէ՝ վրայ պրծնի, կտոր-կտոր անէ։ Բակում ոչ ոք չը կար։ Մանուկները շարունակում էին յուսահատ լալ ու ճչալ. սարսափած աչքերով նրանք նայում էին մէկ շանը, մէկ էլ տան դռանը, այնտեղից օգնութիւն սպասե-

*) Մրսում եմ։
**) Ջոջ, մեծ։
***) Նստել էր։

լով։ Ահա վերջապէս տան դուռը ճռռալով բացուեց և շեմքի վրայ երևաց մի կին։

«Փշուրըմ խաց»,—պոռացին մանուկները միասին դողդոջուն ձայնով։

—Աներես լակոտներ. ասում էի սրանք կը լինին,—մրթմրթաց նա և ներս մտնելով բերեց մի կտոր հաց, տուեց սարսափած մանուկներին, իսկ ինքը յետ դարձաւ։

Մանուկները խլեցին հացի պատառը և մինչ պատրաստւում էին շտապով դուրս թռչել դռնից՝ շունը վեր թռաւ նրանց յետևից, վրայ պրծաւ, փոքրիկ որբի ոտքից բռնեց, քաշեց կատաղի հափոցով։ Սարսափած մանուկը ճչաց և երեսի վրայ ընկաւ հացը ձեռքին, մինչդեռ մեծը շշկլուած՝ չգիտենալով օգնութեան վազել, թէ փախչել՝ կանգնած մնաց ու լաց էր լինում։ Տանտիկինը վազեց, հալածեց կատաղած շանը և երբ ձեռքից բռնելով վեր կացրեց որբիկին՝ երեխան ծանր տնքաց։ Գազանի սուր ժանիքները պատռել էին նրա փոքրիկ ոտքը, կաթ-կաթ արիւնը ծորում էր վէրքից և թափւում ձիւնի վրայ։ Երեխան ձեռք տուեց ոտքին. ձեռքը ներկուեց արիւնով. նա զարհուրած յետ քաշեց ձեռքը, նայեց ափին, նայեց վիրաւոր ոտքին և էլ աւելի բարձր ձայնով լաց սկսեց։ Այնու ամենայնիւ նա կռացաւ, վերցրեց հացի պատառը, և կաղալով ու տնքալով հետևեց իր եղբօրը։ Արիւնը շարունակում էր կաթել նրա ոտքից, և երկուսով էլ լալիս էին, տեսնելով կարմիր կաթիլները...։

Բայց և այնպէս՝ քաղցած, դողդողացող մանուկները կիսեցին հացի արիւնոտ պատառը և մի մի կտոր կրծելով՝ առաջ գնացին։

Դեռ երբէք հացի մի պատառն այնքան թանգ չէր գնուել...։

Ա.. Ահարոնեան

14.

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ա.

Մերուժանը Արծրունեաց հայ իշխանական ցեղից էր։ Նա շատ փառասէր էր և մտածում էր մի օր հայոց թագաւոր լինել։

Երբ մեռաւ Արշակ Երկրորդը՝ Մերուժանը օգտուեց այդ դէպքից, դաւաճանեց իր հայրենիքին, ուրացաւ իր հաւատքը, անցաւ պարսից կողմը և դարձաւ կրակապաշտ։ Պարսից թագաւոր Շապուհը, որ վաղուց ուզում էր վերացնել Հայաստանում քրիստոնէութիւնը՝ շատ է ուրախանում Մերուժանի հաւատուրացութեանը։ Նա վճռում է Մերուժանի օգնութեամբ նուաճել Հայաստանը և հայերին կրակապաշտ դարձնել։ Մատնիչ նախարարին աւելի գրաւելու համար՝ նա ընծայում է նրան շատ գիւղեր, կնութեան է տալիս իր քոյր Որմիզդուխտին և խոստանում է տալ նրան հայոց թագաւորութիւնը՝ եթէ միայն հնազանդեցնէ իրան հայ իշխաններին և մտցնէ իր մայրենի երկրում կրակապաշտութիւնը։

Փառասէր Մերուժանը ուրախութեամբ ընդունում է Շապուհի առաջարկութիւնը և ստանալով նրանից բազմաթիւ զօրք՝ արշաւանք է գործում Հայաստան։ Նա աւերում է շատ գիւղեր և քաղաքներ, առնում է մի քանի բերդեր, գերում է հայ իշխանների կանանց, հաւատացած լինելով, որ դրանով կը ստիպէ նրանց ամուսիններին անձնատուր լինել իրան։ Բացի այս՝ նա շղթայակապ ուղարկում է Պարսկաստան հայ եպիսկոպոսներին և քահանաներին, որ ժողովուրդը մնայ առանց հովիւների. այրում է ձեռն ընկած գրքերը, արգելում է հայերէն խօսել և ստիպում է բոլորին պարսկերէն սովորել։

Վշտացած Ներսէս կաթողիկոսը հրդիմացաւ Մերուժանի այս չարագործութիւններին. Նա ուզեց դրանց առաջն առնել և դիմեց յունաց կայսեր օգնութեան։ Քրիստոնեայ կայսրը խղճաց հայերին, տուեց Յունաստանում գտնուող թագաժառանգ Պապին, Արշակի որդուն, օգնականութեան զօրք և ուղարկեց նրան Հայաստան։

Ձքով և հանդիսով եկաւ Պապը հայրենի երկիրը, որ անհամբերութեամբ սպասում էր իր թագաւորին։ Խորը խոցուեց նրա սիրտը՝ երբ նա տեսաւ, որ ամենը սգի մէջ են, երկիրը աւերակ է դարձել, և նենգաւոր Մերուժանը տիրացել է իր թագաւորութեանը։ Ունենալով պատրաստի զօրք՝ նա յարձակուեց դաւաճան իշխանի վրայ և կարճ միջոցում քշեց նրան իր երկրից։

Չարասիրտ Մերուժանը ուզեց իր պարտութեան վրէժն առնել հայ նախարարներից. Նա հրամայեց բերդապահներին՝ պարսպներից կախել գերած կանանց և թողնել նրանց դիակները գիշակեր թռչուններին, իսկ ինքը փախաւ Պարսկաստան։

Բ.

Պարսից արքայ Շապուհը սաստիկ չարանում է իր սկսած գործի անաջողութեան համար. Նա հաւաքում է անթիւ զօրք և նոյն Մերուժանի առաջնորդութեամբ ուղարկում է Հայաստան։ Յունաց կայսրը իմանալով այս մասին՝ անօգնական չէ թողնում Պապ թագաւորին և տալիս է նրան ընտիր զօրք՝ պաշտպանուելու անօրէն թշնամիների դէմ։ Պատերազմը Ձիրաւ դաշտումն էր։ Երկու կողմի զօրքերը վստահութեամբ ճակատ ճակատի են տալիս։ Սկսւում է կատաղի կռիւը. զէնքերի շաչիւնը, զինուորների աղաղակները դղրդեցնում են դաշտը։ Հայ իշխանների մանուկները իրանց կամքով նոյնպէս վազում են կռուի դաշտը, առաջնորդութեամբ Սմբատ Բագրա-

տունու, որ ասպետական ցեղից էր *). Նրանք, խրոխտ կերպով ձի նստած, վահաններով զինաւորուած՝ յարձակւում են իրանց հակառակորդ պարսիկ մանուկների վրայ և նիզակահար անելով՝ գետին են գլորում նրանց դիակները։

Այս արիւնահեղ տեսարանին վկայ էր Մեծն Ներսէսը, որ նստած Նպատ լերան գագաթի վրայ, ձեռքերն երկինք ամբարձած՝ խնդրում է Ամենակարողի պաշտպանութիւնը քրիստոնեայ զինուորներին։ Ահեղ էր պատերազմը. զինուորները կռւում էին անասելի քաջութեամբ. կարծես ամեն մէկը ուզում լինէր զարդարել իր գլուխը յաղթութեան պսակով։ Յանկարծ, կռուի ամենատաք րոպէին, երկինքը ծածկւում է ամպերով, մութ է պատում չորս կողմը... Բարձրանում է սաստիկ հողմ, որ փչում էր ուղղակի պարսից դէմ։ Ձայն, աղաղակ է լսւում թշնամեաց գնդերի մէջ, պարսից զինուորները շփոթւում են և յուսահատուած սկսում են փախչել։ Բայց Մերուժանը յետ է մնում փախուկ պարսիկներից. Նրա ձին վիրաւորուել էր։ Սմբատ քաջը շտապով վրայ է հասնում, կալանաւորում է նրան և լաւ է դատում՝ չյտանել նրան հայոց բանակը, որովհետև երկիւղ էր կրում, որ Մեծն Ներսէսը կարող էր իր մեծահոգութեամբ խղճալ դաւաճանին և ազատել նրան մահից։ Այս պատճառով նա օգտւում է դէպքից, որ նոյն տեղում, կրակի շուրջը, նստած են եղել մի խումբ մարդիկ. վերցնում է նրանցից հրաշէկ շամփուրը և պսակաձև բոլորելով նրան կալանաւոր մատնիչի գլխով՝ ասում է. «Պսակում եմ քեզ, Մերուժան, որովհետև կամենում էիր լինել հայոց թագաւոր. իբրև ասպետ դնում եմ այս թագը քո գլխին»։ Չը դիմացաւ այս տանջանքին Մերուժանը. Նա պատժուեց

*) Այս ցեղի իշխանները ասպետ էին կոչւում այն պատճառով, որ նրանք էին թագ դնում հայոց թագաւորների գլխին։

իր անթիւ չարագործութիւնների համար այս խայտառակ մահով։

Կ. Կ.

15.

ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԸ

Ա.

Հայաստանում առաջին դպրոցները հիմնեց Գրիգոր Լուսաւորիչը, որ ամեն կերպ աշխատում էր հաստատել քրիստոնէութիւնը հայերի մէջ և լուսաւորել հայրենակիցներին։ Այդ դպրոցներում ուսումը աւանդւում էր յոյն և ասորի լեզուներով. չըկային սեփական հայոց տառեր, չըկային հայերէն գրքեր։ Ուսումնառու աշակերտները դըժուարանում էին սովորել, չէին կարողանում իւրացնել օտար լեզուներով մատակարարուող ուսումը։ Ժողովուրդն էլ միշտ անմխիթար էր դուրս գալիս եկեղեցուց, որտեղ ժամասացութիւնը կատարւում էր իրան անհասկանալի լեզուով։ Ս. Գիրքը և եկեղեցական կանոնները գրուած էին յունարէն կամ ասորերէն։ Այս մեծ պակասութեան մասին առաջինը հոգս քաշեց Մեսրոպ Մաշտոցը, որ Տարօն գաւառի Հացիկ գիւղից էր։ Մեսրոպը ուսեալ մարդ էր, նա գիտէր յունարէն, ասորերէն և պարսկերէն. մի քանի տարի ծառայել էր թագաւորի պալատում քարտուղարի պաշտօնով։ Ուսումնական Մեսրոպը կամենում էր օգտաւէտ լինել իր ազգին. ծառայութիւնը արքունիքում ձանձրացրել էր նրան։ Նա հեռացաւ աշխարհի վայելչութիւններից և դարձաւ ճգնաւոր։ Նա տեսնում էր, որ հայերը անուս են և տգէտ, չունին սեփական գրքեր.

տեսնում էր, որ նոքա աւելի կռապաշտ են՝ քան քրիստոնեայ,, որովհետև Քրիստոսի քարոզները չէին լսում իրանց մայրենի լեզուով։ Հաւաքելով իր շուրջը բազմաթիւ աշակերտներ՝ նա աշխատում էր նրանց օգնութեամբ լուսաւորութիւն տարածել հայերի մէջ և հաստատել քրիստոնէութիւնը։ Ծանր էին նրա աշխատանքները. նա ստիպուած էր լինում ս. Գրքից կարդացածը թարգմանել ժողովրդի համար մայրենի լեզուով։ Երկար այսպէս գործելով՝ բանիմաց Մեսրոպը համոզուեց, որ այդպէս անկարելի է շարունակել լուսաւորութեան գործը, հարկաւոր էր մայրենի լեզուի տառերը հնարել։

Բ.

Մեսրոպը յայտնում է իր խորհուրդը այն ժամանակուայ հայոց կաթողիկոսին, մեծն Սահակ Պարթևին, որ հասկանալով սեփական տառերի անհրաժեշտութիւնը՝ գումարում է Վաղարշապատ քաղաքում հոգևորականների ժողով՝ խորհրդակցելու հայոց նշանագրերի մասին։ Թագաւոր Վռամշապուհն էլ նախանձախնդիր էր այս բանին. Ներկայ լինելով ժողովում՝ նա յայտնեց այն մասին, որ Ասորիքում եղած ժամանակ լսել է, թէ մի ասորի եպիսկոպոսի մօտ գտնւում են հայոց լեզուի տառերը։ Սահակ կաթողիկոսը և Վռամշապուհը ուղարկում են այդ եպիսկոպոսի մօտ (Դանիէլ) մի դեսպան, որ և բերեց յիշեալ տառերը։ Մեսրոպը փորձեց գործադրել նրանց, դասաւորեց յունաց տառերի կարգով, մի քանի տարի աշխատեց սովորեցնել աշակերտներին, բայց փորձը անօգուտ եղաւ։ Բերած տառերը բաւական չէին հայոց բառերի բոլոր հնչիւնները արտայայտելու համար. պակաս էին եօթը բաղաձայն և եօթը ձայնաւոր տառ։

Մեսրոպը չըվհատեց. նա դիմեց շատ տեղեր իր նպատակին հասնելու համար. գնաց Եդեսիա, Հլատօն անու-

նով մի ուսեալի մօտ. գնաց Սամոս կղզին, Հռոփանոս ճարտար գրողի մօտ. բայց նրա ջանքերը զուր եղան, ոչ մէկից չըկարողացաւ օգուտ քաղել։ Այս բոլոր փորձերից յետոյ Մեսրոպը տեսաւ, որ յոյս դնելով ուրիշների վրայ՝ ոչինչ չէ կարելի անել, սկսեց գիշեր ու ցերեկ մտածել իր գիւտի մասին. եռանդով ուսումնասիրում էր մայրենի լեզուի հնչիւնները. երկար ճիգ թափելով՝ Մեսրոպը վերջապէս յաղթեց դժուարութիւններին և իր հնարագէտ խելքով ստեղծեց մեր նշանագրերը (406 թ.)։

Գ.

Այս մեծ գիւտից յետոյ, Սահակը և Մեսրոպը բաց են անում ուսումնարաններ, սովորեցնում են ուսման ծարաւ աշակերտներին նորագիւտ հայոց տառերը, թարգմանում են հին և նոր Կտակարանները և ժամասացութեան գրքերը օտար լեզուներից հայերէն։ Հեշտանում է ուսման գործը աշակերտների համար. նրանք սկսում են կարդալ մայրենի լեզուով, գրում են մայրենի տառերով։ Այնուհետև ժողովուրդն էլ եկեղեցի գնալով՝ հասկանում էր ամեն բան և մխիթարուած վերադառնում էր տուն։ Կամաց-կամաց լուսաւորութիւնը տարածւում է Հայաստանում, քրիստոնէութիւնը խոր արմատներ է գցում ժողովրդի մէջ։ Սահակի և Մեսրոպի բացած դպրոցներում են ստացել իրանց սկզբնական կրթութիւնը այն անուանի հայ հեղինակները (Եղիշէ, Եզնիկ, Մ. Խորենացի), որոնք գրեցին մեր հին պատմութիւնը և մշակեցին, ճոխացրին մեր լեզուն։

Կ. Կ.

16.

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ

Ա.

Հայոց Վռամշապուհ թագաւորի մահից յետոյ պարսից թագաւորները աշխատում էին Հայաստանը բոլորովին ձուլել իրանց տէրութեան հետ։ Բայց այդ նպատակին դժուար էր հասնել, քանի որ հայերը քրիստոնեայ էին, իսկ պարսիկները՝ կրակապաշտ։ Հայերը, իբրև քրիստոնեաներ, իրանց աւելի մօտ էին զգում յոյներին, որոնց ձեռքում էր Հայաստանի արևմտեան մասը։ Բայց յոյներն ևս թշնամացել էին հայերի հետ այն օրից, երբ Մեսրոպի, Սահակի և նրանց աշակերտների ջանքերով հայոց եկեղեցիներում և դպրոցներում յունաց լեզուի փոխարէն սկսուել էր գործածուել մայրենի լեզուն։ Հայերը այդ ժամանակ չունէին զօրեղ թագաւոր. Վռամշապուհի որդի Արտաշէսը ցեղխ և անառակ մի երիտասարդ էր, որ աւելի մտածում էր զւարճութիւնների, քան իր երկիրը կառավարելու մասին։ Հայոց նախարարները, զզուելով այդ թոյլ և անառակ թագաւորից, որոշեցին դիմել պարսից Վռամ արքային և խնդրել, որ նա գահից հրաժարեցնէ Արտաշէսին և նրա տեղ Հայաստանում նշանակէ պարսիկ կուսակալ։ Իզուր էր Սահակ կաթողիկոսը աշխատում համոզել հայոց նախարարներին՝ համբերել և մի այդպիսի ազգավնաս քայլ չանել։

Հայոց իշխանները տեսնելով, որ Սահակը չէ ուզում միաբանել իրանց հետ, դիմեցին պարսից թագաւորին և զրպարտեցին թէ Արտաշէսին և թէ Սահակին, իբրև թէ այդ երկուսը միացել են յոյների հետ և ուզում են ապստամբեցնել Հայաստանի պարսից մասը։ Պարսից թագաւորը հէնց մի այդպիսի բանի էր սպասում. Նա օգ-

տուեց հայոց մեծամեծների չարախօսութիւններից և կանչեց իր մօտ հայոց թագաւորին և կաթողիկոսին ու բանտարկեց դրանց։ Սահակի փոխարէն կաթողիկոս նշանակեց Սուրմակ անունով մի անարժան երէցի, իսկ Արտաշէսի տեղ հայոց երկրի վրայ պարսից կուսակալ կամ մարզպան կարգեց։

Բ.

Դէպքերը շուտով ցոյց տուին, թէ ինչ դժբախտութիւնների պատճառ դառաւ հայոց նախարարների այդ անհեռատես քայլը։ Վռամի մահից յետոյ պարսից թագաւոր եղաւ նրա որդի Յազկերտը, որ մոլեռանդ կրակապաշտ էր։ Նա վճռեց բռնի ուժով հաւատափոխ անել հայերին և այդպիսով բոլորովին ձուլել Պարսկաստանի հետ Հայաստանը։ Ցաւալին այն էր, որ հայ նախարարների մէջ գտնուեցին փառասէր մարդիկ, որոնք միայն իրանց սեփական շահերն աչքի առաջ ունենալով՝ ծածուկ օգնում էին Յազկերտին։ Այդպիսի նախարարներից էր և Սիւնեաց աշխարհի հզօր իշխան Վասակը։

Յազկերտը այդ Վասակին Հայաստանի կուսակալ կարգեց և հրովարտակ հանեց, որ իր իշխանութեան տակ եղած բոլոր քրիստոնեաները, այսինքն հայերը, վրացիք և աղուանները, թողնեն իրանց հաւատը և երկրպագեն արեգակին ու պաշտեն կրակին։ Պարսից կրօնապետը կամ մոգպետը մինչև անգամ մի թուղթ գրեց հայոց մեծամեծներին, որի մէջ պախարակում էր քրիստոնէութիւնը և գովում պարսից զրադաշտական *) կրօնը։

Այդ ժամանակ հայոց կաթողիկոսն էր Մեսրոպի և Սահակի աշակերտ Յովսէփը։ Նա Արտաշատ քաղաքում հայ աշխարհական և հոգևորական մեծամեծներից մի ժողով կազմեց։ Այդ ժողովում կարդացուեց Յազկերտի և մոգպետի առաջարկութիւնը և գրուեց մի համարձակ պատասխան, որ վերջանում էր հետևեալ խօսքերով.« մեր հաւատից մեզ ոչ ոք չէ կարող հանել, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր»։

*) Զրադաշտը մոգութեան ադանդապետն է. նրա անունով է կոչւում մոգերի կրօնը։

Գ.

Յազկերտը ստանալով հայերի պատասխանը՝ շատ բարկացաւ և հրամայեց հայ նախարարներին՝ գալ պարսից Դուռը։ Նա կանչեց և հայոց զօրքի սպարապետ Վարդան Մամիկոնեանին, ինչպէս և իր կուսակալ Վասակին։ Երբոր նախարարները հասան Յազկերտի մօտ՝ այս վերջինը հրամայեց նրանց բոլորին էլ բանտարկել, որովհետև թագաւորը պահանջում էր, որ նախարարները ուրանան իրանց հաւատը, իսկ նրանք չէին համաձայնում։ Յազկերտը յայտնեց նախարարներին, որ եթէ նրանք յամառեն իրանց որոշման մէջ՝ նա կ'ուղարկէ Հայաստան մի մեծ զօրք՝ բնաջինջ անելու բոլոր հայերին։

Նախարարները տեսնելով, որ առանց իրանց ներկայութեան Հայաստանում շատ դժուար կը լինի հայերին ընդդիմադրել պարսից զօրքին՝ խորհեցին և վճռեցին երեսանց ընդունել կրակապաշտութիւն, որպէսզի իրաւունք ստանան վերադառնալ հայրենիք և պաշտպանել նրան Յազկերտի զօրքերի աւերումներից։

Երբ Յազկերտը լսեց, որ նախարարները պատրաստ են ուրանալ իրանց հաւատը՝ սաստիկ ուրախացաւ և վարձատրելով նրանց՝ յետ ուղարկեց Հայաստան, նրանց հետ դնելով մոգերի մի մեծ խումբ և պարսից զօրք։ Յազկերտը հրաման էր տուել մոգերին և իր զօրքին—

փակել բոլոր եկեղեցիները Հայաստանում և նրանց փոխարէն կրակարաններ հիմնել։

Հայ ժողովուրդը երբ լսեց նախարարների ուրացման գործը և մոգերի ու պարսից զօրքի ժամանումը՝ ոտքի կանգնեց և պատրաստուեց զէնքով պաշտպանել իր հաւատը։ Մոգերի հէնց առաջին փորձը—կործանել եկեղեցին—ցոյց տուեց, թէ որքան դժուար էր՝ հայերին բռնութեամբ հաւատափոխ անելը։ Երբ մի գիւղում մոգերը ուզում էին փակել եկեղեցին՝ դրա երէց Ղևոնդը ժողովրդի հետ յարձակուեց պարսիկների վրայ և ջարդելով յետ քշեց նրանց իր սրբավայրից։

Իսկ նախարարները երբ հասան Հայաստան՝ բացարձակ յայտնեցին, որ չեն ուրացել իրանց հաւատը։ Վարդան Մամիկոնեանը իսկոյն նախարարների ժողով գումարեց, և բոլորը Աւետարանի վրայ երդուեցին՝ մինչև արեան վերջին կաթիլը պաշտպանել ազգային եկեղեցին։ Հայ ազգի ոգևորութիւնը և հաստատամտութիւնը այնքան զօրեղ էին, որ նոյն-իսկ Վասակը ստիպուած էր միաբանել նախարարների հետ և երդուել Աւետարանի վրայ՝ որ հաւատարիմ կը մնայ քրիստոնէական հաւատին։

Այսպէս ահա հասարակ հայ ժողովուրդը, իշխանները և հոգևորականները միաբանելով թոյլ չըտուին քանդել իրանց եկեղեցիները, և մոգերին պարսից զօրքի հետ միասին քշեցին Հայաստանից։

Դ

Այդ քայլը անելով՝ մեր նախնիք լաւ գիտէին, որ Յազկերտը անպատիժ չի թողնի նրանց, ուստի սկսեցին պատրաստուել՝ ընդդիմադրութիւն ցոյց տալու Յազկերտի նոր յարձակման։ Միևնոյն ժամանակ Յունաց Թէոդոս կայսրի մօտ ուղարկեցին Ատոմ Գնունուն և Վարդան Մամիկոնեանի եղբօր Հմայեակին—օգնութիւն խնդրելու։

Իսկ ինքը Վարդան Մամիկոնեանը առժամանակ իր զօրքով դիմեց հիւսիս՝ օգնելու իր փեսային, այսինքն Վրաց թագաւորին, որ նոյնպէս կռւում էր Յազկերտի դէմ։

Վասակ Սիւնին, օգտուելով Վարդան սպարապետի բացակայութիւնից՝ սկսեց բացարձակ համոզել նախարարներին, որ յետ կենան իրանց մտադրութիւնից և ընդունեն Յազկերտի պահանջները։ Վասակը նոյն-իսկ սկսեց աւերել այն նախարարների երկիրները, որոնք չէին ուզում միաբանել իր հետ։ Բայց երբ Վասակը լսեց, թէ Վարդանը յաղթելով պարսիկներին Վրաստանում արդէն վերադառնում է՝ փախաւ և ամրացաւ Սիւնեաց աշխարհում։

Ե.

451 թուականի զատկի տօները նոր էին անցել, երբ լուր հասաւ, որ պարսից ահագին զօրքը արդէն հասել է Ուրմիա լճի արևմտեան ափը, Հեր և Զարևանդ գաւառը։

Վարդանը իսկոյն հրաւէր կարդաց բոլոր հայոց իշխաններին՝ իրանց զօրքերով գալ հաւաքուել Արտաշատ քաղաքում։ Իսկ պարսից բանակի դիրքը և թիւը լրտեսելու նպատակով նա առաջ ուղարկեց Առանձար Ամատունի իշխանին 300 կտրիճ հեծեալներով։

Վարդանի հրաւէրն իսկոյն արձագանգ գտաւ, և հայոց իշխանները շտապեցին իրանց զօրքերով Արտաշատ, ուր ժողովուեց 66 հազար զօրք։ Առանձարը տեղեկութիւն բերաւ, որ պարսիկները դիմում են Արտազ գաւառը։ Վարդանը անցնելով 66 հազար զինուած հայերի գլուխը՝ դիմեց թշնամու բանակի դէմ։ Հայոց զօրքը հասնելով Տղմուտ գետի ափի մօտ գտնուող Աւարայրի գիւղը՝ այդտեղ բանակ հաստատեց, գետի միւս ափին գտնուող պարսից զօրքի հանդէպ։ Յովսէփ կաթողիկոսը, Ղևոնդ երէցը և մի քանի այլ քահանաներ հայոց զօրքի մէջ էին

և քաջալերում ու խրախուսում էին հայ զինուորներին։

Միւս օրը, յունիսի 2-ին, լուսադէմին, հայոց բանակից արդէն երևում էր, թէ ինչպէս պարսից զօրապետ Մուշկանը առաջ էր բերում պատերազմիկ փղերը, որոնց ամեն մէկի մէջքին մի-մի մարտկոց էր դրուած, լի սպառազինուած մարդկանցով։ Այդ վիթխարի գազաններից իւրաքանչիւրի երկու կողմից նա կանգնեցնել էր երեք հազար զինուորներ։

Վարդանը աղօթելով զօրքի հետ՝ ինքն ևս պատրաստուեց ճակատամարտի համար։ Նա բաժանեց հայոց զօրքը չորս գնդի. առաջին գունդը յանձնեց Ներշապուհ Արծրունուն, երկրորդը՝ Խորէն Խորխոռունուն, երրորդը՝ Թաթուլ Վանանդեցուն, իսկ չորրորդը պահեց իրան, օգնական ունենալով Արշաւիր Կամսարականին և Համազասպ Մամիկոնեանին, որ իր կրտսեր եղբայրն էր։

Ճակատամարտը սկսուեց նետաձգութեամբ գետի երկու կողմերից։ Հայերն անցնելով Տղմուտ գետը՝ քաջութեամբ յարձակուեցին պարսից վրայ։ Քաջ Վարդանը կոտորեց պարսիկների ամենաուժեղ թևը։ Արիւնահեղ պատերազմը տևեց ամբողջ օրը։ Երբ Վարդանը վիրաւորուած ընկաւ իր քաջ ընկերների հետ՝ հայոց զօրքը, անառաջնորդ մնալով, ցրուեց, պատերազմի դաշտի վրայ թողնելով 1036 հոգի, մինչդեռ պարսից կողմից ընկել էին 3544 հոգի։

Գ.

Աւարայրի ճակատամարտից յետոյ հայերը ցրուեցին և ամրացան Հայաստանի զանազան բերդերում ու լեռների անմատչելի տեղերում և դեռ երկար ժամանակ շարունակում էին կռուել պարսիկների դէմ։ Վարդանի եղբայր Հմայեակը օգնութիւն չըստանալով յոյներից՝ հասաւ Հայաստան Աւարայրի ճակատամարտից յետոյ։ Նա

իր խմբերով ամրացաւ Գարխար լեռներում և անդադար յարձակւում էր պարսից վրայ և կոտորում նրանց։ Նա այդպէս երկար ժամանակ կռուեց հայրենիքի թշնամիների դէմ, մինչև որ իր դիւցազն եղբօր նման ընկաւ կռուի դաշտում։

Յազկերտը տեսնելով, որ չէ կարողանում կոտրել հայերի կամակորութիւնը՝ հրամայեց Մուշկանին դադարեցնել պատերազմական գործողութիւնները հայոց երկրում, Վասակին պատուիրեց գալ իր մօտ, իսկ նրա փոխարէն պարսիկ կուսակալ կարգեց։ Յազկերտը իր մօտ կանչեց և կենդանի մնացած նախարարներին, մեծամեծ խոստումներ տալով նրանց. մինչդեռ Յովսէփ կաթողիկոսին, Ղևոնդ երէցին և մի քանի այլ հոգևորականներին, իբրև ապստամբութեան դրդիչներին, հրամայեց կալանաւորել և ջորիների վրայ կապած ուղարկել Պարսկաստան։ Երբ նախարարները հասան պարսից Դուռը՝ Յազկերտը, հակառակ իր երդման, բանտարկեց նրանց բոլորին, իսկ կաթողիկոսին, Ղևոնդ երէցին և միւս հոգևորականներին սաստիկ տանջանքների ենթարկելով՝ սպանել տուեց։

Լ. Տ.

17.

ՎԱՍԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Մի հանդիսաւոր օր պարսից թագաւոր Յազկերտը հրամայեց ընթրիքի հրաւիրել բոլոր մեծամեծներին և երևելի իշխաններին։ Հրաւիրուած էր և Վասակը։ Նա հագաւ այն պատուական զգեստը, որ ստացել էր թագաւորից. գլխին դրեց ոսկէ խոյրը (գլխարկը), մէջքին կապեց մարգարիտներով և ակնեղէններով զարդարուած

ոսկէ գօտին, ականջներից կախեց օղերը, վզից՝ մանեակը, ուսերին գցեց սամոյրը, և բոլոր ունեցած պատուանշանները հագին՝ գնաց պալատ։ Արքունիքի բակում շըրթայակապ նստած էին մի քանի հայ իշխաններ և քահանաներ։ Երբ նրանք տեսան զուգուած և զարդարուած Վասակին՝ սկսեցին ծաղրել նրան և ասել. «Ո՛վ անխելք վաճառական, պատիւդ վաճառեցիր մի քանի կանացի զարդարանքների. բայց իմացիր, որ շատ շուտ կը զըրկուես դրանցից»։ Անցնելով նրանց առաջով՝ Վասակը մտաւ ներսի դահլիճը, որ մեծ իշխանների հրապարակն էր, և նստեց։ Այս միջոցին դուրս է գալիս արքունիքից Թագաւորի սենեկապետը, մօտենում է նրան և ասում. «Թագաւորը ուղարկեց ինձ քեզանից հարցնելու, թէ ո՛ր արդար վաստակներիդ համար ես ստացել այդ պատուանշաններդ». յիշեցրեց այն բոլոր չարագործութիւնները, որոնց համար դատապարտել էին նրան. ասաց, որ նա ապօրինի կերպով տիրեց Սիւնեաց աշխարհին, նենգութեամբ և քսութեամբ սպանել տուեց իր հօրեղբայր Վաղինակին և ինքը ստացաւ նրա իշխանութիւնը։ Դատապարտեց նրան և այլ շատ բաների մէջ, որոնց վկայ էին բոլոր մեծամեծները։ Վասակը պապանձուեց և իրան արդարացնող ոչ մի բան չըկարողացաւ ասել։ Այնուհետև մահուան վճիռ կարդացին նրա գլխին։ Դահճապետն եկաւ, հանեց նրանից այն բոլոր պատուանշանները, որ ստացել էր Թագաւորից, և հագցրեց մահապարտի զգեստ։ Կապեցին նրա ձեռներն ու ոտները, կանանցաբար նըստեցրին էգ ձի և տարան ձգեցին այն բանտը, ուր գտընւում էին բոլոր մահպարտները։ Ամեն օր դուրս էին բերում նրան հրապարակ, բոլոր զօրքի առաջ խայտառակում էին և ծաղրում։ Կողոպտեցին, հանեցին նրանից ամեն բան, որ ունէր իր հետ, և այնպիսի ծայրայեղ աղքատութեան մէջ էին պահում, որ իր ծառաները հաց էին մուրում և կերակրում նրան։ Նա տուեց իր բոլոր

կալուածները, նոյն-իսկ կանանց զարդերը արքունիքին, նա տուժեց, բայց էլի չըկարողացաւ հատուցանել այն բոլոր պարտքերը, որ դրել էին նրա վրայ։

Այսպէս անարգուեց Վասակը ամեն կողմից. բանտումը նա ընկաւ ծանր ցաւերի մէջ։ Մահուան հոտ փչեց նրա մարմնից, նոյն-իսկ ծառաները փախան նրանից։ Միայն լեզուն էր կենդանի նրա բերանում, բայց խոստովանութիւն չէր դուրս գալիս նրա շըրթունքներից։ Նա ճաշակեց ամենադառն մահը, իր բարեկամներն անգամ ոտի տակ տուին նրան. իսկ թշնամիները սաստիկ հարուածներով էլ չըկշտացան։ Եւ չըգտնուեց գերեզմանի տեղ այն մարդու համար, որ կամենում էր մատնութեամբ հայոց աշխարհի թագաւոր լինել։ Նա չէր թողել իր կեանքում ոչ մի չարութիւն, որ արած չըլինէր, բայց և չը մնաց ոչ մի չարչարանք, որ չանցնէր նրա գլխով մահուան ժամանակ։

Եղիշէ

Ծառի ճըճին ծառէն է,
Չար թշնամին տանէն է.
Վա՜յ այն տոհմին, այն ազգին,
Որոյ մատնիչն ազգէն է։

18.

ՏԱՆՈՒՏԷՐ ԽԱՉՕՅԻ ՏՈՒՆԸ.

Տանուտէր Խաչօյի բնակարանը այն տներից մէկն էր, որ թէ իրանց մեծութեամբ և թէ հարստութեամբ որոշւում էին միւսներից։ Այս տնից ամէն առաւօտ քշում էին դէպի նախիրը հարիւրի չափ անասուններ։ Նրա կովերը, գոմէշները, եզները և ձիաներն էին ամենաընտիրը ամբողջ գիւղի մէջ։

Այս տանն էին պատկանում հազարի չափ ոչխարներ, որոնք սեփական հովիւների հսկողութեան ներքոյ արածում էին մերձակայ լեռների վրայ։ Այդ տանն էր պատկանում այն ահագին ձիթահանը—ձէթ հանելու գործարանը,—որ գտնւում էր գիւղի մէջ։ Այս տանն էր պատկանում այն գեղեցիկ ջրաղացը, որ գտնւում էր գիւղից դուրս, որի անիւները տարուայ բոլոր եղանակներում անդադար բանում էին։

Բայց այն, որ աւելի նշանաւոր էին Խաչօյի հարստութեան մէջ,—դրանք էին նրա եօթը որդիքը, որոնք մինը միւսի յետևից հասած՝ ներկայացնում էին նրա տան հաստատութեան սիւները։ Որդիքը բոլորը ամուսնացած էին և տունը լցուած էր ամեն հասակի երեխաներով։ Ամուսնացած էին և նրա թոռներից մի քանիսը. նրանք նոյնպէս զաւակներ ունէին։ Եւ ծերունի Խաչօն իր առաջ տեսնում էր մի քանի սերունդ, որ ապրում էին և գործում էին միասին։ Առակի ձև էր ստացել այն խօսքը, թէ «Խաչօն այնքան զաւակ ունի՝ որքան և անասուն»։

Բ.

Ծերունի Խաչօյի տունը հեռուից բոլորովին հին ու

նախնական ամրոցի տպաւորութիւն էր գործում։ Նա գտնւում էր մի բարձրաւանդակի վրայ, և թէ իր շինուածքով, թէ դիրքով ունէր այն բոլոր յարմարութիւնները, որ պէտք էին՝ մի բնակութիւն ազատ պահելու համար արտաքին թշնամիներից։ Այդ ամրոցը պատած էր չորս ահագին պատերով, որոնք քառակուսի ձևով միմեանց հետ միանալով՝ թողնում էին իրանց միջնավայրում մի բաւական ընդարձակ տարածութիւն, որի վրայ կառուցուած էին զանազան շինութիւններ։ Դրսից ոչինչ չէր կարելի տեսնել, բացի չորս բարձր աշտարակից, որոնք միացնում էին պարիսպների չորս անկիւնները։ Ամրոցի շրջապատի մէջ զետեղուած էին բոլոր բնակութիւնները, բոլոր ծածկոցները, որ պէտք էին մի կանոնաւոր տնտեսութեան համար։ Այստեղ էր ոչխարների գետնափոր գոմը. այստեղ էր ձիաների, կովերի և գոմէշների փարախը, որ անասունների տեսակի համեմատ՝ առանձին-առանձին բաժանմունքներ ունէր։ Այստեղ էր սարայը՝ երկրագործական անօթները պահելու համար. այստեղ էին մարագը, յարդանոցը, խոտանոցը, որոնց մէջ պահւում էր անասունները դարմանելու պաշարը. այստեղ կային զանազան ամբարներ մշակութեան բերքերի համար։ Այստեղ կային և մի քանի խուղեր, որոնց մէջ բնակւում էին ծերունի Խաչօյի հովիւներն ու ծառաները իրանց ընտանիքներով. նրանք բոլորը ազգով քուրդ էին. կանայք ծառայում էին որպէս աղախիններ, իսկ տղամարդիկ որպէս նախրապաններ, հովիւներ կամ երկրագործական մշակներ։ Մի խօսքով՝ այդ ամրոցի մէջ բովանդակւում էր մի փոքրիկ գիւղ, որի միակ տէրը և պետը ծերունի Խաչօն էր։

Նրա գերդաստանի համար որոշուած բնակարանները իրանց շինուածքով դեռ ևս պահպանել էին այն ժամանակուայ նախնական պարզութիւնը և ձևը, երբ մի ամբողջ ընտանիք ապրում էին մի վրանի տակ, այն զանա-

զանութեամբ միայն, որ այժմ այդ վրանին փոխարինում էր քարեղէն շինուածքը։ Նորա բազմաթիւ որդոց համար, որոնց իւրաքանչիւրը իր զաւակներով մեծ ընտանիք կարող էր կազմել՝ առանձին սենեակներ չկային. այլ բոլորը ապրում էին միևնոյն յարկի տակ, միևնոյն սենեակում, որ ոչ այլ ինչ էր՝ բայց եթէ ոչ պատ, ծածկած ահագին գերաններով։ Այստեղ վառում էին, այստեղ թըխում էին, այստեղ բոլորը միասին պառկում էին։ Այստեղ կարելի էր տեսնել նորածին հորթեր, փոքրիկ ուլեր, որոնք երեխաների հետ խառնուած՝ վազվզում, ցատքրտում, աղաղակում էին և տունը լցնում էին կենդանի աղմուկով։ Մի խօսքով՝ դա Նոյի տապանն էր, որտեղ զետեղուած էին ամեն տեսակ կենդանիներ։ Այս բնակարանին կից էր երկրորդը։ Դա առաջուանից զանազանւում էր նրանով միայն, որ առջևի ճակատը բոլորովին բաց էր և նայում էր բակին։ Դրան կոչում էին սրահ, և ծառայում էր որպէս ամառուայ բնակարան։ Սրահի միջից մի դուռն էր բացւում գլխաւոր սենեակի մէջ, և այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախագաւիթը։ Նրա կողքին կար մի առանձին փոքրիկ սենեակ, որ կոչում էին օդայ. Նրա դռներն միայն այն ժամանակ էին բացւում, երբ տունը հիւր էր գալիս, և միշտ պահւում էր մաքուր ու զարդարուած։

Րաֆֆի

19.

ԳԻՒՂԱՑՈՒ ԿԵԱՆՔԸ

Գարուն է։ Լեռների ձիւներն սկսեցին հալուել. դաշտերը վաղուց ժպտում են գեղեցիկ կանաչով։ Օդը տո-

գորուած անուշահոտ ջերմութեամբ՝ կեանք է սփռում ամեն կողմը։ Ապրիլ ամիսը բերել է իր հետ աւելի տաք ու պայծառ օրեր։ Լեռների վրայ կարմիր, դեղին ու սպիտակ շուշանները վաղուց արդէն բացուել են, և հայ աղջկերքը քաղելով՝ փնջեր են կապում։ Սունկը, բոխին*), ծնեբեկը, սիբեխը**) և լեռնային զանազան բանջարեղէններ առատութեամբ աճում են։ Ձորերի միջից վազում են հարիւրաւոր աղմկալի վտակներ և օձապտոյտ ընթացքով տարածւում են հովտի մէջ։ Նորեկ ծիծեռնակը հրաւիրում է մշակին դէպի գործ։ Ծերունի Խաչօյի որդիքը արդէն սկսել են դաշտում իրանց վարը վարել։ Աշխատութիւնը սկսուել է ամեն տեղ։ Գիւղի մէջ մի անգործ մարդ չէ կարելի գտնել։ Ամեն ոք զբաղուած է իր մշակութիւններով։

Առաւօտ է։ Ծերունու տանը թոնրիկները վառւում են. մէկի վրայ դրած են պղնձէ ահագին կաթսաներ և խեցեղէն մեծ-մեծ պտուկներ ու կերակուր են եփում. միւսի մէջը հաց են թխում։ Հարսները, աղախինները, հաւաքուած թոնիրների շուրջը՝ ընդհանուր շարժողութեան մէջ են։ Տունը լցուեց կերակուրների անուշահոտ շոգիով և ներկայացնում էր մի հսկայական խոհանոց, որի մէջ, տեսնողը կը մտածէր, թէ ճաշ է պատրաստւում մի ամբողջ բանակ կերակրելու համար. և իրաւ, բացի ծերունու ահագին գերդաստանից՝ նրա սեղանից կերակրւում են բազմաթիւ հովիւներ, մշակներ իրանց ընտանիքներով, որոնք ծառայում են նրա տանը։ Ամեն օր վառւում են նոյն թոնրիկները, ամեն օր պատրաստւում է կերակուրների նոյն քանակութիւնը։ Եւ ծերունու ժրաջան հարսները մի րոպէ հանգստութիւն չունեն։ Պէտք էր ամենի մասին հոգ տանել, պէտք էր ամենին գոհացնել։

---

*) Սարերում բուսնող բանջար։

**) Ուտելու սոխ։

Բացի դրանից՝ կային տնտեսական և ուրիշ շատ հոգսեր։ Ահա այստեղ, բակում, հարսներից մէկը կովերն ու ոչխարներն է կթում. միւսը՝ օջախի վրայ կաթ է տաքացնում՝ մածուն շինելու համար. երրորդը՝ պանիր է մակարդում, չորրորդը հարում է խնոցին՝ կարագ պատրաստելու համար։ Նրանց շուրջը վազվզում են բազմաթիւ երեխաներ և խաղում են նորածին գառների ու հորթերի հետ։ Քաղցր է նայել այդ գիւղական բախտաւորութեան վրայ։ Մանուկ և գառնուկ, երկուսն էլ աճում են միասին. դրանք այն երկու հարստութիւններն են, որոնցով ուրախանում, պարծենում է գիւղացին։

Բակի արևահայեաց կողմում, պատի տակ, մինը միւսի վրայ՝ կարգով շարուած են մի քանի հարիւր մեղրի փեթակներ։ Ապրիլեան արեգակը թափում է այստեղ իր ջերմ ճառագայթները։ Մինչդեռ հարսները միւս կողմում զբաղուած են իրանց գործով՝ ծերունի Խաչօն այստեղ բաց է անում փեթակների դռնակները։ Ճանճերը ուրախ ու զուարթ դուրս են թափւում ծակերից, սաւառնում են նրա ալևոր գլխի շուրջը, պզպզում, վժվժում, թռռթռռում են, և օդը թնդում է միլիոնաւոր միջատների ձայնից։ Գտնւում են նրանց մէջ և այնպիսի չարաճճիներ, որ կծու համբոյրներ են մատուցանում ծերունու խորշոմած երեսին։ Բայց նա ամենևին ցաւ չէ զգում, միայն ձեռքով քշելով ասում է. «Ա՛յ չար սատանայ. ինչ վնասութիւն է արել քեզ Խաչօն։

Րաֆֆի

20.

ՌՇՏՈՒՆՑԻ

Չէ կարելի տեսնել և չըհիանալ այդ առողջ, կենդանի մշտազուարթ ժողովրդով։ Նա երբէք չէ թառամում, ոպէս իր ծմակների մշտականաչ կիպարիսը։ Նա երբէք չէ ծերանում, ոպէս թաւուտների զարևոր եղնին։ Հզօր կուրծքը մերկ, զօրաւոր բազուկները հոլանի, գլխին թաղիքեայ կոնաձև քոլոզը դրած և նրա վրայ գոյնզգոյն թաշկինակներ փաթաթած, որոնց ծայրերը, ոսկեգոյն մազերի երկայն գիսակների հետ՝ թափւում են լայն թիկունքների վրայ. հագին մի կարճ քազախայ (բաճկոնակ) հագած, որի ամրութիւնը, երկաթեայ զրահի նման, կարող է դիմանալ ամենասուր դաշոյնի առաջև. ներքին հագուստը մազեղէն զոլ-զոլ անդրավարտիքի մէջ հաւաքած, —դուք կը տեսնէք Ռշտունեաց լեռների այդ զաւակին՝ որ երկայն նիզակը ձեռքին, թեթև վագրի նման, անցնում է մի ապառաժից դէպի միւսը։ Նրա նիզակը, որ երկու ծայրերում սև սուր երկաթներ ունի՝ ծառայում է և՛ իբրև զէնք, և՛ իբրև նեցուկ, որը գետնի մէջ ցցելով՝ յենւում է նրա վրայ և ոստիւններ է գործում սարսափելի վհերի վրայից։ Այդ բոլորը այնպէս արագ է կատարւում, որ դու կարծում ես, թէ նա թռչունի նման թևեր ունի և օդի մէջ սլանում է։

Նրա թաղիքեայ փափուկ տրեխների տակերը ամբողջապէս գամած են սրածայր բևեռներով, որ չըսահեն, չըսայթաքեն ժայռերի վրայ ման գալու ժամանակ։ Գօտու մէջ խրած ունի մի կեռ խենջար, որի կոթը դերձանով կապած է պատեանին. այդ կապանքը նրա համար է, որ մինչև արձակելը նրա բարկութիւնը անցնի. իսկ

երբ մերկացրեց սուսերը՝ գործողութիւնը արդէն վճռուած է. մինչև արեան մէջ չզովացնէ՝ իր տեղը չի դնի։

Թշնամու հետ անգութ է՝ իբրև գազան, բարեկամի հետ բարի է՝ իբրև հրեշտակ։ Իր հովիտների բարձրահասակ սօսիների նման գեղեցիկ է նա։ Երբ նայում է քո երեսին՝ դու զմայլում ես։ Նրա կապուտակ աչքերը այնպէս լուսափայլ, այնպէս ընդարձակ և այնպէս խոր են, որպէս այն կապուտակ ծովը, որ ծփում է նրա աշխարհի մօտ։ Նրա այրական դէմքը այնպէս արձակ ու այնպէս պայծառ է, որպէս Ռշտունեաց պարզ երկինքը։

Ռշտունեաց պարզ երկնքի նման՝ այդ խաղաղ դէմքը յանկարծ մռայլւում է, մթնում է, շանթեր է արձակում՝ երբ խաղաղ երկինքը փոխւում է և տեղի է ունենում վերահաս փոթորիկը… Այդ միջոցին նա չէ խօսում, այլ որոտում է, և այդ որոտման ձայնի մէջ դու լսում ես նախկին հայի ուժեղ բարբառը իր բոլոր կոշտ և անտաշ ձևերով։ Բայց այդ կոշտ հնչիւնները քո հոգուդ այնքան ազդու են, քո սրտին այնքան կախարդիչ են, որ որքան էլ ընկած լինես դու հոգով՝ յանկարծ ներշնչւում ես մի անբացատրելի ոգևորութեամբ...։

Րաֆֆի։

21.

Ա Ղ Ա Ս Ի

Աղասու անուշ բնաւորութիւնը, բարի սիրտն ու հոգին քիչ մարդ կ՚ունենայ։ Այն հասակը հասել էր, քսան տարին անց կացել՝ նա դեռ հօրն ու մօր առջևն այնպէս էր՝ ինչպէս մէկ անմեղ գառը։ Մէկ օր նրանց անհնազանդ չէր գտնուել, մի օր նրա բերանից մի թթու խօսք

չէր լսուած. Նրանց աչքին հանդիպելիս՝ նա նրանց միտքն իսկոյն հասկանում ու ամեն կերպ աշխատում էր, որ նրանց կամքը կատարէ։ Գիւղացիք բոլորը նրանով էին ուրախանում, նրա անունով երդւում։ Ամենքի աչքը նրա վրայ էր, նրան էր գովում, նրան էր օրհնում։ Մէկին մի փորձանք պատահելիս կամ մի հոգս ունեցած ժամանակ՝ նա անձնանուիրութեամբ նրա ցանկութիւնը կատարում, իր փափագին էր հասցնում։ Բերանի պատառը հանում էր, ուրիշին ուտացնում։ Այնքան իր ապրանքին, իր հանդին ու տաւարին չէր զգուշանում, որքան իր դրացիներին։ Տանուտէրի որդին էր, աղքատի ու չքաւորի ընկերը։ Ո՛րբ էր գնում նրա դուռը՝—սփռոցն էր բաց անում կամ քսակը, ո՛վ գութան չունէր՝ նրան իրանցն էր ուղարկում. ո՛վ փող չունէր որ մշակ վարձէ, այգումը բանեցնէ՝ ինքն առաջ ընկնում, գիւղի տղայքը հաւաքում ու գնում առանց կանչելու և խնդրելու, նրա գործը կատարում, այնպէս որ երբ այգետէրը ներս էր մտնում այգին՝ աչքը սառած էր մնում և նրան կեանք ու արև էր մաղթում։ Շատ ծնողներ երանի էին տալիս նրա ծնողներին, որ այդպիսի բարի զաւակ ունէին։ Ո՛րտեղ հրաւէրք ու խրնճոյք էր լինում՝ նա էր հիւրերի գլուխն անցնում, նրանց կառավարում և ուրախացնում։

Նրա երկայն հասակը, նրա թուխ-թուխ աչքերը, նրա ղալամով քաշած յօնքերը, նրա աննման գեղեցիկ դէմքը, նրա անուշ լեզուն, քաղցր ձայնը, նրա լայն թիկունքն ու բարձր ճակատը մարդու խելք էին տանում. տեսնողը երեսին նայելով չէր կշտանում։ Սազը ձեռքն առնելուն պէս՝ քարին, փայտին շունչ, հոգի, լեզու էր տալիս։ Ուղիղ է, արևը երեսն այրել, գոյնը փախցրել էր. բայց ծիծաղելիս, երբ աչք ու յօնքը բաց էր անում՝ կարծես վարդ էր բացւում, երեսից լոյս թափում։ Նրա հրացանի գնդակը ապարդիւն չէր անցնում։ Սիրտը այնքան բարի էր, որ զուր տեղը թռչուն էլ չէր սպանում, մրջիւնը

Այդպիսի բարբարոսութիւնների շատ է ականատես եղել և Կարինը։

Պատմութիւնից յայտնի է, որ դեռ Ե-րդ դարում Ք. յ. Անատոլ անունով մի յոյն զօրավար հայոց Կարին գիւղը ամրացնելով քաղաք դարձրեց և ի պատիւ Յունաց Թէոդոս կայսեր այդ քաղաքը Թէոդուպոլիս անուանեց։ Այնուհետև քրիստոնեայ յոյները և կռապաշտ պարսիկները երկար կռւում էին իրար դէմ Հայաստանը իրար ձեռքից խլելու համար։ Իսկ Է-րդ դարում Հայաստանի վրայ յարձակուեցին մահմեդական արաբները և տիրելով մեր երկրին գրաւեցին և Թէոդուպոլիս քաղաքը, որին տուին Արզրում անունը, որ նշանակում է յոյների (ուրում) երկիր։ Արաբներից յետոյ Հայաստանը աւերեցին թաթարները, որոնց ցեղերից մէկը, այսինքն թիւրքերը, վերջնականապէս հաստատուեցին Հայաստանում տասնևվեցերորդ դարի սկզբում։ Այդ ժամանակից սկսած մինչև օրս Կարինը մնում է թիւրքաց ձեռքում։ Զարմանալի չէ, որ այդքան փոփոխութիւններից յետոյ Կարինում այժմ դժուար է հին Հայաստանի յիշատակներ գտնել։

Կարինը այժմ թիւրքաց Հայաստանի ամենամեծ վարչական կենտրոնն է։ Նա Էրզրումի նահանգի կամ վիլայէթի գլխաւոր քաղաքն է և առաջնակարգ ամրութիւնն է։ Կարինը գտնւում է այն մեծ ճանապարհի վրայ, որը Տրապիզոնից տանում է Պարսկաստան։ Կարինը թիւրքաց Հայաստանի այն գլխաւոր առևտրական կենտրոնն է, ուր Հայաստանի զանազան կողմերից հաւաքւում են ամեն տեսակ բերքեր և ապրանքներ։ Այսպէս, օրինակ, Բաղէշից բերում են Կարին կարմիր կտաւ, Վանից՝ շալեր, Արաբկերից՝ բամբակից մի գործուածք, որ կոչւում է մանիսայ, Խարբերդից՝ գինի և մետաքսի մի գործուածք, որ կոչւում է գեազի, իսկ Բարձր Հայքի զանազան կողմերից ստացւում են մեծ քանակութեամբ գայլի, աղուէսի, կուզի և այլ թանձրամորթ գազանների մորթիներ։

Կարինը կապւում է Անդրկովկասի հետ Կարս քաղաքի միջոցով։

Չը նայած իր վարչական և առևտրական նշանակութեան՝ Կարինը շատ ողորմելի արտաքին տեսք ունի. նրա փողոցները նեղ են, ծուռ ու մուռ ու կեղտոտ. տները փոքր են և անշուք. չեն երևում եկեղեցիների գմբէթներ, այլ քաղաքի զանազան կողմերում բարձրանում են մզկիթների մինարէներ։

Կարին քաղաքում ապրում են մօտաւորապէս 8 հազար տուն բնակիչներ, որոնցից հազիւ 3 հազար տունը հայ, իսկ մնացածը՝—թիւրք։ Բացի հայերից և թիւրքերից կան նաև սակաւաթիւ պարսիկներ, եւրոպացիք և յոյներ։ Հայերի թիւը պակասեց՝ երբ 1829 թուականի ռուս-տաճկական պատերազմից յետոյ հայերի մի մասը թէ քաղաքից և թէ շրջակայ գիւղերից գաղթեց ռուսաց Հայաստան։ Այդ գաղթականներն հաստատուեցին Ալեքսանդրոպոլի, Ախալցխայի և Ախալքալաքի կողմերում։

Կարինի հայերը, ինչպէս և թիւրքաց Հայաստանի և Կ. Պոլսի բոլոր հայերը, խօսում են և գրում Արարատեան բարբառից տարբեր բարբառով։ Թիւրքաց հայերի բարբառով են խօսում և այնտեղից գաղթած հայերը։ Այսպէս ահա նոր հայոց գրականական լեզուն կազմուած է երկու ճիւղից—արևելեան կամ ռուսահայոց և արևմտեան կամ թիւրքահայոց, իսկ Պարսկաստանում աւելի տարածուած է ռուսահայոց բարբառը։

Լ. Ս.

սկսում է մտածել. «Ո՜րքան բախտաւոր ապրում են այստեղ մարդիկ»... Իսկ այդ ճոխութիւնները, բնութեան այդ պարգևները չեն պատկանում այն բեւրաւոր աշխատող ձեռքերին, որոնք դաշտերի վրայ, արևի կրակոտ բոցերի մէջ քրտինք են թափում։

Ահա գիւղերում այստեղ և այնտեղ բարձրանում են ամրոցներ, որոնք իրանց հպարտ աշտարակներով և ատամնաւոր պարիսպներով իշխում են շրջակայքի վրայ. նրանց մէջ բնակւում են «աղաները» իրանց ախտերով և մոլութիւններով.—ահա նրանցն է պատկանում երկրի բոլոր բեղմնաւորութիւնը, նրանք են շռայլում մշակ մարդու աշխատաւոր ձեռքի վաստակը։

Սալմաստի հին քաղաքը կորցրել է իր անունը, իսկ նորը կոչւում է Դիլիման։ Այս քաղաքում բնակւում էին չորս ազգութիւններ—հայ, թուրք, ասորի և հրէայ. իւրաքանչիւր ազգութիւն զետեղուած էր առանձին թաղերում։ Հայերը ունէին երկու եկեղեցի, իսկ ասորիները՝ մէկ։ Հին քաղաքը արժանի էր իր կոչմանը. այստեղ, կարծես, մի քանի քաղաքներ շինուած էին մինը միւսի վրայ։ Նոր շէնք կառուցանելու համար նիւթեր պէտք չէին. քանդում էին գետինը և հողի տակից դուրս էին բերում ահագին քանակութեամբ աղիւս, կոփածոյ քարեր և շատ անգամ բացւում էր մի ընդարձակ, ստորերկրեայ բնակարան։ Ո՜րքան փորձանքներ, ո՜րքան յեղափոխութիւններ պէտք է կրած լինէր այդ քաղաքը. ո՜րքան ազգեր այնտեղ բնակել և անհետացել էին. իսկ հայը, նրա նախկին բնակիչը, դեռ մնում է։ Արաբներից մնացել էր մի լայնատարած գերեզմանատուն միայն, գեղեցիկ զարդարած տապանաքարերով։

Հայերի տները թէև փոքրիկ էին, բայց հովանաւորուած պարտէզներով և ծառերով՝ գեղեցիկ տեսք ունէին։ Տները շատ սերտ և անմիջական կերպով կցուած էին մինը միւսի հետ, այնպէս որ տանիքների վրայով կարելի

էր հայոց թաղի մի ծայրից մինչև միւսը գնալ։ Բոլոր տները ունէին գաղտնի հաղորդակցութիւն։ Այդ հաղորդակցութիւնը պահպանւում էր զանազան ծակերի միջոցով, որ բացուած էին մի տանից միւսի մէջ։ Ծակերը բացուած էին աննկատելի տեղերում։ Նրանցից շատերը այնքան նեղ էին, որ մի ձեռք միայն կարելի էր անցկացնել, և ծառայում էին աւելի բանաւոր հաղորդակցութեան համար։ Երբ պատահում էր մի անսովոր դէպք՝ մի քանի րոպէի մէջ թաղի միւս ծայրում արդէն գիտէին։ Ամէն մի լուր, ամէն մի խօսք, ծակերի միջոցով, կայծակի արագութեամբ տարածւում էր ամբողջ թաղի մէջ, առանց մի մարդ իր տանից դուրս գալու։ Ծակերից շատերը այնքան մեծ էին, որ կարելի էր, մանաւանդ վտանգի ժամանակ, մի տան կայքը թագցնել կամ տեղափոխել միւսի մէջ և կամ հարևանի մօտ ապաստան գտնել։ Թագստի համար իւրաքանչիւր տան մէջ կային ստորերկրեայ մառաններ, որոնց գաղտնի մուտքը միայն տան տիրոջն էր յայտնի։

Րաֆֆի

23.

ԿԱՐԻՆ ԿԱՄ ԷՐԶՐՈՒՄ

Կարին քաղաքը գտնւում է Եփրատ գետի ակունքների մօտ, Թիւրքաց Հայաստանի այն մասում որը հին ժամանակ կոչւում էր Բարձր Հայք։

Հայաստանի ամէն մի թիզ հող հին ժամանակներից տկսած օտարները աշխատել են խլել. յոյն, պարսիկ, արաբ, թաթար, թուրք և այլ ցեղեր Հայաստանին տիրելու համար նրան աւերել են, նրա բնակիչներին կոտորել։

չէր կոխում. բայց երբ Թուրքերը գնում այգին լցւում էին, կամ իրան էին ուզում սպանել կամ զրացուն՝ այն ժամանակ եթէ երկնքում էլ լինէր՝ ցած էր իջնում. գիւղի ծայրիցը ձայն տալին՝ իսկոյն մի ակնթարթում պատրաստ էր. և եթէ բանը խօսքով չէր վերջանում՝ այն ժամանակ նա իր սրի, հրացանի ու բազկի շնորհքն այնպէս էր ցոյց տալիս, որ թշնամին մնում էր կատու դարձած, կամ նրա ձեռքին զոհ գնում։

Այնչափ ուժեղ էր, որ ձեռքը տղամարդու գօտիկը ձգելիս՝ հաւի ձագի պէս բարձրացնում, իր գլխի ծայրին էր հասցնում, պտոյտ տալիս և կրկին ցած բերում։ Ձի հեծնելիս՝ հէնց որ ձեռքը բարձրացնում էր՝ առիւծ ձին խոնարհում էր ու մէջքը դէմ անում։ Գոմշի կամ եզան պարանոցին մէկ սուր խփելով՝ այնպէս էր դուրս կտրում, որ սրի ծայրը գետինն էր խրւում։ Յաճախ, կռուի ժամանակ, հէնց որ նրա ձայնը լսում էին՝ ճանճի պէս ցրւում, ցիր ու ցան էին լինում, կորչում։ Մականունը Ասլան-Բալասի *) էին դրել։

Բայց այսքան զարմանալի յատկութիւններն ունենալով՝ դարձեալ երեխայի հետ երեխայ էր, մեծի հետ՝ մեծ։ Խանի, շահի առաջն այնպէս էր կանգնում, պատասխան տալիս, որ կարծես թագաւորի որդի լինէր։ Ծիծաղն ու խնդութիւնը նրա երեսից պակաս չէր երբէք,—այնքան պարզ էր նրա սիրտը, այնքան հանգիստ նրա խղճմտանքը, այնքան արդար նրա հոգին։ Նրա ամեն մի խօսքը անգին գոհար էր։

Սրովեանց

*) Ասլանի (առիւծի) որդի։

22.

ՍԱԼՄԱՍՏ

Պարսկաստանի Ատրպատական կոչուած նահանգի ամենահարուստ գաւառներից մէկն է Սալմաստը։ Նա բռնում է Ուրմիոյ ծովակի արևմտեան ափերը և շրջապատուած լեռների ալիքաւոր բարձրութեամբ՝ կազմում է մի գեղեցիկ, բոլորակ հովիտ, որ ոռոգւում է Սօլայ գետով։ Այդ գետը Սալմաստի Նեղոսն է, որի բազմաթիւ ճիւղերի վրայ, մինը միւսի մօտ, շարուած են մեծ և փոքրիկ գիւղեր, որոնց գեղեցիկ երևոյթը ամենևին չէ համապատասխանում աղքատ բնակիչների անմխիթար վիճակին։

ժամանակներում եղել է Հայ-
Սալմաստը որպէս հին
աստանի բազմամարդ գաւառներից մէկը, և այժմ նրա
բնակիչների մեծ մասը բաղկացած է հայերից։ Մնացեալ
ազգաբնակութիւններին պատկանում են Թուրքերը, հրէա-
ները, ասորիները և քրդերը,—այդ բոլորը միասին վեր
առած՝ հազիւ թէ հայերի կէս մասին են հաւասարւում։

Երբ չերմ, ամառնային օրերում մարդ հեռուից նայ-
ում է Սալմաստի պայծառ արեգակի ճառագայթներով
լուսաւորուած հովտին. նա տեսնում է՝ դաշտերը, մշակուած
աշխատասէր ձեռքով՝ խոստանում են առատ հունձք.
տեսնում է՝ ցորենը, գարին, բրինձը, բամբակը և ընդե-
ղէնների ամեն տեսակները ներկայացնում են խիստ գո-
հացուցիչ առատութիւն. տեսնում է՝ մրգաբեր այգիները
լիացած են պտուղների ամենազնիւ տեսակներով. տես-
նում է՝ խոտաւէտ արօտամարգերի վրայ արածում են
տաւարների նախիրներ և ոչխարների հօտեր,—մի խօս-
քով, նա տեսնում է, որ բնութիւնը անխնայ առատու-
թեամբ թափել է այստեղ իր հարստութիւնները։ Նա

24.

ԱՄԱՌՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Ա.

Ճաշուայ շոգն անց էր կացել։ Սար ու ձոր գլուխները նորից բարձրացնում էին, որ փոքր շունչ առնեն։ Արեգակը Մասիսի քամակիցը աչքը հանդարտ բաց էր արել, մունջ-մունջ Երևանի բերդին էր մտիկ տալիս և ուզում էր, որ կամաց-կամաց ներս մտնի։

Թանձր խաւարը, սև մառախուղը եկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացել էր։

Թռչունը տեղիցը չէր ուզում շարժուել, հաւը բնիցը գլուխը հանել։ Ամեն տեղից տաքը խաղաղուել, ամեն տեղից ձայն ու ձոր լռուել, պապանձուել էր։

Ջուր ջրողը առուի վրայ էր թեք ընկել, քնած մնացել. վար ու ցանք անողը՝ հանդումը, այգեպանը՝ իւր ծառի տակին, շուաքումը քուն մտել, հանգստացել։ Մարդ, կին, մանուկ գիւղերումն էլ չէին երևում... Մի ինչ-որ բլրի ծայրից, մի սարի լանջից, մի ճանապարհում, հանդում մէկ սև մազի չափ ստուեր սևին էր տալիս, ձիու քամակից դէս ու դէն թեքւում, երեսի, քամակի վրայ շուռ գալիս, էլ յետ գլուխը շտկում, ասպանդակն ու սանձը ժաժ տալիս, ձիուն թափիկ տալիս, կամ մտրակում, որ ոտները մի քիչ շուտ-շուտ փոխի, շուտ տեղ հասնի։ Բազինն էլ, ձեռն ականջի քամակին դրած, տըխուր բարակ ձայնով մէկ բայաթի էր բարձրացնում քթի տակին, ձիու սանձը գլխին գցած, ինքն իրան նզզում, գնում էր, որ տուն հասնի, իւր յոգնած, ջարդուած մարմինը կամ մէկ շուաքի տակին հանգստացնի, կամ իրան տան դուռը, իւր ընտանիքի երեսը, քանի որ դեռ մութը վրայ չէր հասել՝ տեսնի ու սիրտը բացուի։

Հօտաղներն էլ իրանց գութանի լծկանը բաց էին թողել, լուծը յետ արել ու մէկ ստուերի տակ գութանը մէկ կողմը, եզները միւս՝ ջրերի ափին վեր էին թափուել, քաղցը քուն մտել։ Նախիրը մէկ դաշտում, ոչխարի հօտը՝ միւս, շուաք տեղը նստել, ծնօտ ծնօտի էին քսում, փնչացնում, որոճ անում։ Հովիւն էլ, գլուխը մէկ քարի վրայ դրած, նզզել, աչքը կպցրել էր, որ շոգը քաշուի թէ չէ՝ վեր կենայ, հօտը իրիկնահովին մէկ լաւ խոտաւէտ տեղ տանի, արածացնի։

Արթուն շների մէկը այս ցցի վրայ, մէկը միւս բլրի ծայրին, կամ հովուի ոտի տակին՝ գլուխը դրել, նօթերը կիտել, մարաղ է մտել, որ թէ գող, գայլ, գազան սիրտ անի, մօտենայ՝ մէկէն իմէկ վրայ թռչի, պատառ-պատառ անի, իւր տիրոջ ոչխարները պահի։ Մէկ կանաչ խոտ, մէկ դալար թուփ կամ մէկ ծաղիկ ոչ մէկ տեղ չէր երևում, որ մարդն հոտն առնի, կամ երեսին մտիկ տայ, սիրտը բացուի ու իւր ճանապարհի երկարութիւնը մոռանայ, կամ շոգի ձեռիցն այրուած խորովուած մարմնին հովութիւն տայ.—այսպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձուել, պապանձուել։ Միմիայն խոտերի ցօղուններն ու թփերի սուր-սուր ծայրերն էին այստեղ-այնտեղ ցից-ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում, մոլորուած, պաշարուած կանգնել, մնացել։

Սև-սև գիշակեր ագռաւները կամ վախլուկ տուլաշներն էին հէնց մենակ մնացել, որ այստեղ, մէկ քարափի ծայրի, մէկ բուրջի գլխի, կամ թէ չէ ճանապարհի միջում իրար գլխի հաւաքուել էին, նստել, կամ պտոյտ էին գալիս, իրար կտցահարում, իրար թևերից քաշում, որ մէկի գտած որսը ձեռիցը խլեն, բաժին անեն, իրանց ձագերին էլ տան կամ հետները տանեն։

Օձ, կարիճ, մողէս, բզէզ ու ինչ կերպ գազան ասես, մորեխ, մժեղ, հանդէս էին բաց արել։ Ո՛րը մէկ թփի տակից, ո՛րը մէկ քարափի գլխից, որը խոտերի միջին՝

կամաց-կամաց ժաժ գալով, պոչ ու գլուխը իրանց քաշելով, կամ ծլունգ լինելով, էլ յետ սուս անելով, կամ գետնի, ապառաժի վրայ սողալով, փշտացնելով, շուացնելով, փշշացնելով, ծվվալով, ծղրտալով՝ ոտն էին ելել, ուզում էին իրանց արևի ձէնն ածեն։

Որն էլ իւր բնի առաջին արևկող անելով՝ *) գլխները հանել, մունջ-մունջ ականջ էին դրել, սուր-սուր աչքները ցցել, պէլացել, շլացել. այս կամ այն կողմն էին մտիկ տալիս, որ ոտքը խաղաղուելիս՝ դուրս գան, մի քիչ շունչ քաշեն, իրանց կերը ճանկեն, էլ յետ իրանց բունը մտնեն, էլ յետ գնան քնեն, հանգստանան։

Մի որևէ պատածակի արանքից կամ քարի ծայրից էլ մէկ անճար բու, գլուխը վէր թողած, քիթ ու պռունկ կիտած, ծանրացած, գետնին էր նայում, իւր սև օրը ողբում։ Հաւի թշնամի ուրուրն էլ, թևերը փռած, ճանկերը սրելով, բաց ու խուփ անելով, կտուցը սրբել, կամ կուրծքը քչքչելով՝ երկնքի երեսին, գլուխը կուրծքի տակին քաշ գցած՝ սուր աչքերն այս կողմն այն կողմն էր գցում, պտտում, պատրաստւում, որ մէկէն իմէկ, յական թօթափել, վայր վազի կամ լեպոր ճուտերի գլխին, որ մօր թևերի տակին կամ մօր գլուխը քորելով, թևը քաշելով, ծվծվալով, կտկտալով կամ կտուց կտցի տալով՝ մօր կռխալուն, ծլվլուն ականջ դնելով, սուսուփուս նստում էին իրար հետ կամ քչուչ էին անում, կամ մէկ խեղճ անճար լորի քամակի խփի ու ծվծվացնելով, ծղրտացնելով՝ վեր քաշի, քըքրի, փետրի ու իւր ագահ փորին մատաղ անի..։

Բ.

Այսպէս մեռել լռել էր բնութիւնը ու ոչ մէկ շփըլ-

---

* Կողքը արևին արած՝ տաքանալ։

թու մէկ տեղից չէր լսւում։ Միմիայն հեռու տեղից մէկ բարակ քամի երբեմն փչում, ծառի տերևները սլսլացնում, ժաժ էր գցում ու գոլ-գոլ մարդի երեսին, բերնին քնքուշ ձեռը քսում, շուտով անց կենում ու փշերի, խոտերի, քարափների, ձորերի մէջը մտնում։

Ինչպէս ծխի մէջ խրուած՝ հեռու տեղից դաշտի գիւղերը, հանդերը, փոսերը մթնած, լռուած, ինչպէս սև ամպի կտորներ կամ այրուած, խանձուած տեղեր՝ այստեղից այնտեղից սևին էին տալիս ու խառնիխուռն երևում։

Արաքսը, ինչպէս մէկ նետ օձ կամ արծաթի գօտի՝ լուսաարևմտեան կողմիցը, ձորերի միջիցը իւր սուր, լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել ու մրմունջ, լուռ, հանդարտ գալիս, Մասիսի փէշին մի քիչ խփում, շփում էր ու էլի խէթ-խէթ նայելով, նորան սպառնալիք տալով, ձէնը ձոր անելով, գլուխը պտտելով՝ գնում Ջանգու-[illegible]Ցառնի գետերն իւր ծոցն առնում և խաղալով, խայտալով, վշվշալով՝ հեռանում քոյրերի հետ ու պռունկ պռունկի, լանջ լանջի, քամակ քամակի տուած, իրար գլխի, երեսի ձեռ քսելով, փաղաքշելով, հանաք անելով՝ աչքերը խփում, նզզում ու Ձարուրի տափարակ ծոցումը ծեծուած, ջարդուած քուն մտնում։

Այս տխուր հրապարակի չորեքշուրջը՝ աչքդ որ բաց չես անում, մէկ էլ ես տեսնում, որ երբեմն երկինքն ամպակալած՝ ուզում է որ սար ու ձոր ոտնատակ տայ, Արագածի, Մասիսի ու միւս սարերի գլխին բամբաչի, գետնին խցկի, որ համարձակւում են իրանց գագաթն այնպէս բարձր վէր քաշել, որ բոլոր ամպերը վերևը ոտը բռնելու տեղ չունենալով, իրանց երկինք մօրիցը խռոված՝ վէր են գալիս ու նրան գլխին քուլայ-քուլայ դիզւում ու այնպէս իրար վրայ նստում, որ շատը, տեղ չունենալով, միւսներին քթինչ է տալիս, բոթբոթում, դուրս է գցում ու նրանց տեղը բռնում։

Խ. Աբովեանց

25.

ՏԱՐՕՆԻ ԱՌԱՒՕՏԸ

Փոթորկային գիշերին յաջորդեց գարնանային խաղաղ, հովասուն առաւօտը: Ողական ամրոցը շրջապատող ծառազարդ բլուրները մխում էին ձիւնի պէս ճերմակ գոլորշիներով: Սար ու ձոր, դար ու դաշտ պատած էր անթափանցիկ մառախուղով: Օդի մէջ լողացող ջրային շիթերը, արեգակի առաջին ճառագայթներից, փառում էին միլիոնաւոր ոսկեայ ուլունքների նման: Ծառերի տերևները, խոտերի ծղօտները, հովիտների նախշուն ծաղիկները, ցօղուած անձրևային կաթիլներով՝ կարծես սփռուած լինէին գոյնզգոյն գոհարներով:

Վաղորդեան մառախուղը հետզհետէ նօսրանում էր, նրբանում էր՝ որքան արեգակը բարձրանում էր հորիզոնի վրայ: Այժմ մշուշի միջից, որպէս թափանցիկ շղարշի միջից, սկսեցին նկարուել հեռաւոր պատկերները: Երևում էր Սիմ լերան կանաչազարդ շղթան, մեղմ ալիքներով և ձիւնապատ գագաթներով, որոնք արևի ճառագայթների առջև փայլում էին վարդագոյն ներկով: Իսկ աւելի հեռու, դէպի Գրգուռ և Նեմրութ լեռների կողմերը, մանիշակագոյն ժապաւէնի նման, երևում էր Բզնունեաց ծովակի միայն նեղ շերտը: Երևում էին Քարքէ լերան բարձրութիւնները իրանց մթին ծմակներով և մռայլ անտառներով, որոնք իրանց անմատչելի թաւուտների մէջ մնուցանում էին մի մռայլ ժողովուրդ: Յիշեալ լեռների հսկայական շրջանակի մէջ, որպէս մի սքանչելի պատկեր, երևում էր Մուշի ընդարձակ դաշտավայրը, հարթ-հաւասար, իբրև մի լայնածաւալ, նախշուն գորգ: Ահա Մուշը խորին պատկառանքով բազմած է Տաւրոսի լանջերի վրայ: Ահա Մեղտի գետի օձապտոյտ ափերի

մօտ երևում են Օձ քաղաքի բարձր աշտարակները: Ահա Վիշապ քաղաքը, վիշապի լայն բերանի պէս բացուած, ահարկու դռներով: Ահա Կաւկաւ քաղաքը... ահա սպիտակ Չինակերտը...:

Արածանին կէս է կիսում Մուշի լայնատարած դաշտավայրը: Զայրացած է այս առաւօտ Արածանին: Բայց նրա զայրոյթը մայրական է, չէ վախեցնում հարազատ որդուն: Ահա նրա զօրեղ կօհակները տանում են իրանց հետ մի ամբողջ նաւատորմիղ—նախնական մարդու նաւատորմիղը: Բարեկամները ափերի մօտ կանգնած՝ «յաջողութիւն» են բարեմաղթում: Նաւորդները գետի միջից «մնաք բարեաւ» են ասում: Եւ թեթև մաշկապատ նաւակների խումբը, բեռնաւորուած հայոց երկրի բարիքներով՝ նաւողում է դէպի հեռաւոր աշխարհ, դէպի Բաբելոն: Նաւորդների երգը, նրանց ուրախաձայն աղաղակները, միախառնուելով գետի խուլ որոտման հետ, թնդացնում են շրջակայքի խորին անդորրութիւնը:

Մուշի դաշտավայրը չորս կողմից շրջապատուած լինելով բարձր լեռներով՝ այդ բնական ամրութիւնները, հսկայական շրջապարիսպի նման, պաշտպանում էին երկիրը թշնամու յարձակումներից: Բացի բնական ամրութիւններից՝ նոյն լեռների բարձրաւանդակների վրայ դրած էին Տարօնի իշխանների անմատչելի բերդերը և նրանց ահռելի ամրոցները, որպիսիք էին Եղնուտը, Մեծամօր ամրոցը, Աստղաբերդը, Այծից բերդը և Ողականը:

Աշտիշատի վանքից շատ հեռու չէր Ողական ամրոցը. նա կանգնած էր Քարքէ լերան ապառաժների վրայ և խրոխտ, վեհապանծ դէմքով նայում էր դէպի իր ստորոտով հոսող Արածանին: Զանազան գաղտնի անցքեր ստորերկրեայ ճանապարհներով իջնում էին ամրոցի բարձրութիւնից կամ դէպի գետը, պաշարման ժամանակ ջուր ստանալու համար, և կամ տանում էին դէպի անտառի խորքերը, դրսի հետ գաղտնի հաղորդակցութիւն ունենա-

լու համար։ Այդ անցքերի մուտքերը յայտնի էին միայն ամրոցի տէրերին։ Ամրոցի բարձր շրջապարիսպը, ահագին բուրգերը, բարձր աշտարակները դարերով մարտնչում էին բնութեան արհաւիրքի և թշնամու յարձակման դէմ և միշտ մնում էին անպարտելի։ Նա հովանաւորուած էր հին, հսկայ կաղնիներով, որոնց վերամբարձ կատարները մրցում էին ամպերի հետ։

Այս ամրոցը ամենահին ժամանակներում, Քրիստոսից շատ դարեր առաջ, պատկանում էր Սլկունեաց իշխաններին, որոնք Տարօնի նախկին տէրերն էին։ Իսկ Վաղարշակ Ա-ի օրերում, Քրիստոսից 150 տարի առաջ, Սլկունիները աւելի նշանակութիւն ստացան, որովհետև Վաղարշակը, հայոց բոլոր նախարարութիւնները կարգի դնելով՝ Սլկունիների քաջ և ուսորդութեան մէջ յաջողակ իշխաններին ևս նախարարութեանց կարգն անցրեց և նրանց յանձնեց արքունի որսորդութեան գլխաւորութիւնը։ Բայց Տրդատի օրերում, 320 թուին Քրիստոսից յետոյ, Սլկունիները ապստամբուեցին թագաւորի դէմ։ Տրդատը խոստացաւ, թէ Սլկունիների ամբողջ ժառանգութիւնը, Տարօնը, նորան կը նուիրէ՝ ով որ կը ձերբակալէ ապստամբ Սլուկին։ Ճենացի Մամգուն իշխանը յանձն առաւ կատարել թագաւորի ցանկութիւնը, և դաւաճանութեամբ սպանեց Սլուկին։ Նրա բոլոր տոհմը սրի ճարակ եղաւ Ողական ամրոցի մէջ։ Իսկ Մամգունը այդ ծառայութեան համար ստացաւ, որպէս ժառանգութիւն, թէ Ողական ամրոցը և թէ Տարօնը։ Մամգունից առաջ եկաւ Մամիկոնեան մեծ նախարարութիւնը, որոնք որդոց որդի ժառանգեցին Տարօնը։

Րաֆֆի

26.

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ԱՌԱՒՕՏԸ

Առաւօտ էր, Արարատեան դաշտի լուսապայծառ առաւօտներից մէկը։

Արևի առաջին ճառագայթների ներքոյ՝ Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագոյն շողքերով, որ աչք էին շլացնում։ Արագածի պսակաձև գագաթը չէր երևում։ Նա դեռ պատած էր ձիւնի պէս ճերմակ մշուշով, որպէս մի ամօթխած հարսիկ, որ սքօղում է իր դէմքը անթափանցիկ շղարշով։ Կանաչազարդ դաշտավայրը, ցօղուած վաղորդեան մարգարիտներով, վառւում էր ծիածանի ամենանուրբ գոյներով։ Փչում էր մեղմ հովիկը․ ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբոյսերը ծփում ու ծածանւում էին, և դաշտի խաղաղ տարածութիւնը օրօրւում էր սքանչելի ալէկոծութեամբ։

Գեղեցիկ էր այդ առաւօտը։

Թռչունները ուրախ-ուրախ ճախրում էին մի թուփից դէպի միւսը։ Գոյնզգոյն թիթեռները, գոյնզգոյն ծաղիկների նման, ցանուած էին օդի մէջ։ Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևքերով թափահարում էր, շտապելով դէպի Արաքսի մօրուտները։ Ձեռնասուն եղջերուները, վայրենի վիթն ու այծեամը, դուրս էին եկել Խոսրովի արքայական անտառներից և ազատ համարձակ վազվզում էին շրջակայ մարգերի վրայ։

Չէր երևում միայն մարդը։

Ամեն առաւօտ, արծաթեայ փողերի հնչիւնը, որսորդական բարակների ունչիւնը, սիգապանծ նժոյգների խրըխինջը խռովում էին սորամուտ անասունների վաղորդեան հանգիստը։ Ամեհի վարազը սարսափելով նետւում էր մը-

թին շամբուտների մէջ, իսկ թաւամազ արջը ապաստանի տեղ էր որոնում։ Իսկ այս առաւօտ չըկային նրանք— չըկային նախարարական իշխանազն պատանիները, որոնց որսորդական ուրախ զուարճութիւնները մի առանձին կենդանութիւն էին տալիս երէաշատ դաշտավայրին։

Ամեն առաւօտ թռչունը կարդում էր իր նախարշալոյսեան մեղեդին, և նրա հետ լսելի էր լինում ժրաջան մշակի երգը։ Փայլում էր մանգաղը, եռում էր գործը, և ոսկեղէն հունձքը, իր լիառատ բեղմնաւորութեամբ՝ պարգևատրում էր վաստակաբեկ շինականի աշխատանքը։ Իսկ այս առաւօտ չըկար հնձաւորը, չըկար և հերկավարը։ Հասունացած արտը մնացել էր կիսաքաղ, և անվաստակելի արօրը անգործ ընկած էր դեռ չըվերջացած ակօսների մօտ։

Ամեն առաւօտ սուրբ տաճարի կոչնակի առաջին հնչման հետ՝ զարթնում էր հովիւը։ Ոչխարների անուշ բառանչը, արջառների ուրախ ձայնարկութիւնը, կենդանացնում էին խոտաւէտ հովիտները խիստ ախորժելի աղմուկով։ Իսկ այս առաւօտ չէին երևում ոչ հովիւը և ոչ նրա հօտերը։ Ցիրուցան գառնուկները թափառում էին սար ու ձոր և հայրակորոյս որբիկների նման կարծես որոնում էին հովուին։

Ամեն առաւօտ, երբ ծագում էր տուընջեան լուսատուն՝ նրա առաջին ճառագայթները ողջունում էին շինական աղջիկների աշխատանքը։ Կարմիր, դեղին, կապոյտ հագուստներով, որպէս կարմիր, դեղին, կապոյտ ծաղիկներ՝ սփռուած էին լինում նրանք այգիներում, բանջարանոցներում և ագարակներում։ Երգում էին և գործում էին։ Եւ նրանց ուրախութեանը ձայնակից էր լինում երգասէր սոխակը։ Իսկ այս առաւօտ չէին երևում անխոնջ մշակուհիների այդ գեղեցիկ զարդերը։ Այգիները մնացել էին անխնամ, ագարակները կորցրել էին իրանց սիրելի բանուորներին։

Արևը բարձրացաւ, և որքան բարձրանում էր նա՝ այնքան Արարատեան ընդարձակ դաշտավայրը, որպէս մի հսկայական բուրվառ, խնկարկում էր իր վաղորդեան անուշահոտութիւնը։ Ամբողջ հովիտը ծխում էր, գոլորշիանում էր։ Ցօղազարդ բուսականութիւնը յետ էր տալիս երկնքին իր ընդունած մարգարտեայ կաթիլները։

Ծխում էին և դաշտավայրի վրայ խիտ առ խիտ սփռուած գիւղերը։ Բայց այդ ծուխը չէր նմանում այն խաղաղ, կապտագոյն ծուխին, որ ամեն առաւօտ օձապտոյտ սիւնակներով վեր էր բարձրանում խրճիթների գմբէթաձև երդիկներից։ Այդ ծուխը, սև մառախուղի նման, ծածկել էր գիւղերը, և մերթ ընդ մերթ նրա մթին թանձրութեան միջից փայլատակում էին հրային կայծեր..։

Ծխում էին և մեծաշէն քաղաքները։ Ծխում էր Դուինը, ծխում էր Արտաշատը, ծխում էր Վաղարշապատը, ծխում էր Էջմիածնի վանքը... Եւ թանձր ծուխը նսեմացնում էր Արարատեան դաշտի լուսապայծառ գեղեցկութիւնը..։

Ոչ ոք չէր երևում։ Ամենուրեք տիրում էր տխուր, անապատական դատարկութիւն։ Դատարկ էին քաղաքները, դատարկ էին գիւղերը, դատարկ էին և ճանապարհները։ Ի՞նչ էր պատահել։ Կարծես թէ մի մահաբեր շունչ անցել էր այդ սքանչելի դաշտի վրայով և մարդկային ամեն արարած ոչնչացրել էր..։

Բայց ահա, դէպի Արտաշատ տանող ճանապարհի վրայ փոշի էր բարձրանում։ Անցնում էին մի խումբ ձիաւորներ։ Ձիների հարուստ ասպազէնքը, հեծեալների թանկագին զէնքն ու զրահը ցոյց են տալիս, որ այդ մարդիկը հասարակ ճանապարհորդներ չեն։ Մի վայելչագեղ երիտասարդ առաջ է ընկած, միւսները հետևում են նորան։

Նրանք հասան Արտաշատ քաղաքի կիսափուլ պարիսպների մօտ։ Այստեղ երիտասարդը կանգ առաւ, մի

քանի րոպէ իր տխուր հայեացքը դարձրեց դէպի աւերակ և տակաւին ծխուող քաղաքը և ապա ճանապարհը ծռեց դէպի Տափերական կամուրջը։ Նա գալիս էր հեռուից, շատ հեռուից, և այսպիսի հրդեհուած, անմարդացած քաղաքներ շատ էր տեսել իր ճանապարհի վրայ։ Այդ էր պատճառը, որ նրա .քնքոյշ սիրտը կարծես թէ ամրացել էր, նրա վառ զգացմունքները կարծես թէ սառել էին, և նրա թախծալի աչքերում մի կաթիլ արտասուք անգամ չէր մնացել, որ թափէր դժբախտ Արտաշատի վրայ։

Տափերական կամուրջը միակ անցքն էր, որ Արտաշատից տանում էր դէպի Արաքսի աջ ափը։ Նա հասաւ կամուրջին, բայց չանցաւ կամուրջը։ Այնտեղ մէկին սպասում էր և լուռ մտախոհութեամբ նայում էր գետի վրայ։

Արևը տակաւին փայլում էր, ծաղիկները շողշողում էին, թռչունները դեռ շարունակում էին իրանց առաւօտեան տաղերգը։ Բնութեան այդ ընդհանուր սառնասրտութեան մէջ՝ վրդովուած էր միայն Արաքսը։ Որպէս մի սգաւոր, որդեկորոյս մայր՝ պղտոր յորձանքներով որոտում էր, աղաղակում էր, հառաչում էր նա, հեղեղելով իր կանաչազարդ ափերը։ Որպէս մի ահարկու վիշապ՝ փրփուրը բերանում, կատաղի կերպով առաջ էր մղւում, լայնանում էր, ընդարձակւում էր և կարծես որոնում էր լափելու, կլանելու այն չարագործին, որ այնպէս անխնայ ձեռքով այրեց, անապատ դարձրեց գեղեցիկ քաղաքներն ու աւանները, որ զարդարում էին իր հրաշալի ափերը։ Նրա կատաղութիւնը զսպում էր հսկայ կամուրջը, որ սեղմել էր նրան իր բազմաթիւ կամարների ներքոյ։

Կամուրջի միւս կողմում, Արաքսի աջ ափի մօտ, ընդարձակ, կանաչազարդ դաշտավայրը ծածկուած էր խիտ վրաններով։ Ուղտերի, ձիաների, ջորիների և փղերի երամակները արածում էին վրանների շուրջը։ Ճոխօրէն աճած խոտաբոյսերը առատ սնունդ էին մատակարարում

այդ անասուններին։ Այնտեղ դրած էր մի մեծ բանակ։ Երիտասարդը նայում էր դէպի բանակը։ Դա պարսից զօրքն էր, որ եկել էր աւերելու Արարատեան նահանգը առաջնորդութեամբ մատնիչ Վահան Մամիկոնեանի և ապստամբ Մերուժան Արծրունու։

Րաֆֆի

27.

ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹԻԼ

(ՀԱՐՏՄԱՆԻՑ)

Փայլուն կաթիլը գարնան անձրևի
Մի օր հարց տըւաւ իր ընկերներին.
«Ինչո՞ւ մենք այս հին, աղքատ խըրճիթի
Լուսամուտն այսպէս բաղխում ենք ուժգին»։

Կաթիլներն իսկոյն տըւին պատասխան.
—Այստեղ երկրագործ մըշակն է ապրում.
Ուրախ աւետիք տալիս ենք նորան,
Որ նորա արտը ծըլում է, ծաղկում։

Ա. Ծատուրեանց

28.

ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

(Ա. ՊԼԵՇՉԷԵՎԻՑ)

Հալւում է ձիւնը, վազում է առուն.
Ժպտում է արդէն գարունը պայծառ.

Ձուտով կը երգեն սոխակներ սիրուն
Եւ վառ կանաչով կը զուգուի անտառ։

Անամպ, խաղաղ է կապուտակ երկինք,
Ծաղկում, փթթում է չքնաղ բնութիւն.
Եւ հզօր գարնան արևը քաղցրիկ
Ցօղում է երկրին լոյս ու ջերմութիւն։

Կեանք և բերկրանք է ամեն տեղ տիրում,
«Գարուն ես կարդում ամենքի դէմքին.
Եւ նա է ողջից առաւել խնդում,
Ով դիմացել է անթիւ ցաւերին...

Բայց կայտառ մանկանց խնդալից ձայներ,
Եւ անհոգ թռչնոց տաղերն զգայուն
Ինձ պարզ պսում են, թէ ով առաւել
Սիրում է նոր կեանք և ազատ գարուն։

Ա. Ծատուրեանց

29.

* *
*

Պարզկայ գիշեր...
Աստղերն երկնքում լուռ պսպղում են.
Լուսնի շողերը դիպել են սարի
Ձիւնոտ կողերին,—կողերը ցոլում
Պէծին են տալիս։

Ցրտաշունչ քամին
Թևերը փռած փնչում է, թռչում.
Սառած երկիրը ճաքում-ճաքճաքում

Ձեան հատիկներով քարափի կուրծքը
Ծեծում ու ծեծւում...

Անծայր ճանապարհ...
Առաջ եմ գնում—ուր,—ես չըգիտեմ.
Սառոյց ու ձմեռ,
Առաջ եմ գնում անյոյս, անընկեր
Քամի ու գիշեր.
—Ա՜խ, եթէ յանկարծ յոյսս շողշողար,—
Նա ինձ ողջունէր...

Աւ. Իսահակեան

30.

ԱՐՏՈՒՏ

Արտուտիկ, ինչու թռչում ես վեր-վեր,
Երկընքէն ասում ես տըխուր տաղեր.
Պարտէզ ու այգի ինչու չես գընում,
Քընքոյշ ձագերըդ ո՞րտեղ ես հանում։
—Ախ, շատ են, շատ են իմ կըսկիծն ու ցաւ.
Իմ մըտերիմը գընաց, հեռացաւ.
Հայ հողագործը- իմ սերտ բարեկամ,
Թըշնամու ահէն գընաց գաղթական։—
Այն օրից Հայոց դաշտք ամայացան,
Բերրի արտերը փըշով լըցուեցան...
Տափի վրայ չունիմ ես հանգըստութիւն,
Ու այդոր համար երկինք եմ թըռչում։
Երկինք եմ թըռչում ցերեկ, իրիկուն,
Երգով աղերսում եմ միշտ Աստըծուն,
Որ մեզ ողորմի իր աջով գըթած,
Հայ հողագործին անէ գերեդարձ,

Հայաստան բերէ խեղճ հայ գեղջուկին.—
Այս է խորհուրդը իմ տխուր երգին։

Ռ. Պատկանեան

31.

Հ Ա Տ Ի Կ

Լոյսը բացւում է. շուտ արտը գնամ,
Պատռեմ սուր խոփով ես կուրծքը հողի,
Իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ
Մինչև օրերը ամրան սրբևի։

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ,
Թէ Աստուած ուզեց, դու կանանչեցիր,
Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ մխիթար կրկին տուն դարձիր։

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջև
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդաղէմ։

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չլինիմ, ծով կը դարձնեմ
Ես տաք քրտինքը ճակտիս ա[illegible]առ,
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չթողնեմ։

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արտը ողջ ալէծածան,
Նոր այն ժամանակ անուշ շրշիւնով
Տուր չարդուած սրտիս մի քուն հանգստեան։

Յ. Յովհաննիսեան

32.

ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ

Մընաս բարեաւ, իմ հայրենիք,
Իմ մանկութեան օրօրան.
Քեզ պաշտել եմ ես վառ սրտով,
Եւ կը պաշտեմ յաւիտեան։

Թէպէտ բախտը խըլում է ինձ
Նուիրական քո գրկից,
Բայց երբէք նա կարէ ջընջել
Սուրբ անունըդ իմ սրտից։

Ուր էլ լինիմ, ուր էլ ապրեմ,
Թէկուզ օտար երկրի մէջ՝
Սիրել եմ քեզ և այդ սէրը
Կը մնայ անխախտ ու անշէջ։

Մընաս բարեաւ, իմ հայրենիք,
Ինձ կեանք, արև պարգևող.
Մընաս բարեաւ... վերջին անգամ
Համբուրում եմ քո սուրբ հող։

Ա. Ծատուրեանց

33.

ԳԵՐԻ ՑՈՅՑ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար։
Բայց աւա՜ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռւում և ես։

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Սրտումս շղթայների ձայներ կրելով...
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ.
Ա՜խ, կամ ոչընչանալ, կամ լինել ազատ։

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռուել,
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանել։
Բայց աւա՜ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռւում և ես։

Չրգիտեմ, ինչպէս է կռւին հրրդեհւում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարւում է միշտ համբաւ սպանութեան ահեղ,
Թափում է ազգ արիւն, բայց ես չեմ այնտեղ։

Ա՜խ, քո ազատութիւն փոթորկի մէջն է
Եւ վառ արշալուսով քո օր կարմրում է...
Թո՛ղ այստեղ չարչարուիմ անծանօթ կապուած,
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ ազատուած։

Յով. Քուջուբէյգեանց

34.

Ե՛Կ, ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՒ

Ե՛կ, գարնան անձրև, թափուի՛ր յորդառատ
Ցրրտացած երկրի սառ կրրծքի վերայ.
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
Թո՛ղ նորա կրրծքին ջերմ կեանքը եռայ։

Երկի՛ր նա տանջուեց դառնաշունչ ձըմրան
Ցուրտ կապանքներում, քեզ ըսպասելով.
Նա շա՜տ համբերեց, կենսատու գարնան
Քաղցր կարօտը ջերմ փայփայելով։

Թափուի՛ր, ո՛վ անձրև, ինչպէս մարգարիտ,
Ինչպէս երկնառաք ցօղը կենսաբեր,
Ոռոգի՛ր դաշտեր, անտառ ու հովիտ,
Կանաչով պատի՛ր լեռներ ու ձորեր։

Թո՛ղ յորդանալով աղբիւր ու գետակ՝
Սառցէ շղթաներ անահ խորտակեն,
Դուրս գան ափերից, վազեն համարձակ,
Ազատ խոխոջան, ազատ կարկաչեն։

Թո՛ղ քեզ լոյս-արև ժըպտայ սիրավառ,
Եւ որպէս երկնից հաշտութեան նըշան՝
Քո կաթիլներում փայլուն ու պայծառ
Նա սիրով կապէ կարմիր ծիածան...

Ե՛կ, գարնան անձրև, թափուի՛ր յորդառատ
Ցրրտացած երկրի սառ կրրծքի վերայ.
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
Թո՛ղ նորա կրրծքին ջերմ կեանքը եռայ։

Ա. Ծատուրեանց

35.

ԹՌՉՆԻԿՆԵՐ

(ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕՅԻՑ)

Ջա՜տ էի սիրում մանուկ հասակում
Ես թռչունների սիրուն ձագերին,
Եւ որսում էի նոցա մեր այգում,
Կանաչ, ցօղապատ թփերի միջին։

Ես հիւսում էի անխոնջ եռանդով
Թաւոտ մամուռից քընքուշիկ բըներ.
Հոգս էի տանում կարեկից սըրտով
Մերկ ճուտիկներիս ցերեկ ու գիշեր։

Բայց ահա նոքա թեւաւորուեցան
Եւ ազատ օդում ճախրել են ուզում.
Ես բաց եմ անում դուռն ու պատուհան,
Թո՛ղ անվախ թռչեն, վըխտան թփերում։

Թռչո՜ւմ են նոքա, երգում, ճըվըլում,
Անհուն ցընծութեամբ լըցւում է հոգիս.
Եւ նորից նոցա ես յետ եմ կանչում,
Նոքա գալիս են—ունկնդի՜ր խօսքիս...

Բայց այժըմ, աւա՜ղ... այժըմ էլ չըկա՜ն
Ո՛չ այն հըրապոյր, ոչ այն քաղցրութիւն.
Ա՜խ, ո՜ւր սըլացար անդարձ, յաւիտեան,
Դու իմ ծաղկավառ, անմեղ մանկութիւն...

Ա. Տատուրեանց

36.

ԵՐԳ

Սիրո՜ւն գարուն, կանա՜չ գարուն,
Քեզ ի՜նչ սըրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն—
Էլ ես ուրախ երգ չունեմ։

Երգում էի ջերմ կարօտով,
Գովքըդ անում ամեն օր,
Երբ մեր երկրում քո քաղցր հոտով
Միշտ լցուած էր սար ու ձոր։

Երգում էի քնարըս լարած՝
Մեր կեանքի լոյս օրերում.
Երգում էի բըլբուլ դառած՝
Քանի վարդ կար հայ երկրում։

Ա՜խ, ի՜նչ սըրտով երգեմ հիմիկ,
Քեզ ի՜նչ սըրտով ողջունեմ.
Փուշ են դառել վարդ ու ծաղիկ,
Էլ ես ուրախ երգ չունեմ։

Մեր տուն ու տեղն—հող, աւերակ,
Մեր լոյս օրերն խաւարել.
Մեր յոյսերը սև մոխրի տակ,
Մեր դարդերը ծով դառել...

Ամպ ու թուխպ է եկել, պատել
Հայ եղբօրըս սև կեանքին.

Երկմը լալուց արցունքն հատել,
Էլ վերջ չըկայ տանջանքին...

Սիրուն գարուն, կանաչ գարուն,
Քեզ ինչ սրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն—
Էլ ես ուրախ երգ չունեմ։

Ա. Ծատուրեանց

37.

ԲԱՐԴԻՆ ՈՒ ՎԱԶԸ

Բարդին սկսեց վազին նախատել,
Եւ ասաց նրան. «Ի՞նչ ես կուչ եկել,
Ես էլ որ չըլինիմ, շուտ չըտամ քեզ,
Եթէ ինձանով չըգաս փաթաթուես,
Ասա ինձ, էլ ով քեզ կըպահպանէ,
Բարակ քամին էլ հոգիդ կը հանէ։
Ինձ մտիկ արա, տես ուր եմ հասել,
Ինձ պէս բարձրացիր, որ ամեն մարդ էլ
Քեզ մտիկ տալիս ապշի, հիանայ.
Ձմեռ ծառոցին ով պատիւ կը տայ։
Ի՞նչ եմ անում ես քո ցիցն ու ձողին,
Քեզ պէս չեմ դողում քամու առաջին.
Մէկ տուտս գետնում, միւսը երկնքում,
Ոչ մի վտանգից ես չեմ վախենում։
Բայց ձեր խեղճ ցեղը հէնց դուրս է գալիս,
Գետնին է կպչում մէկ հով դիպչելիս.
Ափսոս այն պտուղ, որ դուք էք տալիս,
Այդ ինձ էր վայել, այս բարձր ծայրիս»։

Խեղճ վազը բարդուն շատ ականջ դրաւ,
Եւ վերջը մի կարճ պատասխան տըւաւ.
—Քո բարձր ծայրին, ես էլ եմ կարծում,
Խաղող էր վայել, ով է բան ասում,
Բայց այն ժամանակ ցցուած ճղներըդ,
Կախ կը գցէիր մինչև ոտքերըդ.
Պտղատու ծառը խոնարհ է լինում,
Նա երբէք քեզ պէս չի գոռոզանում,
Դու մխիթարուիր քո բարձր հասակով,
Մենք էլ մեր պտղի քաղցր ճաշակով։

Խ. Աբովեանց

38.

Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես, հովիկ,
Ծաղկանց վերայ գուրգուրալով
Եւ մազերում կուսին փափկիկ։
Բայց չես, հովիկ, իմ հայրենեաց,
Գընա, անցիր սրտէս ի բաց։

Ո՛հ, ինչ աղու և սրտագին
Ծառոց միջէն երգես, թռչնիկ.
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քո ձայնիկ։
Բայց չես, թռչնիկ, իմ հայրենեաց,
Գընա, երգէ սրտէս ի բաց։

Ո՛հ, ինչ մըրմունջ հանես, վըտակ,
Ականակիտ և հանդարտիկ.

Քո հայնլուդ մէջ անապակ
Նայիր գիրենք վարդն ու աղջիկ։
Բայց չես, վրտա՛կ, իմ հայրենեաց,
Գրնա՛, հոսէ սրտէս ի բաց։

Պէշիկթաշլեան

39.

ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել նախշուն թևերով,
Նախշուն թևերը պէս-պէս ձևերով.
Գոյն-գոյն ծաղիկներ, կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։

Երկինք ու երկիր քեզ տօնեն գարուն,
Զի ես քան զամէն եղանակ սիրուն.
Նա անձրև ցօղէ առատ ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկուոր հաւերուն։

Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փըչէ ի լեռէն,
Ա՜խ, ազնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ինչ բախտ բերիր ինձ Տէրէն։

Գըլխաքարշ երթամ ի պարտէզ այգուն,
Ա՜խ ու վա՜խ քաշեմ ես անդ օրն ի բուն.
Չիկայ ինձ հանգիստ, ցընծութիւն սըրտիս,
Ես վաղ եմ մոռցել, զի՛նչ անդորր է քուն։

Մեռած պատանքած գետնին կեանք տըւար,
Տերևթափ ծառին ստուերախիտ արար,
Քեզ թըռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ինձ մենակ խեղճիս չալէս մոռացար։

Առաջ գնա, գարո՛ւն, դէպ հիւսիսն ի խոր,
Գրնա կանանչցուր դու անդ սար ու ձոր.
Որոնք անհամբեր քեզ կան՝ *) տուր բարև.
Քո ուրախ գալստեամբ նոցա զուարճացուր։

Կուգաս գալ տարի, դու ինձ կը գըտնես
Ոչ ի մեր այգին և ոչ ի պարտէզ.
Այլ անզարդ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես։

Ռ. Պատկանեան

40.

ՇԻՆԱԿԱՆԻ ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳԸ

Ա՜յ մարդ, այսօր շատ քընեցար, նընջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փըռուեցաւ։

Ընկերներըդ վաղ արտերը գընացին,
Ցորեն, գարին գերանդիով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նըստան հանգչիլ կաղնիներու հովումը։

---

*) Կան—սպասում են։

Ա՜յ մարդ, վեր կաց, սարը ջըրով լըւացուի՛ր,
Գօտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասի՛ր,
Քանի հով է՝ հունձդ արա արտումըդ,
Հունձըդ հընձէ, մի՛ ծուլանար գործումըդ։

Խուրձըդ կապէ, բարդըդ բարդէ, տուն արի,
Հանգըստացի՛ր, երբ քո հունձըդ կատարի,
Բեր գերանդիդ կախէ պատէն քո տանը,
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը։

Ա՜յ մարդ, հերիք ինչ որ այսօր քընեցար,
Աչքըդ մէկ բաց, տես թէ ո՛րչափ ուշացար.
Մեր դըրացին վաղ անց կացաւ կամուրջէն
Վաղ լըռել է մեր գզիրը ձայնելէն։

Ի՞նչ ես պառկել, ի՛նչ ես քընել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր դըռան·
Մի՛ ծուլանար, ժամանակըդ խընայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ։

Ռ. Պատկանեան

41

Հ Ա Մ Ե Ր Գ Ւ

Վտակը ժայռից ներքև է թռչում,
Թափառած ընկնում քարերի գլխին,
Զարկւում աւազին, շաչում է, ճըչում,
Ձըչում անհանգիստ, փրփուրը բերնին

Ինչպէս ծերունին ձայնով պառաւած
Զայնակցում է իւր թոռնիկի երգին,

Այնպէս է մօտիկ անտառը կամաց
Արձագանք տալիս ջըրի աղմուկին։
Սակայն բնութեան զուարթ համերգի
Անխօս ունկնդիրն յաւիտենական—
Ժայռը մտախոհ, իւր անյայտ մտքի
Ետևից ընկած, լսում է նրան։

Յ. Թումանեան

42.

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ւ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տըկար,
Հընչում ես իմ մէջ դու միշտ անդադար։

Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ինչպէս քաղցրը հընչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա՛ կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից։

Հընչի՛ր դու, հընչիր այժմ և յաւիտեան,
Մայրենի՛ լեզու, բարբա՛ռ սիրական.
Արի՛, բարձրացի՛ր հընութեան փոշուց,
Դու իմ հա՛յ լեզու, մոռացուած վաղուց.
Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ գըրուածքներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով։

Ամէն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, այո՛, միւս այլ ձև ու ոճը.
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական մտածութիւնքը՝—
Ապա կը խօսեմ իմ մօրըս խօսքը։

Ս. Նազարեանց

43.

Ա Ք Ս Ո Ր Ա Կ Ա Ն

(ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕՅԻՑ)

«Վա՜ռ ծաղիկներ, անո՜ւշ բուրմունք դաշտերում։
Հիւր է եկել մայիսն ուրախ, գեղեցիկ.
Մի՞թէ ոչ մի ուրախութիւն չեն բերում,
Աքսորակա՛ն, քեզ ո՛չ արև, ոչ ծաղիկ»։
—«Այն ծաղիկներն, որ հայրենի աշխարհում
Բուսցրել եմ ես և փայփայել սիրավառ՝
Այժըմ մենա՛կ, ես նոցա եմ միտ բերում…
Առանց նոցա մայիս չըկայ ինձ համար»։

«Աքսորական, նայիր. անշարժ [illegible]—
Նոքա անգամ ըսթափուել են, կեանք առել.
Այդ արևն է, նորա պայծառ, ջերմ շողեր,
Ցրխուր նիրհած շիրմավայրում կեանք վառել»։
—«Ես յիշում եմ ա՛յլ շիրիմներ անբարբառ,
Եւ իմ ձեռքով յաւէտ փակած ա՛յլ աչեր.
Սիրելի չեն աքսորեալիս այս օտար
Ո՛չ երկինքը, ոչ արևը կենսաբեր»։

«Աքսորակա՛ն, տե՛ս, ի՛նչպէս են թըռչնիկներ
Բըներ հիւսում թաւ անտառի խորքերում.
Օ՞, ո՛րքան կեանք, երջանկութիւն, մաքուր սէր
Նոցա գողտրիկ, անուշաձայն երգերում»։
—«Ես յիշում եմ հայրենական իմ բընիկ,
Իմ պաշտելի նըւիրական այն աշխարհ,
Ուր թաղել եմ հարազատներ, սիրելիք…
Օտար երկրում մայիս չըկա՛յ ինձ համար»։

Ա. Ծատուրեանց

44.

Լ Ո Ւ Ս Ա Դ Է Մ Ի Ն

(ԼՕՆԳՖԷԼԼՕՅԻՑ)

Ազատ ծովը կաշկանդել էր մառախուղ.
Քամին փըչեց—և նա ցըրուեց, որպէս ծուխ.
Քամին ճամբին ասաց անշարժ նաւերին.
Քամին ճամբին ասաց անշարժ նաւերին.

Ազատ ծովը կաշկանդել էր մառախուղ.
Քամին փըչեց—և նա ցըրուեց, որպէս ծուխ.
Քամին ճամբին ասաց անշարժ նաւերին.
«Լուսաղէմ է, առագաստներդ թո՛ղ բացուին».
Եւ հասնելով ծովի եզերք՝ նա ուժգին
«Ելէ՛ք, ելէ՛ք»—գործի կոչեց ամենքին։

Անտառի խորք սըլանալով՝ շըշընջաց.
«Զարթի՛ր, անտա՛ռ, կանաչ կուրծքըդ շուտով բա՛ց».
Թըռչնիկների աչքից խըլեց անուշ քուն.
«Երգէ՛ք»—հընչեց նորա շունչը հովասուն.
Թըռաւ նա գիւղ, գոչեց. «Վե՛ր կաց, գիւղի մարդ,
Լոյսը բացուել, քեզ են մընում դաշտ ու արտ»։

Հասկին ասաց, սըլանալով արտի մօտ.
«Լըցուի՛ր, լըցուի՛ր, քեզ ժըպտում է առաւօտ».

Զանգակատան նա համնելով՝ քաղցրալուր
Սուլեց. «Ժամկո՛չ, առաւօտեան զանգը տո՛ւր».
Բայց երբ մրտաւ գերեզմաննոցն անբարբառ՝
Խուլ հառաչեց ու ասաց.
«Քընէ՛ք հանգիստ, մեռեա՛լ մարդիկ, քա՛ր աշխարհ.
Ձեր ժամը դեռ չէ՛ հասած...»

Ա. Ծատուրեանց

45.

Օ Ր Հ Ն Ե Ր Գ

(ՆԵԿՐԱՍՈՎԻՑ)

Աստուա՛ծ, տո՛ւր ազգիս բարիք ամենայն,
Օրհնի՛ր ազգային և՛ գործ, և՛ վաստակ,
Ազգում ազատ կեանք, արդար դատաստան
Հաստատո՛ւն պահիր ամեն ժամանակ։

Որպէսզի ազատ աճեն, զարգանան
Նորածիլ գործքեր՝ ազգին շահաւոր,
Սփռի՛ր ազգի մէջ Դու սէր գիտութեան,
Ցո՛յց տուր ուսմունքի ուղին լուսաւոր։

Եւ մի՛ թող տանջուիլ մաշիչ լուծի տակ
Ա՛յն ընտրեալներիդ չար կապանքներում,
Որոնց ձեռք մի օր Դու լուսոյ դրօշակ
Սիրով պիտի տաս հայրենի երկրում...

Ա. Ծատուրեանց

46.

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին-հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,
Պըղտոր ջըրով եղերքին
Դարիւ դարիւ խըփելով
Փախչում էին լալագին։

—Արաքս, ինչո՞ւ ձըկանց հետ
Գար չես բըռնում մանկական,
Դու դեռ ծովը չըհասած
Սըգաւոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պըղտորիլ յատակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով,—
Մանկութիւնը քու կարճ է,
Զուտ կը համնիս դէպի ծով։

Վարդի թըփեր թող բըսնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։

Մըշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին
Ճըկուն ոստըն ու տերև
Թող թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մըտնեն միշտ արձակ։—

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փըրփուր հանեց իւր տակից,
Ամպի նըման գոռալով
Էսպէս խօսեց յատակից.

«Խիզա՛խ, անմիտ պատանի,
«Նիրհըս ինչո՞ւ դարևոր
«Վըրդովում ես, նորոգում
«Իմ ցաւերը բիւրաւոր։

«Սիրելիի մահից յետ
«Ե՞րբ ես տեսել, որ այրին
«Ոտքից գըլուխ պըճնըւի
«Իր զարդերով թանկագին։

«Որի՞ համար զարդարուիմ,
«Որի՞ աչքը հրապուրեմ,—
«Շատերն ինձ են ատելի,
«Շատերին ես օտար եմ...

«Կար ժամանակ, որ ես էլ
«Շքեղազարդ հարսի պէս
«Հազար ու բիւր պըչրանքով
«Փախչում էի ափերէս։

«Յատակըս պարզ ու վըճիտ,
«Կոհակներըս ոլորուն,
«Լուսաբերը մինչև այգ
«Ջըրիս միջին էր լողում։

«Ի՞նչըս մընաց այն օրից.
«Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
«Ո՞րը իմ շէն քաղաքից,
«Ո՞ր. բերկըրալի տեղերըս։

. . . .

«Մինչ իմ որդիք,—ո՜վ գիտէ—
«Ծարաւ, նօթի, անտէրունջ
«Օտար աշխարհ յածում են
«Թոյլ ոտքերով կիսաշունչ...

«Հեռու, հեռու քըշեցին
«Բընիկ ազգըն իմ հայկեան,
«Նորա տեղը ինձ տըւին
«Ազգ անկըրօն, մոլեկան։

«Դոցա համա՞ր զարդարեմ
«Իմ հիւրընկալ ափերը,
«Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
«Ճըպռոտ, պըլշած աչերը։

«Քանի որ իմ զաւակունք
«Այսպէս կու մընան պանդուխտ՝
«Ինձ միշտ սըգուոր կը տեսնէք.—
«Այս է անխաբ իմ սուրբ ուխտ»։

Էլ չի խօսեց Արաքսը,
Ցործանք տըւեց ահագին,
Օղակ-օղակ, օձի պէս,
Առաջ սողաց մոլեգին։

Ռ. Պատկանեանց

47.

Մ Ե Ծ

«Գընա՛, իմ որդեակ, աշխարհքըս անցիր,
Պանծալի անուն մեծի դու ստացիր»։
Ու գընաց որդին, շատ քըրտինք թափեց,
Մեծ հարըստութիւն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժըմ մեծ չե՞մ քու կարծիքով։
«Չէ, չէ, թէև դու բօրսայի ես զարդ՝
Բայց քեզ չեմ ասիլ տակաւին մեծ մարդ»։
Նա գընաց մըտաւ իմաստնոց տաճար,
Եղաւ խորիմաստ գիտուն ու հանճար,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժըմ մեծ չե՞մ քու կարծիքով։
«Չէ, չէ, թէև դու գիտութեանց ես զարդ՝
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ»։
Պահով, աղօթքով մըտաւ անապատ,
Քուրձ հագաւ մարմնուն, հրաշքներ գործեց շատ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժըմ մեծ չե՞մ քու կարծիքով։
«Եղեմայ դըրախտին էլ լինիս դու զարդ՝
Ես քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ»։
Ու գընաց որդին, դարձաւ զօրավար,
Խելքով, քաջութեամբ տիրեց շատ աշխարհ,

Ու դարձաւ հօրը ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժըմ մեծ չե՞մ քու կարծիքով։
«Չէ, չէ, թէև դու գօռ դաշտին ես զարդ՝
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ»։
Ու գընաց որդին մի երկիր օտար,
Հրէշք ու ցաւերէ մաքրեց այն աշխարհ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժըմ մեծ չե՞մ քու կարծիքով։
«Օտար աշխարհի թէև եղար զարդ՝
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ»։
Ու գընաց որդին... Հա՛, սարն էր գլորման...
Դէմ տըւեց ուսը, չըթողեց անկման...
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժըմ մեծ չե՞մ քու կարծիքով։
«Դիւցազների մէջն էլ լինիս դու զարդ՝
Բայց քա՛ւ ինձ ասել քեզ համար մեծ մարդ»։
Ու գընաց որդին գըլխակոր, տըրտում,
Հոգին վըրդոված, ցաւ ու դարդ սըրտում,
Մաշւում էր խեղճը, զօր տալով խելքին—
Հէ՛ր չարժանացաւ հօր գովասանքին...։
Նորա եղբայրը գերի էր տարած,
Թըշնամու ձեռքով տունը աւերած.
Ճիգ արաւ, գլուխը վըտանգի ձըգեց,
Ազատեց եղբօրն ու տունը կանգնեց...
Յանկարծ... սար ու ձոր, ծով դըղըրդեցան,
Բիւրք բիւրուց բերնով գոչեց ազգ մարդկան.
«Մեծ մարդու անուն դու այժմ ըստացար—
«Եղբօրդ յիշեցիր ու քեզ մոռացար»։

Ռ. Պատկանեան

ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԳԻՐՔ

(ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ)

ՀԱՄԱՌՕՏ ԲԱՌԳԻՐՔ

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ն.—ներգործական	գ.—գոյական	մ.—մակբայ
չ.—չէզոք	ած.—ածական	ձ.—ձայնարկութիւն
կր.—կրաւորական	շ.—շաղկապ	ռմկ.—ռամկական
	դ.—դերանուն	

Ա. ա.

Աբեղայ գ.—монáхъ, и́нокъ

Ագահութիւն գ.—жáдность, áлчность.

Ագարակ գ.—фéрма.

Ադամանդ գ.—бриліáнтъ.

Ազգաբնակութիւն գ.—народонаселéніе.

Ազդել ն.—влія́ть, внушáть.

Ազդու ած.—внуши́тельный, влія́гельный.

Ազիզ ած. սիրելի, թանկագին—люби́мый, драгоцѣ́нный.

Աժդահայ գ. հսկայ՝ վիշապ—исполи́нъ, гигáнтъ; дракóнъ.

Ալէծածան ած. ալիքներից շարժուող—волну́ющійся, колыхáющійся.

Ալէկոծութիւն գ. ալէկոծում.—волнéніе, штóрмъ на морѣ

Ալիքաւոր ած.—волни́стый.

Ախոռ գ.—конюшня.

Ախորժ ած. դիւրեկան—пріятный.

Ախորժակ գ. իշտահ—аппети́тъ.

Ախորժել չ. հաւանել, սրտանց ուզել—нрáвиться, хотѣ́ть.

Ախտ գ. հիւանդութիւն, արատ—болѣ́знь, порóкъ.

Ածխավաճառ գ. ածուխ ծախող—продавéцъ угля.

Ական գ. փոս—я́ма.

Ականակիտ ած. զուտ, մաքուր, փայլուն—чи́стый, свѣ́тлый.

Ականջեղ ած. длинноу́хій.

Ակն գ. թանկագին քար, աչք, ջրի ակը—драгоцѣ́нный камень, глазъ, истóчникъ.

յական թօթափել մ. մի ակընթարթում—въ оди́нъ мигъ.

Ակնթարթ գ. աչքի թարթելը—

мигъ; мгнове́ніе о̀ка.
Ակօս գ. борозда́.
Ակօսել ն. ակօս գցել—борозди́ть.
Ահ գ. երկիւղ, վախ—страхъ, у́жасъ.
Ահարկու ած. ահ գցող—наводя́щій у́жасъ.
Ահաւոր ած. երկիւղալի, սարսափելի—ужа́сный. стра́шный.
Ահեղ ած.—стра́шный.
Ահուդող գ. у́жасъ, тре́петъ.
Ահռելի ած. ահեղ стра́шный, гро́зный.
Աղալ ն.—моло́ть.
Աղբ գ.—соръ, наво́зъ.
Աղեկըտուր ած. կսկծալի—вызыва́ющій сострада́ніе, скорбный.
Աղեղ գ.—лукъ, дуга́.
Աղերսել ն. աղաչել—умоля́ть. проси́ть.
Աղերսանք գ. мольба́.
Աղիւս գ.—кирпи́чъ.
Աղմկալից ած. шу́мный.
Աղմուկ գ. шу́мъ.
Աղու ած. աղը՝ համը տեղը, անուշ—прія́тный.
Աղուամաղ գ. բարակ մազ—пухъ, пушо́къ.
Աղօտ ած. մթնշաղ—ту́склый.
Աճել չ. ծլել, բազմանալ—расти́, размножа́ться.
Ամայանալ չ. անապատանալ—опусте́ть.
Ամայի ած. անբնակ—пусты́нный.
Ամբառնալ ն. բարձրացնել—поднима́ть.
Ամբրոսական ած. անուշահոտ — амбрози́ческій, благоуха́нный.
Ամեհի ած. կատաղի—свирѣ́пый.
Ամոքել ն. կակղացնել, թեթեւացնել—смягчи́ть, облегчи́ть,
Ամուրի գ. չպսակուած—холосто́й,—я́къ, нежена́тый.
Ամրանալ չ.—крѣ́пнуть, укрѣпи́ться.
Ամրոց գ. за́мокъ, укрѣпле́ніе.
Ամրութիւն գ. ամուր տեղ, ամրոց—тверды́ня, укрѣпле́ніе.
Այգ գ. լուսադէմ, առաւօտ, արշալոյս—разсвѣ́тъ, у́тро. заря́.
Այլանդակ ած. անճոռնի—уро́дливый, безобра́зный.
Այծեամ գ. վայրի այծ—ди́кая коза́, се́рна.
Այտ գ. երես, թուշ—лице́, щека́.
Այր գ. քարայր, քարանձաւ. տղամարդ—пеще́ра; мужчи́на.
Այրական ած.—му́жескій, му́жественный.
Անախորժ ած. անդուրեկան—непрія́тный.
Անակնկալ ած. անսպասելի—неожи́данный.
Անաղօտ ած. լուսաւոր—свѣ́тлый.
Անապակ ած. մաքուր—чи́стый.
Անառակ ած.—распу́тный.
Անարգ ած. անպատիւ—презрѣ́нный.
Անարգել ն. անպատուել—порица́ть.

Անբարբառ ած.—безмо́лвный.
Անբան ած. անլեզու, անմիտ—безслове́сный, нера́зу́мный.
Անգղ գ. ко́ршунъ.
Անգնահատելի ած. неоцѣни́мый.
Անգութ ած. գութ չունեցող—безжа́лостный.
Անդ մ. այնտեղ—тамъ.
Անդամ գ.—членъ.
Անդաւաճան ած. անխաբ, անխարդախ—необма́нный, нелука́вый.
Անդորր ած. հանդիստ, խաղաղ—споко́йный
Անդորրութիւն գ. тишина́.
Անդունդ գ. խոր փոս, վիհ—про́пасть.
Անդրանիկ ած. աւագ - ста́ршій.
Անդրավարտիք գ. брю́ки, шарова́ры.
Անընդհատ ած. անդադար—безпреры́вный,
Անիրաւ ած. անարդար—несправедли́вый, непра́вый.
Անիւ գ.--колесо́
Անխախտ ած. անշարժ—непоколеби́мый.
Անխոնջ ած. չդադրող—неутоми́мый, неуста́нный·
Անխռով ած. խաղաղ—ти́хій. безмяте́жный.
Անկեալ գ.—убо́гій, не́мощный.
Անկեղծութիւն գ. սրտի պարզութիւն—и́скренность.
Անկում գ. цаде́ніе.
Անհետ(ք) ած. безслѣ́дный.
Անհուն ած. անեզր—безбре́жный.
Անհրաժեշտ ած. հարկաւոր, կարեւոր—необходи́мый.
Անհրաժեշտութիւն գ.—необходи́мость.
Անձնանուիրութիւն գ. անձնազոհութիւն — самоотве́рженность, самопоже́ртвованіе.
Անձնապաստանութիւն գ. անձնավստահութիւն — самоувѣ́ренность.
Անձնատուր (լինել) չ. հնազանդուել—сдава́ться.
Անճոռնի ած. այլանդակ—безобра́зный, уро́дливый.
Անմատչելի ած. անմերձենալի—непристу́пный.
Անմիջական-պէս ած. մ.—непосре́дственный,—о.
Անշէջ ած. չհանգչող—неуга́саемый.
Անշուշտ մ. անկասկած—несомнѣ́нно.
Անշուք ած. անզարդ—безъ украшенія, просто́й.
Անողոք ած. անգութ, խստասիրտ - неумоли́мый, жесто́кій.
Անոյշ ած. քաղցր—сла́дкій.
Անուանի ած. անուն ունեցող, հռչակաւոր — имени́тый, сла́вный.
Անպարտելի ած. անյաղթելի—непобѣди́мый.
Անսպառ ած. неистощи́мый.
Անվրդով ած. անխռով, հանդիստ—безмяте́жный, ти́хій.
Անտաշ ած. կոպիտ—нетёса.

ный, гру́бый.
Անտէրունչ գ. անտիրական,—безхозя́йный, безпризо́рный.
Անտրտունջ ած. հլու—безро́потный.
Անցք գ. происше́ствіе, прохо́дъ, перехо́дъ.
Անօթ գ. աման—сосу́дъ, у́тварь.
Անօթի ած. նօթի, քաղցած—голо́дный
Անօրէն ած. անիրաւ—беззако́нный, несправедли́вый.
Աշտանակ գ.—подсвѣ́чникъ.
Աչեղ ած. խոշոր աչքեր ունեցող — съ кру́пными глаза́ми.
Ապականել ն. փչացնել, կեղտոտել—по́ртить, оскверня́ть.
Ապառաժ գ. ժայռ—скала́.
Ապահով ած. обезпе́ченый.
Ապաստան գ. ապաստարան, պատսպարան — приста́нище, убѣ́жище.
Ապարանք գ. շքեղ բնակարան, պալատ — роско́шное помѣще́ніе, пала́та.
Ապարդիւն ած. անօգուտ—безполе́зный.
Ապշել չ. շատ զարմանալ—изумля́ться.
Ապուշ ած. խելքը, ուշքը պակաս—полоу́мный.
Ապուշ կտրել չ. խելքը կորցնել—обезумѣ́ть
Ապստամբել չ. զէնք բարձրացնել—возста́ть.
Ապստամբեցնել չ. ոտքի կանգնեցնել—возбудить возстаніе.
Ապստամբութիւն գ. -- возста́ніе.
Ապօրինի ած. օրէնքի դէմ—незако́нный,
Աջող ած.—уда́чный.
Առագաստ գ. վարագոյր—па́русъ, за́вѣса.
Առաջարկել ն.—предлага́ть.
Առաքինի ած.—добродѣ́тельный.
Առու գ.—руче́й, кана́вка.
Առուտուր գ.—торго́вля.
Առօք-փառօք մ. հանդիսաւոր—торже́ственно.
Ասացուած գ. погово́рка.
Ասպազէն գ. ձիու արդուզարդ, սարքուկարդ—сбру́я.
Ասպանդակ գ.—стре́мя.
Ասպետ գ. ձիաւոր, թագադիր—ры́царь, возлага́тель коро́ны.
Աստ մ. այստեղ—здѣ́сь.
Ատամնաւոր ած. зу́бчатый.
Արագիլ գ.—а́истъ.
Արանք գ. միջոց, ճեղք—промежу́токъ, щель.
Արարած գ.—творе́ніе, существо́.
Արարմունք գ. վարմունք—посту́покъ, дѣ́йствіе.
Արարք գ. արածը—дѣя́ніе.
Արգելել գ. խափանել—препя́тствовать, запреща́ть.
Արդիւնք գ. օգուտ, բերք—по́льза, при́быль, проду́ктъ.
Արեգ գ. արեգակ, հայոց տոմարի ութերորդ ամիսը—со́лнце, восьмо́й мѣ́сяцъ армя́нскаго календаря́.

Արևահայեաց ած. արևի կողմը նայող — обраще́нный къ со́лнцу.
Արեւառ ած. արևից այրած, արևակէզ—загорѣ́вшій отъ со́лнца.
Արեւելք գ. восто́къ.
Արեւմտեան ած.—за́падный.
Արթուն ած. զարթուն, աչքաբաց — бди́тельный, живо́й, бо́дрый.
Արթնանալ չ. զարթել—пробужда́ться.
Արժանաւորութիւն գ.—досто́инство.
Արի ած. քաջ—хра́брый, му́жественный.
Արհաւիրք գ. սաստիկ վախ, սոսկում—у́жасъ.
Արհեստաւոր գ.—реме́сленникъ.
Արձագանգ գ.—э́хо, отголо́сокъ.
Արմանք-զարմանք գ.—удивле́ніе, ди́во.
Արմաւենի գ. — па́льма, фи́никовое де́рево.
Արմտիք գ.—злаки.
Արշալոյս գ.—заря́.
Արշաւանք գ. յարձակում—похо́дъ. наше́ствіе, набѣ́гъ.
Արոճանել ն. որոճալ—жева́ть жва́чку.
Արջառ գ. տաւար—кру́пный рога́тый скотъ.
Արտ, արտորայք գ. — па́шня, ни́ва.
Արտայայտել ն.—выража́ть.
Արտաքին ած. դրսի—внѣ́шній.
Արտաքսել ն. քշել—изгна́ть, прогна́ть.
Արտևանունք գ. աչքի կոպերի մազերը, թարթիչ — рѣсни́цы.
Արտոյտ գ.—жа́воронокъ.
Արցունք գ. արտասուք—слёзы.
Արքայ գ. թագաւոր—царь.
Արքունիք գ. պալատ—дворе́цъ.
Արօր գ. փոքր գութան—соха́.
Արօտամարգ գ. արօտատեղի—па́стбище.
Աւա՜ղ ձ. վա՜յ—увы́.
Աւան գ. գիւղաքաղաք—селе́ніе.
Աւանդել (հոգի), շունչը փչել, մեռնել—испусти́ть духъ, уме́реть.
Աւանդել (դաս) ն.—преподава́ть.
Աւանդութիւն գ. — преда́ніе.
Աւարտել ն. վերջացնել—ока́нчивать, заверша́ть.
Աւետիք գ. լաւ համբաւ—бла́говѣсть
Աւերակ գ. փլատակ—разва́лины, руи́ны.
Աւերել ն. քանդել—разруша́ть.
Ափսինդ գ. օշինդր—поль́шнь.
Աքսորական գ. երկրից քշուած—изгна́нникъ.

Բ. բ.

Բազէ գ. со́колъ, я́стребъ.

Բազմախորտիկ ած. տեսակ տեսակ կերակուրներով լի — многоя́вственный, съ разнообра́зными ку́шаньями.

Բազմել չ. նստել — возсѣда́ть, сади́ться.

Բազուկ գ. կուռ — рука́, предпле́чье.

Բակ (բռնել, բոլորել) ն. շրջապատել — окружа́ть, охвати́ть.

Բահ գ. лопа́та, за́ступъ.

Բաղխել, Բախել ն. զարկել, ծեծել - стуча́ть, бить.

Բաղկանալ չ. բաղադրուել, կայանալ — составля́ться, состоя́ть.

Բաճկոնակ գ. վերարկու — полукафта́нъ, камзо́лъ.

Բամբաշել ն. բաց ափով խփել, հարուածել — бить.

Բանակ գ. ла́герь.

Բանաւոր ած. խելացի — слове́сный, разу́мный.

Բանիմաց ած. խելացի — у́мный, свѣ́дущій.

Բանուոր գ. բանող, մշակ — рабо́чій.

Բանջար գ. կանաչեղէն — о́вощь, огоро́дное расте́ніе.

Բանջարանոց գ. — огоро́дъ.

Բառաչ գ. — мыча́ніе.

Բարակ ած. — тонкій: գ. — бо́рзая соба́ка.

Բարբառ գ. խօսք, լեզու — сло́во, го́воръ.

Բարբարոս գ. վայրե[illegible] օտարազգի, խստասիրտ — в а́рваръ, чужо́й, жесто́кій.

Բարդ գ. դէզ — копна́. ած. сло́жный.

Բարդել ն. դիզել, իրար վրայ դնել — накла́дывать въ ку́чу, копи́ть.

Բարտի գ. — ольха́.

Բարեկենդան գ. — масле́ница.

Բարերար գ. բարիք անող — благодѣ́тель.

Բարձել ն. ծանր բան դնել, բեռնել — нагрузи́ть, навьючить.

Բարձրաւանդակ գ. բարձր տեղ — возвы́шенность, 'плоского́рье.

Բացատրութիւն գ. մեկնութիւն — толкова́ніе, объясненіе.

Բեկոր գ. կտոր — кусо́къ.

Բեհեզ գ. բարակ կտաւ — то́нкое полотно́, бати́стъ.

Բեղմնաւորութիւն գ. պտղաբերութիւն, արգաւանդութիւն — плодоро́діе, плодови́тость.

Բեռ գ. ծանրոց — но́ша, бре́мя.

Բեռնաւորել ն. բեռնել, բարձել — обременя́ть, нагрузи́ть.

Բերդ գ. крѣ́пость.

Բերկրալի ած. ուրախալի — ра́достный, весе́лый.

Բերկրանք գ. ուրախութիւն — ра́дость.

Բերրի ած. պտղատու — плодоро́дный.

Բերք գ. արդիւնք — произведе́ніе, проду́ктъ.

Բեւեռ գ. մեխ, գամ — гвоздь; по́люсъ.

Բզէզ գ. жукъ.

Բթամատ գ. большо́й палецъ.

Բիզ-բիզ (կանգնել) չ. փշաքաղուել, քստմնել — ды́бомъ станови́ться.

Բիւր — 10,000; Բիւրաւոր, անթիւ — безчи́сленный.

Բիւրեղ գ. — хруста́ль.

Բլբուլ գ. սոխակ — солове́й.

Բլուր գ. — холмъ.

Բլոճ գ. — козя́вка.

Բղխել չ. դուրս վազել (ջրի) — вытека́ть.

Բճիճ գ. — ячейка.

Բնակարան գ. կացարան — жили́ще.

Բնաջինջ անել ն. բոլորովին ջնջել, կոտորել — истребля́ть.

Բնաւորութիւն գ. хара́ктеръ.

Բնաւ մ. բոլորովին, իսպառ — совсѣ́мъ.

Բնիկ ած. հարազատ — приро́дный, родной.

Բոթ-բոթել ն. հրել, քռուչ տալ — толка́ть.

Բոլորակ ած. կլորակ — кру́глый; գ. — кругъ, окру́глость.

Բոլորել ն. շուրջ պատել — окружа́ть, обвести́.

Բողբոջ գ. ծիլ — расто́къ, по́чка.

Բովանդակուել չ. ամփոփուել, պարունակուել — содержа́ть, заключа́ть въ себѣ́.

Բոտոտ գ. որդ — дождево́й червь.

Բորբոքել ն. բոցավառել — воспламеня́ть, разжига́ть.

Բոց գ. — пламя.

Բու գ. — сова́.

Բուկ գ. բողազ, կոկորդ — го́рло.

Բուռ գ. горсть.

Բուստ գ. — кора́ллъ.

Բուսցնել ն. — взрасти́, производи́ть.

Բուրաստան ն. ծաղկանոց, բաղչա — цвѣтни́къ, са́дъ.

Բուրգ գ. աշտարակ — ба́шня.

Բուրդ գ. — шерсть.

Բուրել ն. հոտ սփռել — благоуха́ть, вѣ́ять.

Բուրմունք գ. — вѣ́яніе, благоуха́ніе.

Բուրջ գ. բուրգ — ба́шня.

Բուրվառ գ. кади́ло.

Բուք գ. — вьюга, метель.

Բռնակալ գ. բռնութեամբ իշխող — де́спотъ, тира́нъ, притѣсни́тель.

Բռնութիւն գ. — наси́ліе.

Բռունցք գ. մուշտի -- кула́къ.

Բրդեայ ած. — шерстяно́й.

Բրդել ն. մանրացնել — кроши́ть; մեծ մեծ բրդել — ва́жно говори́ть.

Բոյ գ. հասակ — ростъ.

Բորսայ գ. — би́ржа.

Գ. գ.

Գագաթ գ. կատար — верши́на.

Գահ գ. — престо́лъ, тронъ.

Գաղթ գ. տեղափոխութիւն — переселéніе.
Գաղթական գ.—переселéнецъ.
Գաղթել չ.—переселя́ться.
Գաղտնիք գ. ծածուկ բան—тáйна, секрéтъ.
Գամ գ. մեխ—гвоздь.
Գամել ն. մեխել, բեւեռել—пригвозди́ть.
Գամփռ գ. մեծ շուն - порóда большихъ собáкъ.
Գանձ գ. հարստութիւն - сокрóвище, богáтство.
Գարշելի ած. զզուելի - мéрзкій, гну́сный.
Գաւառ գ. óбласть, уѣ́здъ.
Գեղգեղել ն. կլկլացնել—производи́ть трéли.
Գեղջկութիւն գ. простонарóдность.
Գեղջուկ գ. գիւղացի—простолю́динъ, крестья́нинъ.
Գեղեցկանիստ ած. գեղեցիկ դիրք ունեցող—краси́во распол́оженный.
Գետնատուն գ. գետնափոր—подвалъ, земля́нка.
Գերազնիւ ած. ազնուազոյն—благорóднѣйшій, почтéннѣйшій.
Գերան գ. брусъ, бревнó.
Գերանդի գ. косá.
Գերդաստան գ. բոլոր տունը ծառաներով—семья́.
Գերեդարձ գ. գերութիւնից դառնալը — возвращéніе изъ плѣ́на.
Գերել ն.—плѣни́ть
Գերի գ.—плѣ́нникъ.
Գզգզել ն.—растрепáть; Գզել—чесáть (шерсть).
Գզիր գ. տանուտէրի օգնական—деся́тникъ, стáроста.
Գէթ մ. գոնէ — по крáйней мѣ́рѣ.
Գթալ ն. խղճալ—сжáлиться.
Գթած ած. գթոտ, ողորմած—жáлостливый, милосéрдый.
Գիշակեր ած. սատկածի միս ուտող—ѣдя́щій падаль, хи́щный.
Գիշատել ն. ծուատել, պատառոտել—растерзáть, раздирáть.
Գիսակ գ. երկար մազեր—кóсы.
Գիրկ գ. գոգ, ծոց —объя́тіе.
Գիւտ գ.—находка, откры́тіе.
Գլխաքարշ ած.—съ пони́кшей головóй, уны́лый.
Գլորել ն. վայր գցել—повали́ть, кати́ть.
Գմբէթաձև ած. -куполообрáзный.
Գնահատել ն. գին դնել—оцѣ́нивать.
Գնդասեղ գ.—булáвка.
Գոլ ած.—тепловáтый.
Գոլորշի գ. շոգի—паръ.
Գոլորշիանալ չ. շոգիանալ—испари́ться.
Գոհանալ չ. շնորհակալ լինել—быть благодáрнымъ, довóльствоваться.
Գոհացուցիչ ած. գոհացնող, բաւարար — удовлетворя́ющій, удовлетвори́тельный.
Գոհ ած. բաւական—довóльный.

Գոհար գ. թանկագին քար -драгоцѣ́нный кáмень.
Գողտրիկ ած. քնքոյշ, ախորժելի—нѣжный, пріятный.
Գոմ գ.—хлѣвъ.
Գոմէշ գ.—бу́йволъ.
Գոյժ գ. տխուր լուր, բօթ—печáльная вѣсть.
Գոյք գ. կայք—иму́щество.
Գոռ ած. յանդուգն, հպարտ—дéрзкій, гóрдый.
Գոռոզանալ չ. հպարտանալ—возгорди́ться.
Գովաբանել ն. գովել—хвали́ть.
Գովքգովեստ գ. գովասանք—хвалá.
Գորգ գ.—коверъ.
Գործադրել ն. բանեցնել, գործածել—употребля́ть.
Գործուածք գ.—ткáнь.
Գութ գ.—жáлость, сострадáніе.
Գումարել ն.—собирáть, сложи́ть.
Գուշակել ն.—предскáзывать, прорицáть.
Գուշիկ ած. պառաւութիւնից ծնօտը դէպի բերանը կուացած—съ ввали́вшимися чéлюстями.
Գուրգուրալ ն. փաղաքշել, փայփայել—ласкáть, лелѣ́ять.
Գջլոտել ն. գջլել—отрывáть, сорвáть.
Գռեհիկ գ. ռամիկ—мужи́къ; ած. гру́бый.
Գրականական ած.—литерату́рный.
Գրաւել ն. հրապուրել, տիրել—привлекáть, завладѣ́ть.
Գօտեմարտել չ. իրար մէջքից բռնած կռուել—борóться.

Դ. դ.

Դադրել չ. յոգնել—утомля́ться, уставáть.
Դալար ած. թարմ, կանաչ—свѣ́жій, зеленый.
Դահիճ գ.—палáчъ.
Դայլայլել ն. կլկլացնել, գեղգեղել—пріятно пѣть.
Դայլայլիկ գ. գեղգեղանք—трель.
Դանդաղ ած. ծանրաշարժ—мéдленный.
Դաշոյն գ. խանչալ — мечъ, кинжáлъ.
Դառնաշունչ ած. суро́вый.
Դաստակ գ. ձեռքի թաթը—ручнáя кисть, запя́стье.
Դատապարտել ն. մեղաւոր ճանաչել—осуждáть.
Դատել ն. դատաստան անել—суди́ть; разсуждáть.
Դատողութիւն գ.—разсуждéніе.
Դար գ. հարիւր տարի. բարձր դիրք—вѣкъ, столѣтіе; при́горокъ; դարիւ դարիւ—волнáми, каскáдами.
Դարբնել ն. կռել ковáть.
Դարդ գ. վիշտ - гóре.
Դարեւոր-դարաւոր ած. — вѣковóй.

Դարման գ. դեղ, յարդ—лѣкáрство; солóма.
Դարմանել ն. կերակրել, բժշկել—прокáрмливать, исцѣлять.
Դարպաս գ. մեծ դուռ—ворóта.
Դաւաճանել ն. մատնել—предáть, измѣнять.
Դաւաճանութիւն գ. դաւ, մատնութիւն — предáтельство, измѣнá.
Դեղնապորտիկ գ. դեղին թռչուն—иволга..
Դեռահաս ած. տարիքը չհասած—несовершеннолѣтній, юный.
Դեսպան գ. թագաւորի կամ տէրութեան ներկայացուցիչը օտար երկրում—послáнникъ.
Դերձան գ. թել—нитка.
Դէզ գ. բարդ—копнá; грýда, кýча.
Դի գ. կողմ—сторонá.
Դիակ գ.—трупъ.
Դիզել ն. իրար վրայ բարդել—собирáть въ кýчу, накоплять.
Դիմանալ չ.—устоять.
Դիմացկունութիւն գ. —стойкость.
Դիմաւորել ն. առաջ գնալ, հանդիպել - встрѣчáть.
Դիպակ գ.—парчá,
Դիտաւորութիւն գ. մտադրութիւն—намѣреніе.
Դիտել ն.—наблюдáть.
Դիտմամբ մ. դիտաւորութեամբ — нарóчно.
Դիրք գ.—положéніе.
Դիւր-դիւր ած. հեշտ, ախորժ—лéгкій, пріятный.
Դիւր գալ չ. ախորժել - нрáвиться,
Դիւանբաշի գ. դատաստանի գլխաւորը - глáвный судья.
Դիւրաբեկ ած. հեշտ կոտրուող—лóмкій, хрýпкій.
Դիւրահոս ած.—плáвный.
Դիւցազն գ. հերոս, աստուածների ցեղից—вѝтязь, герóй.
Դիփ ամէ. ամբողջ, բոլոր—весь.
Դղրդեցնել ն.—трясти́, колебáть.
Դղրդալ, իլ չ. դողալ, թնդալ—содрогáться, гремѣть.
Դողդոջուն ած. դողդողացող—дрожáщій.
Դունչ գ. ռեխ - рыло, мóрда.
Դուռն (պալատի) գ. արքունի պալատ—дворéцъ, пóрта.
Դուստր գ. աղջիկ дочь.
Դպիր գ.—чтецъ.
Դրդիչ գ.—подстрекáтель.
Դրօշակ գ.—знáмя.

Ե. ե.

Եագուտ գ. յակունթ—я́хонтъ,
Եաման յ. աւա՜ղ—увы́.
Եափունջի գ.—бýрка.
Եդեմ գ. փափկութեան տեղ, դրախտ—эдéмъ, рай.
Եզնիկ, եզնակ գ. հորթուկ, մի տեսակ բզեզ— бычóкъ, жукъ, рогáчъ.

Եզր-եզերք գ. ափ—бéрегъ.
Եթիմ գ. որբ—сиротá.
Եկամուտ գ. հասոյթ—дохóдъ.
Եղեամ գ. иней.
Եղեւնի-եղեւին գ.—ель.
Եղջերու գ.—олéнь.
Ենթարկել ն.—подвергáть.
Եռալ չ. եռ գալ кипѣть.
Եռանդ գ.—энéргія, усердіе.
Երաժշտութիւն գ. мýзыка
Երախտագիտութիւն գ. շնորհակալութիւն—признáтельность, благодáрность.
Երախտապարտ ած. որ պարտական է երախտիք—обязанный, облагодѣтельствованный.
Երախտիք գ. լաւութիւն, բարերարութիւն—благодѣяніе.
Երամ-երամակ գ. խումբ—толпá, стáя.
Երամ-երամ խումբ-խումբ — стáями.
Երանական ած. երանելի, երանի տալու արժանի— блажéнный.
Երաշտ գ. зáсуха.
Երդիկ(ք) գ.—окно, дѣлаемое на кровлѣ здáнія.
Երդուել չ.—клясться.
Երերել ն. շարժել—колебáть, трясти́.
Երեւակայել ն. մտքի մէջ ձեւացնել—вообрази́ть.
Երեւան հանել ն. աշկարայ, տեսնայտնի դարձնել—обнарýжить, являть.
Երեւոյթ գ.—явлéніе.
Երէաշատ ած. որսի կենդանիրով լի - обильный дичью.
Երէց գ. քահանայ, մեծ—іерéй, свящéнникъ; стáршій.
Երիտասարդ գ.—юноша.
Երկարասրունք ած. — голенáстый.
Երկնակամար գ.—небéсный сводъ.
Երկնաուաք ած. երկնքից ուղարկուած—ниспóсланный нéбомъ.
Երնէկ յ. երանի — счáстливъ тотъ, кто.
Երջանկութիւն գ. բախտաւորութիւն - счáстье.
Երջանիկ ած. — блажéнный, счастли́вый.

Զ. զ.

Զայրանալ չ. բարկանալ—сердиться.
Զառիվայր գ. դարուվար — крутизнá, бугóръ.
Զատիկ գ. պասեք. կարմիր բզեզ—пáсха; бóжья корóвка.
Զատուել կր. բաժանուել—раздѣли́ться, отдѣли́ться.
Զարգանալ չ. առաջանալ, աճել - расти, развивáться.
Զարհուրել չ. սարսափել—ужасáться
Զարնել ն. զարկել, խփել—бить.
Զգածուել կր. — расчýвствоваться.

Զգայուն ած. զգայող—чувстви́тельный.
Զգենուլ ն. հագնել—надѣва́ть.
Զգուշութիւն ն.—осторо́жность.
Զեղխ ած. անառակ—развра́тный, распу́тный.
Զեռուն գ. սողացող կենդանի—гадъ.
Զետեղել ն. տեղաւորել—размѣща́ть, расположи́ть.
Զերթ նխ. նման, ինչպէս—какъ, подо́бно.
Զեփիւռ գ. հովիկ—зефи́ръ, вѣтеро́къ.
Զէնք գ.—ору́жіе.
Զի շ. որովհետև—потому́ что.
Զիբիլ ռմկ. գ. աղբ—соръ, наво́зъ.
Զինաթափ լինել չ. զէնքը գցել, անձնատուր լինել—сложи́ть ору́жіе, сда́ться.
Զղջալ չ. ка́яться, сожалѣ́ть.
Զմայլել չ. հրճուել, հիանալ—восторга́ться
Զմայլեցնել ն. հիացնել, յափշտակել—очарова́ть.
Զմրուխտ գ.—изумру́дъ.
Զննել ն. քննել—разбира́ть, разслѣ́довать.
Զոլ-զոլ, զօլ-զօլ ած. շերտաւոր—полоса́тый.
Զով գ. հով—прохла́да; ած. прохла́дный.
Զովանալ չ. հովանալ—прохлади́ться.
Զուարթ ած. ուրախ—весе́лый, рѣ́звый.
Զուարճանալ չ. ուրախանալ забавля́ться, весели́ться.
Զուգուել չ. զարդարուել—наряжа́ться.
Զուլում գ. (ռամկ.) չարիք, աղէտ—зло, бѣ́дствіе.
Զուրկ ած. զրկուած—лмше́нный.
Զսպել ն. սանձահարել—обузда́ть, унима́ть.
Զրահ գ.—ла́ты.
Զրկել ն.—лиша́ть
Զրոյց գ. խօսք, խօսակցութիւն — рѣчь, разгово́ръ, бесѣ́да.
Զրպարտել ն. չարախօսել—оклевета́ть.
Զօր գ. ոյժ, բռնութիւն - уси́ліе, наси́ліе, напо́ръ.

Է. է.

Էրէ գ. վայրի, որսի կենդանի—дичь.

Ը. ը.

Ընդարձակ ած. լայնարձակ—обши́рный.
Ընդդիմադրել ն. դէմ դնել, դիմադրել — противоста́вить;

противодѣ́йствовать.
Ընդդիմանալ չ. հակառակել—сопротивля́ться.
Ընդեղէն գ. բանջարեղէն — бобо́выя растенія.
Ընդհատել ն.—прерва́ть.
Ընդմիջել ն. մէջ մտնել, ընդհատել—перебива́ть, прерва́ть.
Ընթանալ չ. գնալ, հոսել—ходи́ть, течь.
Ընթացք գ. գնացք, հոսանք—ходъ, ше́ствіе, тече́ніе.
Ընկղմել չ. տակը մտնել (ջրի և այլն), խորասուզուել — погрузи́ться.
Ընկճել ն. ճնշել. խոնարհեցնել —угнета́ть, усмиря́ть.
Ընտանի ած.—дома́шній, родно́й.
Ընտելանալ չ. սովորել — привыка́ть, пріуча́ться.
Ընտիր-ընտրեալ ած.—и́збранный, отбо́рный.

Թ. թ.

Թագաժառանգ գ. թագը ժառանգող—наслѣ́дникъ престо̀ла.
Թագուստ գ. ծածուկ տեղ—потайни́къ, мѣ́сто для укрыва́тельства.
Թալկանալ չ. տառապել, թուլանալ—томи́ться, изнемога́ть.
Թախծալի ած. տխրալի—гру́стный, тоскли́вый, ско́рбный.
Թակարդ գ. կենդանիք բռնելու գործիք, որոգայթ—западня́.
Թակել ն. ծեծել, խփել - бить.
Թաղ գ. кварталъ.
Թաղիք գ.—во́йлокъ.
Թանգարան գ.—музе́й, кунстка́мера.
Թանձր ած. խիտ—густой.
Թաշկինակ գ.—носово́й плато́къ.
Թառամել չ. թօշնել—вя́нуть.
Թարախ գ. շարաւ—гной.
Թարթել ն. աչքը բանալ-փակել —мига́ть, кива́ть.
Թաւալել ն. գլորել—кати́ть, вертѣ́ть.
Թաւամազ ած. բրդոտ, մազոտ, —косма́тый, махна́тый.
Թաւիշ գ. մախմուր—ба́рхатъ.
Թաւոտ ած. թաւ, խիտ, թանձր —густо́й, пуши́стый, мохна́тый.
Թաւուտ գ.—дубра́ва, ча́ща.
Թափ գ.—напо́ръ, уси́ліе.
Թափանցել ն. ներս անցնել—проника́ть.
Թափանցիկ ած.—прозра́чный, проница́ющій.
Թափառել չ. շրջել—блужда́ть, скита́ться.
Թաքուն ած. ծածուկ—та́йный, секре́тный.
Թերթերունք գ. թերթերուկ —рѣсни́ца
Թեւաւորել ն. թեւ տալ—окрыля́ть.

Թեքընկնել—прислони́ться, приле́чь.
Թեքուել չէ. — склони́ться, опере́ться, свороти́ть.
Թէպէտ մ. թէև—хотя́.
Թիկունք գ. թև, կռնակ — плечо́, спина́.
Թմրութիւն գ. — онѣмѣ́ніе, дремо́та.
Թնդալ չ. մեծ ձայն հանել—гремѣ́ть, шумѣ́ть.
Թնդանօթ գ.—пу́шка.
Թշուառ ած. խեղճ, ողորմելի — несча́стный, жа́лкій
Թոթովել ն.—лепета́ть.
Թոնիր գ. վառարան—печь.
Թութ գ.—ту́товая я́года.
Թութակ գ.—попуга́й.
Թուխ ած. մութ գոյն—тёмный, сму́глый.
Թուխպ գ. մշուշ—тума́нъ, о́блако.
Թօթուել ն. թօթափել—стря́хивать; сбро́сить.
Թրթուր գ. որդ—гу́сеница.

Ժ. ժ.

Ժամասացութիւն գ. ժամերգութիւն—церко́вная слу́жба.
Ժամանում գ. прибы́тіе.
Ժանգոտել չ. ржавѣ́ть.
Ժանիք գ. գազանի ատամներ—клыки́.
Ժապաւէն գ. — ле́нта, обши́вка.
Ժառանգութիւն գ. — наслѣ́дство.
Ժայռ-ժէռ գ. ապառաժ — скала́.
Ժպիտ գ.—улы́бка.
Ժրաջան ած.—գործունեայ, աշխատասէր — дѣ́ятельный, трудолюби́вый.

Ի. ի.

Իմաստութիւն գ. — му́дрость.
Իմաստուն ած.—му́дрый.
Ինքնասիրութիւն գ.—самолю́біе.
Իշխանձուկ գ.—форе́ль.
Իշխանութիւն գ. — власть; кня́жество.
Իսպառ մ. բոլորովին, բնաւ—совсѣ́мъ.
Իրաւ մ. ստուգապէս—на само́мъ дѣлѣ.
Իրաւացի ած. արդարացի—справедли́вый, пра́вильный.
Իւրացնել ն. սեփականել—присво́ить, усво́ить.

Լ. լ.

Լաթ գ. չոր—тряпье́, ло́скутъ.
Լակոտ գ. շան ձագ—щено́къ.
Լայնածաւալ ած. լայնատարած, ընդարձակ—обши́рный.
Լայնատարած ած. ընդարձակ—широко́ раски́нутый, обши́рный.
Լանջ գ. կուրծք—грудь.
Լանջագեղ ած. գեղեցիկ կրծքով—съ краси́вой гру́дью
Լարել ն. լարը ձիգ քաշել—напряга́ть, натя́гивать (стру́ны).
Լափել ն. խժռել—жрать.
Լեղի գ.—желчь.
Լիճ գ.—о́зеро.
Լխպոր ած. փափլիկ—пу́хленькій.
Լոր գ. լորամարգ—перепе́лка.
Լուլայ գ. խողովակ—тру́бка, сосу́лька.
Լուծ գ.—ярмо́, и́го.
Լուսադէմին մ. լուսաբացին—на разсвѣ́тѣ.
Լուսամուտ գ. պատուհան—окно́.
Լուսաւորութիւն գ. просвѣще́ніе, освѣще́ніе.
Լուրջ ած. խելքը գլուխը, զգաստ—тре́звый, серье́зный.
Լրտեսել ն.—подсма́тривать, шпіо́нить.

Խ. խ.

Խաթէր համար—պատուի համար—изъ уваже́нія.
Խաթուն գ. տիկին—ба́рыня.
Խայծ-խայծ (կարմրել). տեղ-տեղ (կարմրել) мѣста́ми созрѣва́ть.
Խայտալ չ. ուրախ թռչկոտել—пры́гать отъ ра́дости, рѣзви́ться.
Խայտառակ ած. ամօթալի—посты́дный.
Խանձել ն. այրել—обжига́ть.
Խանում գ. խաթուն, տիկին—ба́рыня.
Խաչվառ գ.—хору́гвь.
Խարազան գ. մտրակ—бичъ, кнутъ.
Խարոյկ գ. косте́ръ.
Խափանել ն. արգելել, դադարեցնել—препя́тствовать, прекраща́ть.
Խենթ ած. խելառ, գիժ—шально́й.
Խեցեղէն ած. կաւեայ—гли́няный, черепи́тчатый.
Խէթ-խէթ, (նայել). ծուռ-ծուռ կասկածանքով նայել недовѣ́рчиво смотрѣ́ть, коси́ться.
Խթել ն. հրել, քթուշ տալ—толка́ть.
Խիզախ ած. համարձակ, վստահ—смѣ́лый, де́рзкій, увѣ́ренный.
Խիղճ գ. խղճմտանք—со́вѣсть.
Խիտ ած. թաւ, թանձր густо́й.

Խղճմտանք գ. խիղճ, ամօթ — со́вѣсть
Խճուղի գ. խիճով ծածկուած ճանապարհ — шоссе́.
Խնամատարութիւն գ. — попече́ніе, опе́ка.
Խնամի գ. — сва́тъ, сво́йственникъ.
Խնայել ն. մեղքանալ жалѣ́ть, щади́ть.
Խնդագին ած. ուրախագին — весе́лый, ра́достный.
Խնդութիւն գ. ուրախութիւն, ցնծութիւն — ра́дость.
Խնդրակ գ. մարդ որոնող, պատուիրակ — иска́тель, на́рочный.
Խնկարկել ն. խունկ ծխել — кади́ть, кури́ть ѳиміа́мъ
Խնկանուէր ած. души́стый, оку́ренный ладанемъ.
Խնկելի ած. պատուելի — обожа́емый, достопочте́нный.
Խնճոյք գ. կերուխում — пи́ршество.
Խնոցի գ. իւղ հարելու աման — посу́да, въ чемъ бьютъ ма́сло, маслобо́йня.
Խշխշալ չ. — шелести́ть.
Խոժոռել չ. մռութը կախել — нахму́риться, дѣ́латься угрю́мымъ.
Խոխոջալ չ. կարկաջել — журча́ть.
Խոհանոց գ — ку́хня.
Խողխողել ն. սպանել — убива́ть, умерщвля́ть.
Խոնարհ(ու)ել չ. զիջանել նուաստանալ — смиря́ться, преклони́ться, покоря́ться.
Խորհել ն. մտածել — ду́мать, размышля́ть.
Խորհրդակցել չ. — совѣща́ться, совѣ́товаться.
